

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՎԱՆԱՎԱՆՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՁԵՌԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



ԵՐԵՎԱՆ
2026



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ
ՎԱՆՈՐԷԻՑ ՏԵՍԶԻ
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
МАТЕНАДАРАН
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ
ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

АРПЕНИК КАЗАРОСЯН

ГАГИК Г. САРГСЯН

СЕВАНАВАНК
ИСТОРИЯ, РУКОПИСНОЕ И ЭПИГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
MATENADARAN
MESROP MASHTOTS RESEARCH INSTITUTE
OF ANCIENT MANUSCRIPTS

ARPENIK GHAZAROSYAN

GAGIK G. SARGSYAN

SEVANAVANK
HISTORY, MANUSCRIPT AND EPIGRAPHIC HERITAGE

ЕРЕВАН-YEREVAN
2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԵՎԱՆԱՎԱՆՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԶԵՌԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



ԵՐԵՎԱՆ
2026

Հրապարակվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի և Մաշտոցյան Մարենսդարանի
գիտական խորհուրդների որոշմամբ

Խմբագիր՝ պ. գ. դ. Արսեն Հարությունյան

ՀՏԴ 930.2:94(479.25):09
ԳՄԴ 63.211+63.3(5Հ)
Ղ 159

Ղազարոսյան Ա., Սարգսյան Գ.

Ղ 159 Սևանավանք. պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը,
խմբագիր՝ Ա. Հարությունյան, Երևան, Էդիթ Պրինտ, 2026, 144 էջ:

Աշխատությունն ամփոփում է Սևանավանքի պատմամշակութային ժառանգության ընդհանուր նկարագիրը, որտեղ առաջին անգամ քննության առարկա են դարձել վանքի գրավոր սկզբնաղբյուրները՝ ձեռագիր մատյաններն ու վիմական արձանագրությունները: Լուսաբանվում են վանք-անապատի հուշարձանների շինարարական փուլերը, նշանավոր Դանիել թաթուխապետի գործունեությունը, տեղի գրչության և մանրանկարչության արվեստը և այլն: 60 վիմագրերի բովանդակությունը պարզում է Սևանավանքում իրականացված շինարարական աշխատանքները, այցելու-ուխտավորների նվիրատվությունները, խաչքարագործ վարպետների անունները և այլն:

Նախատեսված է հայ միջնադարյան պատմության, աղբյուրագիտության ու արվեստի տեսության հարցերով զբաղվող ընթերցող լայն հասարակության համար:

Տպագրվում է մեկենասությամբ ՏԻԱՐ ՍՄՆԱՍԱՐ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ՝ ՍԵՎԱՆԱՎԱՆԻ
ՋՐՕՐՀՆՅԱՑ ԽԱՉԲԱՎՈՐԻ, Ի ՀԻՇԱՏԱԿ ՍԻՐԵԼԻ ՄԱՅՐԻԿԻ՝ ՍԵՂԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ:

ՀՏԴ 930.2:94(479.25):09
ԳՄԴ 63.211+63.3(5Հ)

ISBN 978-9939-40-188-1

© Ղազարոսյան Արփենիկ, 2026

© Սարգսյան Գագիկ, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

9 ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

11 ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

23 ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԵՎ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

25 ՄԱՇՏՈՑ ԵՂԻՎԱՐԴԵՑԻՆ ԵՎ ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ

28 ԴԱՆԻԵԼ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ «ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ»
ԵՎ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

31 ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ԺԷ-ԺԹ ԴԱՐԵՐԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՐԻՉՆԵՐԸ

35 ՍԵՎԱՆԻ ԱՆԱՊԱՏԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

38 ՅՈՒՑԱԿ ՍԵՎԱՆԱՎԱՆՔՈՒՄ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ ԵՎ ՆԿԱՐԱԶԱՐԴՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

40 ՅՈՒՑԱԿ ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

47 ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

49 ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱԽՈՒՄԲԸ

53 ՍԲ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

57 ՍԲ ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

59 ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ. ԽԱԶՔԱՐԵՐ, ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ

66 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ՊԱՀՊԱՆՎԵԼ

70 ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ

72 ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐՔ ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ

74 ՎԵՐՋԱԲԱՆ

77 PEZIO ME

79 SUMMARY

82 ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

87 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

132 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

134 ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

140 ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

143 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

«Ամենայն ազգ զիր հարց աւանդութիւն պինդ կալցի»
(Սբ Ներսէս Լամբրոնացի)

Հայոց հոգևոր և մշակութային ժառանգության մեջ կրոնական, ճարտարապետական և պատմական տեսանկյուններից Սևանավանքը, հայտնի նաև՝ «Մարիամաշեն» վանք անունով, միանգամայն ուրույն և անփոխարինելի նշանակություն ունի: Վանքի պատմությունն ընդհանուր պատկերացում է փոխանցում ոչ միայն միջնադարյան հայ վանական կյանքի մասին, այլև խորապես կապված լինելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի ներբերած եկեղեցական ավանդույթների հետ՝ սերտորեն առնչվում է Մաշտոց Ա Եղիվարդեցի կաթողիկոսի անվանն ու գործունեությանը:

Լուսավորիչ Սուրբ հայրապետի կողմից քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու ժամանակներից սկսած՝ Հայաստանում ձևավորվել է նաև հոգևոր-եկեղեցական կառուցվածքը, որի անբաժանելի մասն է նաև Սևանավանքը: Վանական համալիրի կենտրոնական եկեղեցիներից մեկը՝ Սուրբ Առաքելոցը, կառուցվել է ի պատիվ առաքյալների, ինչն ինքնին վկայությունն է մեզանում Առաքելական եկեղեցու հետ ունեցած կապի և գաղափարական շարունակության:

Հարկ է ընդգծել, որ քրիստոնեության ընդունումից հետո Սևանա կղզին ոչ միայն դուրս չի մնացել ծավալված ընդհանուր քրիստոնեական շարժումից, այլև հիշատակվում է թշնամուն դիմակայող անառիկ ամրոցների շարքում:

Անապատական կյանքի վերածնության պատմությունը, որը տեղի է ունեցել Բագրատունիների շրջանում՝ Սյունյաց իշխան Վասակ Գաբուռի կնոջ՝ Մարիամ իշխանուհու հովանավորությամբ, իրավամբ կապվում է «Սուրբ Առաքելոց» միաբանության առաջնորդ Մաշտոց վարդապետ Եղիվարդեցու անվան հետ: Այստեղ է, որ նա կարգավորեց Հայոց ծիսարանը, վերակենդանացրեց դպրոցը, որը հետագայում՝ Հայրապետական Աթոռը 1441 թ. Վաղարշապատում վերահաստատվելուց շուրջ տասը տարի անց, գործեց Դանիել Ռաբունապետի ուսուցման ավանդներով և փառավորվեց որպես «Արեւելեան տան վարդապետարան»՝ փոխարինելով Տաթևի «Արեւելեան տան համալսարանին»: Վանքում ձևավորվեց մատենադարան, ինչն այն վերածեց նաև գրչության կարևոր կենտրոնի՝ ներառյալ մինչև 19-րդ դարը: Մաշտոց Եղիվարդեցու մահից հետո էլ նրա անունը կապված մնաց Սևանավանքի հետ: Առայսօր նրա անունով հայտնի է Սևանի լեռնանցքների մոտ գտնվող «Մաշտոցներ» մատուռը՝ հնաբուժիչ աղբյուրով, որը հռչակված և սիրելի ուխտատեղի է:

Հայտնի է, որ տարբեր ժամանակաշրջաններում Սևանում ապաստանել ու գործել են բազմաթիվ նշանավոր գործիչներ՝ պատմագիր-կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին, Աշոտ Բ Երկաթ թագավորը, Հովակիմ սարկավազը, Եղիա վարդապետ Զալալյանցը, Հովակիմ վարդապետ Ղամբրյանցը, ինչպես նաև բազմաթիվ շնորհաշատ գրիչներ, ծաղկողներ, շինարարներ, խաչքարագործներ, որոնք իրենց հոգու դրոշմն են թողել այստեղ:

Սևանա անապատի հոգևոր-մշակութային վերելքը շարունակվել է նաև 17-19-րդ դարերում: 1869 թ. Սևանում վերաբացվել է դպրոց, որն իր գործունեությունը շարունակել է մինչև 1880 թ: Ելնելով պատմական իրողությունների տարափոխումից՝ 1901 թ. Խրիմյան Հայրիկի կոնդակով Սևանավանքն անապատից վերաժվել է աղոթատեղի:

Թեև հետագա դարերում աստիճանաբար Սևանա կղզին դարձել է թերակղզի, սակայն պահպանել է հոգևոր կենտրոնի իր երբեմնի կարևոր նշանակությունը: Շարունակելով իրագործել Մաշտոց կաթողիկոսի հաստատած կրթական ավանդույթը՝ տեղում մինչ օրս գործում է Վազգենյան դպրանոցը:

Սևանավանքը հայ հոգևոր մշակույթի այն գոհարներից է, որը դարեր շարունակ առանձնավորել է հայ քրիստոնեության հիմքը: Այն միջնադարյան Հայաստանի ամենահին ու տևականորեն գործած վանք-անապատներից է, որի մասին անդրադարձներ, հոդվածներ ու մենագրություններ են հեղինակել Սուրբ Էջմիածնի միաբաններ Զաքարիա վարդապետ Գուլասայան-Բեհրությանց Տփխիսեցին՝ «Վէպ ծովակին Գեղամայ եւ երջանիկ կղզւոյն եւ որոյ բնակչացն» (1825թ.), Մանվել վարդապետ Կյումյուշխանեցին՝ «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց» (1830թ.), ինչպես նաև՝ Սարգիս եպիսկոպոս Փիլոյանը, Գյուտ եպիսկոպոս Ղազարյանը, ազգագրագետ Երվանդ Լալայանը, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, Ղեւոնդ վարդապետ Ալիշանը, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը և այլք: Այսօր էլ, Սևանավանքը շարունակում է ապրել իբրև անցյալի լուսավոր հիշատակ, ներկայի հոգևոր կենտրոն և ապագայի առհավատջա:

Քաջահույս ենք, որ մեծագնիվ Տիկին Արփենիկ Ղազարոսյանի և հարգարժան Տիար Գագիկ Սարգսյանի աշխատասիրությամբ, ինչպես նաև Տիար Արսեն Հարությունյանի խմբագրությամբ «Սևանավանք. պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը» վերտառությամբ սույն գիրքը մեկ անգամ ևս ինքնահատուկ առիթ պիտի ընձեռի ընթերցողին բազմաճյուղ դիտանկյուններից առնչակցվելու վանքի պատմամշակութային ժառանգությունն ավանդած նվիրյալ հոգևորականաց ու նվիրատու հայորդիներին, հավատարիմ ուխտավորներին, նշանավոր գրիչներին ու երախտարժան խաչքարագործ վարպետներին, բոլոր նրանց, ովքեր անցյալի այս մարգարիտը պահպանել, խնամել ու հասցրել են մեզ:

Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք փոխանցում Սևանավանքի երկարամյա սպասավոր և վանահոր ժամանակավոր պաշտոնակատար Տեր Մինաս ավագ քահանա Մարտիրոսյանին՝ այս հրատարակության նախաձեռնության համար:

Գրքիս հրատարակությունը հովանավորելու և նշանակալի ձեռքբերման համար մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Սևանավանքի Զրօրհնյաց խաչքավոր Տիար Սանասար Բեգլարյանին:

Լիահույս ենք, որ Սևանավանքը բացահայտելու ճանապարհին սույն աշխատությունը ծառայելու է իր ուրույն ու բարձր նպատակին, այն է՝ «Հացից վեր կայ հոգու կեանքը, առանց որի մարդկային կեանք բացատրութիւնը դատարկ, անիմաստ խօսք պիտի լինէր, պարզապէս շրթնային արտայայտութիւն» (Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս):

Օրհնությամբ՝
Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ
Տեսուչ Վանորեից
Սբ. Սևանավանք

Ձ Ո Ն

ՆԿԻՐՎՈՒՄ Է ՄԵՎԼՆԼՎԼՔԻ ԲԼՁՍԼՄՅԱԼ ԴԼՏՄՈՒՈՅԸ
ՄԵՏ ՀԻՇԼՏԱԿԱԾ ՀՈԴԿՈՐ ԴԱԽՆ՝ ԼՈՒՏՆՈՐԴՆԵՐԻՆ,
ՎԼՆԼՀԵՅՐԵՐԻՆ ԵՎ ՎԼՆԱԿԱՆԵՐԻՆ, Ի ՀԻՇԼՏԱԿ ԵՎ
ՀԼՐԵՎՇԼՏՈՒՈՅՈՒՆ ՀԼՄԸՆ ՀԵՅՈՒՈՅԸ ՀՈԴԿՈՐ ԵՎ
ՄՇԿՈՒՈՒՅԻՆ ԼՐՔԵՆԵՐԸ ԴԼՀԴԼՈՐՆԵՐԻ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Միջնադարյան Հայաստանի հոգևոր և ուսումնագիտական առավել հայտնի կենտրոններից է Սևանի վանք-անապատը, որն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն: Թեև կղզում հաստատված վանական միաբանության կյանքն ու ավանդված գրավոր ժառանգությունը դեռևս ԺԹ դարասկզբից եղել են ուսումնասիրողների ուշադրության առանցքում, սակայն վանքի ունեցած նշանակալի դերը միջնադարի տարբեր շրջափուլերում ցայսօր ամբողջացված և համալիր լուսարանված չէր: Այս տեսանկյունից սույն ուսումնասիրությունն առաջինն է, որ տեղ մեկտեղվել և մասնագիտական քննության է դրվել երբեմնի փառահեղ վանք-անապատի «Առաքելոց» միաբանության գրավոր ժառանգությունը:

Սևանավանքի մշակութային ժառանգության պարկառելի մասն են վանքում գրված և տեղում պահված ձեռագիր մատյանները (150 միավոր), ինչպես նաև հուշարձանախմբի որմերին և կոթողներին՝ խաչքարերին և տապանաքարերին ամփոփված վեց տասնյակ վիմագրերը: Հայ միջնադարյան վանական համալիրների ուսումնասիրման ամենաարդյունավետ միջոցը, թերևս, հիշյալ երկու սկզբնաղբյուրների համընդհանուր, հաճախ միմյանց լրացնող և ինչու չէ՞ նաև ժխտող քննություն իրականացնելն է, որն այս դեպքում արվել է հնարավոր խորությամբ՝ դրանցով զբաղվող բուն մասնագետների կողմից: Աշխարհության հեղինակներն են Մաշտոցյան Մարենադարանի Ֆրչության կենտրոնների ուսումնասիրման բաժնի ավագ գիտաշխատող, ձեռագրագետ, պ.գ.թ. Արփենիկ Ղազարոսյանը և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրության բաժնի ավագ գիտաշխատող, վիմագրագետ, պ.գ.թ. Գագիկ Սարգսյանը: Աղբյուրագիտության բնագավառում փորձառու հետազոտողների մասնագիտական ուղղվածությունն ավելի քան պարզում է խնդրո առարկա աշխարհության համապարփակ լինելը, որը ներկայացված է բովանդակային առումով եռամաս գլխարաժանմամբ՝ նվիրված Սևանավանքի պատմությանը, գրչության կենտրոնին և ձեռագրական ժառանգությանը, այնուհետև՝ վիմական արձանագրություններին:

Առհասարակ, առանձին վանքերի պատմության ակադեմիական ուսումնասիրությունը սկսվել է դեռևս նախորդ դարի կեսերից՝ մեծանուն հնագետ-վիմագրագետ Կարո Ղաֆադարյանի աշխատասիրությամբ,

որի գրչին են պատկանում Հովհաննավանքի (1948թ.), Սանահինի (1957թ.), Հաղբարի (1963թ.) վանքերին, ինչպես նաև Երևանի միջնադարյան հուշարձաններին (1975թ.) նվիրված սրվարածավալ մենագրությունները: Նշված աշխատություններում համալիր կերպով ներկայացվել են հուշարձանների պատմաճարտարապետական նկարագիրն ու վիմագրական ժառանգությունը, մինչդեռ վերջին տարիներին հրատարակվող ուսումնասիրություններում մեծապես կարևորվում է նաև վանքն իբրև գրչության կենտրոն ներկայացնելն ու ձեռագրական ժառանգությունը լուսաբանելը (Խոր Վիրապ, Նորավանք, Երևանի Ս. Աստուհիա առաքյալի անապատ և այլն): Այս առումով, ընթերցողի դարին հանձնվող սույն ուսումնասիրությունը գալիս է ուղղակիորեն լրացնելու միջնադարյան վանքերն իբրև գրավոր ժառանգության կենտրոններ ներկայացնող հետազոտությունների շարքը, որտեղ իր մնայուն և ուրույն տեղն ունի նաև Սևանավանքն իր պատմամշակութային ժառանգությամբ:

Արսեն Հարությունյան

Պատմական գիտ. դոկտոր




ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Տեսեալ իմ աստանօր զտեղւոյս վայելչութիւն և սրբոց եկեղեցեաց զպայծառութիւն և զկրօնից բնակչացն զբարեկարգութիւն կամ եղև ինձ կոչել զսա՝ Երջանիկ կղզի, որ արդարև յաղագս զերազանն գեղայ պարունակողին և ի սմա պարունակողոցն»:

Զաքարիա վարդապետ Գուլասպեան Բեհբութեանց.
«Վէպ ծովակիրն Գեղամայ եւ երջանիկ
կղզւոյն Սեւանայ որոյ եւ բնակչացն»

(Մատենադարան, ձեռ, ՄՄ 8074, 50ա)



Սևանավանքի մասին պատմական առաջին տեղեկությունները վկայված են է դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի»¹, ինչպես նաև Թ-Ժ դարերի պատմագիր կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» աշխատություններում: Առանձնապես արժեքավոր են Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունները, որն ընդօրինակել և մեզ է փոխանցել Սևանավանքի միաբանության հիմնադիր Մաշտոց Եղիվարդեցի վարդապետի հասարակական-քաղաքական գործունեությանը վերաբերող երկու կարևոր տեղեկություն՝ 863 թ. Դվինի երկրաշարժից հետո նրա գրած նշանավոր թուղթը և Եղիվարդեցի վարդապետի ու Աբաս Բագրատունի իշխանի միջև թղթակցության մանրամասները²:

Հետագայում հայ մատենագիրներից Ստեփանոս Ասողիկը և Կիրակոս Գանձակեցին իրենց երկերում անդրադարձել են Սևանավանքի պատմությանը՝ լրացնելով այն ժամանակի նոր վկայություններով³: Պատմական հարուստ նյութ է ամբարված նաև Սյունյաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի նշանավոր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության էջերում, որտեղ պատմագիրը ներկայացրել է Մաշտոց Եղիվարդեցու կենսագրության և Սևանավանքում

նրա գործունեության մասին որոշ մանրամասներ, ինչպես նաև՝ տեղեկություններ կղզում եկեղեցիների կառուցման մասին⁴:

Սևանավանքի մասին կարևոր ուսումնասիրություն է համարվում Սբ Էջմիածնի միաբան Զաքարիա վարդապետ Գուլասպյան-Բեհ-բությանց Տպխիսեցուն՝ 1825 թ. Սևանավանքում գրած «Վէպ ծովակին Գեղամայ և երջանիկ կղզույն և որոյ բնակչացն» անտիպ գործը: Սևանավանքին նվիրված այս աշխատության մեջ առաջին անգամ շարադրվել է կղզու բազմադարյա պատմությունը: «Վէպ»-ում հարուստ նյութ կա Սևանա կղզու աշխարհագրական դիրքի, բնության, լճի հարստության, ինչպես նաև վանական կյանքի վերաբերյալ: Աշխատանքն ունի համառոտ և ընդարձակ խմբագրություն⁵:

1871 թ. Սբ Էջմիածնում հրատարակվել է Մանուել վարդապետ Կյումուշխանեցուն՝ Սևանավանքում՝ 1830 թ. գրված «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց» երկը, որը սկզբնաղբյուրային արժեք ունի վանք-անապատի պատմության ուսումնասիրման համար⁶:

Սևանավանքի պատմությունն ավելի ամբողջական է ներկայացվել վանքի առաջնորդ Սարգիս Փիլոյանի հոգևածաշարում («Հովիւ» շաբաթաթերթի 1906 թ. համարներում)⁷, որտեղ հեղինակը պատմական դեպքերի շա-

¹ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 318 (այսուհետ՝ Կաղանկատուացի):

² Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցու Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 148–158, 162, 163–166 (այսուհետ՝ Դրասխանակերտցի):

³ Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 181, 182, 258, 259, 285 (այսուհետ՝ Ասողիկ): Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 67, 81, 172 (այսուհետ՝ Գանձակեցի):

⁴ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 243 (այսուհետ՝ Օրբելեան):

⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ) ձեռ. 8074, 10482, 10655, հմմտ.՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան (այսուհետ՝ ԿԴ), թղթ. 44, վավ. 355:

⁶ Մանուէլ վրդ. Կիւմիւշխանեցի, Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց, Վաղարշապատ, 1870 (այսուհետ՝ Կիւմիւշխանեցի), հմմտ.՝ ՄՄ 7554:

⁷ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], «Հովիւ», Թիֆլիս, 1906:

րադրանքը հասցնում է մինչև իր վանահայրության ժամանակաշրջանը՝ 1895 թվականը:

«Հանդէս ամսօրեայ»-ի 1928-1929 թթ. համարներում տեղ է գտել «Սևանայ վանքը» խորագրով Դյուլտ եպիսկոպոս Ղազարյանի արժեքավոր հոդվածաշարը: Սկսելով Գրիգոր Լուսավորչի կողմից Սբ Հարություն և Սբ Կարապետ ընծայարանների հիմնադրումից՝ հեղինակը կղզում ճգնական կյանքի մանրամասների շարադրանքը հասցնում է մինչև Ի դարը: Աշխատանքը կարևոր աղբյուր է ոչ միայն Սևանի, այլև Հայաստանի այլ անապատների կյանքի ուսումնասիրման համար⁸:

1895 թ. Վաղարշապատում հրատարակվել է Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի տեղագրական կոթողային աշխատությունը, ուր մանրամասն տեղեկություններ կան ԺԹ դարի 60-ական թթ. կղզու միաբանական կյանքի մասին⁹:

Սևանավանքի պատմությունը պատշաճ ուշադրության է արժանացրել Ղևոնդ Ալիշանն իր՝ «Սիսական» մենագրության մեջ¹⁰: Արժեքավոր տեղեկություններ կան նաև Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի¹¹ և ազգագրագետ Երվանդ Լալայանի՝ Սևանավանքին վերաբերող աշխատություններում¹²:

Բնականաբար, Սևանավանքի գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրության համար կարևորագույն սկզբնաղբյուրներ են վանքում գրված ձեռագրերն ու դրանց հիշատակարանային տվյալները: Յավոք, Սևանավանքի գրչակենտրոնում ստեղծված ձեռագրական ժառանգությունից մեզ շատ բան չի հասել: Այս հանգամանքից ժա-

մանակին դժգոհել է նաև Մանուել վարդապետ Կյումուշխանեցին՝ Սևանի անապատի պատմությունը շարադրելիս. «Նոյնպես Դանիէլի և Ներսէսի պատմութեանցն ոչ պատահեցայ: Ամենախոնարհաբար խնդրեմ՝ զի գտանող հարք կամ եղբարք զպակասութիւն մեր լցուցեն, որպէս և ի սկզբան սոյն գրուածոյս խնդրեալ եմ»¹³:

Ըստ ավանդության՝ Սևանա կղզին բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Կղզում եղել է մեհյան, որը պարսպապատ է եղել: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հաստատելու առաջին տարիներից սկսվում է կղզու քրիստոնեական ժամանակների պատմությունը: Ըստ ավանդության՝ Սբ Գրիգոր Լուսավորիչը, ունենալով Տրդատ թագավորի հովանավորությունը, քանդել է կղզու հեթանոսական տաճարը, որի տեղում 305 թ. կառուցել է Սբ Հարություն և Սբ Կարապետի վկայարաններն ու կատարել դրանց նավակատիքը՝ իր քարոզն ավարտելով այսպես. «Տէր իմ Յիսուս, զՔեզ աղաչեմ բնակիլ ի սմա Քոյով զօրութեամբ եւ տացես ամենայն շնորհս սրբոյ տաճարին մեծի՝ աշխարհաբարոզ Քոյոյ Յարութեան, որ յԵրուսաղէմ: Եւ եթէ ոք յիմ ազգէ ոչ լիցի կարօղ երթալ ի Սբ քաղաքն Երուսաղէմ, յաղագս հեռաւորութեան, գալով եկեսցէ ի Սբ վանն երիցս անգամ և համարեսցի ըստ անդր գնացեալ մահտեսիս, ուր հաստատուի ընդունելի մաղթանք երեքերանեան Հօրն մերոյ՝ երկնաւոր ձայնիւ»¹⁴: Այսինքն՝ Լուսավորիչը սահմանել է, որ եթե Երուսաղեմ՝ Տիրոջ գերեզմանին այցելության գնալու հնարավորություն չունեցող հայ հավատավորը երեք անգամ Սբ Հարության տաճար այցելության գա, նույնպես կհամարվի մահտեսի¹⁵: Ավանդությունն ասում է նաև, որ նավակատիքից հետո Սբ Գրիգոր Լուսավորիչը վկայարանում թողել է Կեսարիայից իր հետ բերած սպասավորներին¹⁶:

⁸ Գիտ եպս. [Ղազարեան], Սեանայ վանքը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1928, 1929:

⁹ Մեսրոպ արք. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարո գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895 (այսուհետ՝ Սմբատեանց):

¹⁰ Ղ. Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:

¹¹ Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխ.՝ Ա. Տեր-Ստեփանյանի, Սբ Էջմիածին, 2014, էջ 346-361 (այսուհետ՝ Շահխաթունեանց):

¹² Ե. Լալայեան, Սևան, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1908, N 1, էջ 83-85. նույնի՝ Նոր-Բայազէտ գաւառ կամ Գեղարքունիք, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1908, N 2, էջ 116-156:

¹³ Կիւմուշխանեցի, էջ 46, 65:

¹⁴ Վիպասանութիւն արարեալ ի Զաքարիա վարդապետէ Տփիսխեցոյ (այսուհետ՝ Զաքարիա վրդ. Տփիսխեցի, Վիպասանութիւն) - ՄՄ 10655, էջ 53բ:

¹⁵ Ա. Ղազարոսյան, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, «Էջմիածին», 1991, Ա-Գ, էջ 109:

¹⁶ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], էջ 132:

Հավանելով տեղի լուսավորչի և առանձնությունը՝ Լուսավորչին ասել է. «Սա է վան», այսինքն՝ վանքի համար տեղ: Տարիների ընթացքում այս խոսքերը հնչյունափոխվել են և դարձել Սևան: Այստեղից էլ կղզու անվան ծագումը: Սակայն Մենուա I-ի Ուրմիա լճի մոտ թողած սեպագիր արձանագրության մեջ հանդիպում ենք Կուանե բնակավայրի անվան: Ուրարտագետ Հովհաննես Կարազյոզյանն իր «Սեպագիր տեղանուններ» գրքում այդ բնակավայրի անվան հետ է կապում Սևանա լճի անվանումը՝ Կուանե, Կուան, Կեյան, Կեան, Սեան¹⁷: Գրքի մեկ այլ մասում հեղինակը տեսականորեն բացատրում է Սևան լճանունից նահանգի անվան առաջացումը՝ Սևան, Սևանիք, Սևնիք, Սյունիք, Սյունիքից էլ՝ Սիւնի տոհմանունը¹⁸:

Դ դարում Հայաստանում Լուսավորչի տոհմից սերված Ներսես Մեծը հիմնում է վանքեր, հաստատում վանական միաբանություններ և անապատներ: Միաբանություն և անապատ է հիմնվում նաև Սևանա կղզում: Սևանի անապատը եղել է Հայաստանի ամենահին միաբանությունը, այն գոյատևել է մինչև Ի դարի 30-ական թվականները:

Սևանա կղզու մասին պատմական առաջին տեղեկությունները վերաբերում են Հայաստանի արաբական տիրապետության ժամանակաշրջանին: Է դարի վերջի և Ը դարի սկզբի արաբական արշավանքներից մեկի ժամանակ, երբ գրավված էին անգամ Սյունիքի որոշ շրջաններ, այդ նահանգի Գեղարքունիք գավառի մեջ մտնող Սևանա կղզին երեք տարի դիմադրել է թշնամուն. «Ի հարիւր քառասուն և հինգ թուականութեան Հայոց (696) եկն Մահմէտն երկրորդ ի Հայք... Եւ դարձաւ Մահմէտն ի Չորայ, գայ պաշարէ զՍևան ծովապատն բերդ ամս Գ (3)»¹⁹: Մահմեդը միայն 702 թ. է կարողանում գրավել այն: Նույնպիսի դիմադրության է արժանանում նաև Մրուան ուստիկանը, երկու տարի պաշարման մեջ պահելով կղզին՝ 750 թ. մեծ դժվարությամբ գրա-

վում է այն և սրի քաշում միաբաններին ու հարակից գյուղերի բնակիչներին²⁰:

Թ-Ժ դարերում, Հայաստանի համար համեմատաբար խաղաղ պայմաններում, վանքեր են կառուցվում նաև Գեղամա երկրում: Այդ են վկայում ինչպես վանական համալիրների վիմական արձանագրությունները (Մաքենիսի, Կոթավանքի, Սևանավանքի և այլն)²¹, այնպես էլ՝ մատենագրական վկայություններն ու ձեռագիր հիշատակարանները:

Թ դարի սկզբին Սևանավանքում իր գործունեությունն է սկսում Մաշտոց եղիվարդեցին՝ զգալիորեն աշխուժացնելով անապատական կյանքը:

922 թ. արաբ զորավար Նսրի նախաձեռնությամբ արաբական զորքը մտնում է Հայաստան: Նորից ամայանում են հայկական գյուղերն ու քաղաքները, փակվում եկեղեցիներն ու մենաստանները, ի թիվս դրանց՝ նաև Սևանա կղզու անապատը. «...ի միանձնացելոցն կուսակրօնից միայնարանս, որ ի Սևան կղզւոյ՝ ունայնացեալ ի բոլոր ստացուածոց, ասնոց և անասնոց, և միայն զփրկութիւն անձանց հոգացեալ»²²:

Արաբները շուտով Հայաստան են ուղարկում Բեշիր զորավարին, որը 925 թ. բանակ է դնում Ցամաքաբերդ գյուղի մոտակայքում՝ նպատակ ունենալով վերջնական պարտության մատնել իր 70 քաջերով Սևանա կղզում ամրացած Աշոտ Երկաթին: Սակայն հայոց արքան հանկածակի հարձակվում և պարտության է մատնում արաբ զորավարի մեծաքանակ բանակին²³:

Ժ դարի պատմական կարևոր իրադարձություններից մեկն էլ այն էր, որ Անիում գումարված եկեղեցական ժողովում հայ հոգևոր այրերն ու իշխանները Ստեփանոս վանական Սևանցուն քաղկեդոնական Վահան Սյունի կա-

¹⁷ **3. Կարագեղոզեան**, Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում), Երևան, 1998, էջ 102:

¹⁸ Նույն տեղում, էջ 188:

¹⁹ **Կաղանկատուացի**, էջ 318:

²⁰ **Դրասխանակերտցի**, էջ 93–94:

²¹ Դիվան հայ վիմագրության (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց՝ **Ս. Քարխուդարյան**, Երևան, 1973, էջ 290, 121: **Ա. Ղազարոսյան**, Սևանա կղզու եկեղեցիները, «Լրաբեր» հաս. գիտ., 1990, N 1, էջ 52:

²² **Դրասխանակերտցի**, էջ 335:

²³ Նույն տեղում, էջ 356:

թողիկոսի փոխարեն նստեցրին կաթողիկոսական աթոռին²⁴:

Այդ ժամանակ Սեանի միաբանությունում էր հաստատվել Սարգիս ճգնազգյացը, որը մանուկ հասակից նվիրված էր հոգևոր կյանքին: Աղբյուրների վկայությամբ, շուտով Սարգսի և Գրիգոր Մագիստրոսի միջև նամակագրություն է սկսվում, և վերջինս Սարգսին հրավիրում է Անի՝ մանկահասակ Գագիկ թագավորի հետ «գրականությամբ զբաղվելու»²⁵: Շատ չանցած, Սարգիս ճգնազգյացը Գագիկ արքայից ստանում է սկզբում Շողագա վանքի, հետագայում Սեանավանքի առաջնորդությունը, իսկ 992 թ. դառնում Հայոց կաթողիկոս: Նրա հրամանով է, որ Ստեփանոս Տարոնացին՝ Ասողիկը, 1004 թ. գրում է իր «Տիեզերական պատմությունը»²⁶:

1200 թ. Սբ Աստվածածին եկեղեցում աղոթելու համար Սեանավանք է այցելում Մխիթար Գոշը, որի մասին վկայված է վերջինիս «Վարք»-ում²⁷:

Սեանավանքի սպասավորների վանական և հոգևոր-մշակութային գործունեությունը շարունակվում է նաև ԺԳ դարում: Մեզ հասած աղբյուրներում հիշվում է Սարգիս մենակյացի անունը, որը մասնակցել է Լոռեի (1205 թ.) և Անիի (1207 թ.) եկեղեցական ժողովներին²⁸: Այդ ժամանակ է տեղի ունեցել թուրք-սելջուկների հերթական հարձակումը Սեանավանքի վրա: Վանքում ապաստան գտած միաբաններն ու լճափնյա բնակչությունը միայն պատահականության շնորհիվ են փրկվել գերեվարումից²⁹:

Պատմական նյութի պակասի պատճառով անհայտության մեջ է մնում Սեանավանքի հետագա երկու դարերի պատմությունը:

Լենկ Թեմուրի որդի Խորասանի և Իրանի տիրակալ Շահուլիսի երրորդ՝ 1435 թ. ավերիչ արշավանքից հետո դադարում է գործել Տաթևի համալսարանը, որն առանց այն էլ 1425 թվականից հետո կորցրել էր իր երբեմնի նշանակությունը և վերածվել վարդապետարանի: Միաբանների մի մասը, աշակերտների հետ, հաստատվում է Սանահինում³⁰: Նրանց ղեկավարում էր Շմավոն րաբունին, որն այստեղ ապաստան գտնելու երրորդ տարում ընդօրինակում է մի Շարակնոց և նվիրում իր աշակերտ Դանիել դպիրին: Վերջինս որոշ ժամանակ անց դառնում է Սեանավանքի վարդապետարանի րաբունապետ, որի ուսուցչապետության տարիներին Սեանավանքում է հաստատվում Արևելյան Հայաստանի վարդապետարանը, որը հայտնի էր նաև «Արևելեան տան վարդապետարան» անունով: Այն իր գործունեությունը շարունակում է մինչ ԺԶ դարի սկիզբը³¹:

ԺԵ դարասկզբին սկսվում է շահ Աբասի արշավանքը Հայաստան, որն ուղեկցվում է հայոց մեծ տեղահանությամբ, ամայանում են քաղաքներ և շենքեր, ավերվում վանքեր ու եկեղեցիներ, փակվում միաբանություններ: Այս դեպքերին ականատես Առաքել Դավրիժեցի պատմագիրը գրում է. «Իսկ եկեղեցիք և վանքօրայք, ամենեքեան անշուք և անպատիւք, բնաւին կողոպտեալք ի զարդուց և ի սպասուց... Բազմաժամանակեայ փակեալ դրամբք խաւար և անլոյս, լռեալ ի պաշտամանց և ի պատարագաց, աւերեալ և խախտեալ շինուածք նոցա, տանիք և որմունք, իբրև զանտէր... օտարացեալ... և անմխիթար...»³²: Դատարկված վանքերում իսպառ

²⁴ Ասողիկ, էջ 181–182:

²⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 6–69:

²⁶ Ասողիկ, էջ 258–259, 285:

²⁷ Մխիթար Գոշի «Վարքը» մասնակի կրճատումներով տպագրել է Մեսրոպ արք. Սմբատյանցը՝ «Մեհեկի Ե. եւ Փետրվարի ԺԱ. Վարք եւ պատմութիւն Գոշին Մխիթարայ» (Սմբատեանց, էջ 380–386): «Վարքը» ԺԺ դարում ընդօրինակվել և պահվել է Սեանավանքում (ՄՄ 8147), իսկ վերջերս այն, իբրև հավելված, իր ուսումնասիրության վերջում հրատարակել է ձեռագրագետ Թ. Մինասյանը (տե՛ս Թ. Մինասյան, Ուտիքի գրչության կենտրոնները, Երևան, 2020, 196–205):

²⁸ Գանձակեցի, էջ 172:

²⁹ Կիւմիշխանեցի, Պատմութիւն անցից, էջ 33–37:

Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սեանայ վանքի պատմութիւնը], էջ 197:

³⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԵ դար, մասն առաջին (1401–1450թթ.), կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955 էջ 470 (այսուհետ՝ ԺԵ դարի հիշ./Ա). հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Դանիել րաբունապետը և Սեանի դպրոցը, «Պատմաբանասիրական հանդես», 1986, N 3, էջ 120:

³¹ Ա. Ղազարոսյան, Դանիել րաբունապետը և Սեանի դպրոցը, էջ 99–107:

³² Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ.՝

մոռացության էր տրվել դպրությունը, մշակութային կյանքը. «Ոչ բնաւ ընթեռնուին գիրս, այլ էին փակեալ և լռեալ մատենաք աստուածայինք... վասն զի ոչ գիրս գիտէին և ոչ էլ զօրութիւնս գրոց...»³³:

Հայոց անապատական կյանքի վերածնունդը սկսվում է ավերածությունից ամենից քիչ տուժած Սյունյաց աշխարհում՝ Տաթևի Հարանց անապատում: Այստեղ ժէ դարի սկզբին Սարգիս եպիսկոպոս Սաղմոսավանցին և Կիրակոս քահանա Պոնտացին հիմնեցին աղոթասեր կրոնակիցների և աշխարհականների միաբանություն՝ սահմանելով համակեցության 7 կանոն³⁴: Հարանց անապատ էին գալիս Հայաստան աշխարհի բոլոր կողմերից: Սբ էջմիածնից անապատ է գալիս նաև Կարապետ եպիսկոպոս էջմիածնեցին: Անապատի հիմնադիրների մահվանից որոշ ժամանակ անց նա գալիս է Սևանի անապատ՝ միաբանների կյանք մտցնելով Սարգիս եպիսկոպոսի սահմանած համակեցության կանոններն ու բարեփոխումները՝ պահպանելով նաև Սևանի անապատի հիմնադրման ժամանակից անապատականների համար սահմանված Բարսեղ Կեսարացու կանոնները:

Սակայն վանականները միայն ճգնական կյանքով չէին ապրում, նրանք ձգտում էին լավ ուսում ստանալ. «...յատկապէս արտաքին գիտութիւնները սովորելով, այն է՝ օտարազգի հեղինակների գրուածները կարդալով,

թարգմանելով եւ նրանց հետեւողութեամբ նորերը կազմելով: Փիլիսոփայական գիտութիւնը՝ տրամաբանութիւն, քերականութիւն, տօմարագիտութիւն յատկապէս ուշադրութեան են առնում եւ հայ միտքը ընդլայնում: ...հոգու ազնուացման իւրահատուկ ուղին բռնելով երբեք չեն քաշուում, արտաքին գիտութիւնների, փիլիսոփայութեան այլ եւ այլ ճիւղերի ծանօթանալուց, սովորելուց»³⁵: Դրանք դառնում էին նաև վարդապետարանների ուսուցման հիմնարար գիտությունները՝ իրենց ծրագրային դասավանդմամբ:

Սևանավանքի վարդապետարանում վերականգնվում են Մաշտոց Եղիվարդեցի վարդապետի և Դանիել րաբունապետի ուսուցման ավանդույթները, այն նոր կյանք է ստանում, իսկ մատենադարանը համալրվում է նոր ձեռագրերով: Կարապետ եպիսկոպոսի սաները՝ Մխիթար եպիսկոպոսը և Բարսեղ վարդապետը, շարունակում են իրենց ուսուցչի գործը:

Պարսկական տիրապետության տարիներին Հայաստանի շատ վանքեր զրկվել էին վանքապատկան հողերից և ծանր վիճակում գտնվող հայ բնակչության օժանդակությունից: Սևանավանքի միաբանությունն իր գոյությունը պահպանում էր Հայաստանում և Վրաստանի հայաբնակ վայրերում հանգանակած միջոցների հաշվին³⁶:

Ժէ դարի 50-ական թվականներին՝ Մխիթար եպիսկոպոսի վանահայրության ժամանակ, Սևանավանք ուխտի եկած թիֆլիսեցի Սուլխան, Զալ, Զոհրապ Զիթաղյան եղբայրները, տեսնելով Սևանավանքի եկեղեցիների անմխիթար վիճակը՝ իրենց միջոցներով 1654-1664 թթ. ընթացքում վերականգնում են Սևանավանքի եկեղեցիները, իսկ խոշա Բեյբուլթ իշխանը հինգ կրպակ է նվիրում միաբանությանը³⁷:

Լ.Խանլարյանի, Երևան, 1990, էջ 242 (այսուհետ՝ Դարիժեցի). հմմտ.՝ Ա.Ղազարոսյան, Սևանի անապատը Ժէ-ԺԹ դարերում, «Էջմիածին», 1997, Ժ, էջ 123-127:

³³ Դարիժեցի, էջ 242:

³⁴ Նույն տեղում, էջ 219-221: Այդ կանոններն էին. 1. Հնազանդ լինել առաջնորդին: 2. Ամեն գիշեր խոստովանություն անել: 3. Ամեն ինչ չուտել, խնամք տաձել առաջին հերթին Աստուծո, ապա առաջնորդի նկատմամբ: 4. Պաս պահել բացի շաբաթ, կիրակի և Տերունական օրերից: 5. Օրը մեկ անգամ ճաշել՝ հավասար բաժանելով կերակուրը մեծի և փոքրի միջև, անպայման ճաշասեղանի շուրջ համապատասխան աղոթք ասելուց հետո միայն: 6. Ամեն շաբաթ և տերունական օրերը հսկմամբ անցկացնել և երեկոյան անխափան պատարագ մատուցել: 7. Կոչնակի ազդից հետո բոլորը միաբան՝ եկեղեցի գնան լույթայմբ և խոնարհությամբ (հմմտ.՝ Կիմիւշխանեցի, էջ 50-51): Ա.Ղազարոսյան, Սևանի անապատը Ժէ-ԺԹ դարերում, «Էջմիածին», 1997, Ժ, էջ 123-124:

³⁵ Գիւտ եպս. [Ղազարեան], Սեւանայ վանքը, «Հանդէս ամսօրեայ», 1928, N 1-2, սին 60:

³⁶ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], էջ 619: Ա.Ղազարոսյան, Սևանի անապատը Ժէ-ԺԹ դարերում, էջ 124:

³⁷ Կիմիւշխանեցի, էջ 107-108: Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], էջ 474: Ա.Ղազարոսյան, Սևանի անապատը Ժէ-ԺԹ դարերում, էջ 124:

Հստ մի ձեռագրի վկայությամբ՝ 1669 թվականին Սևանավանքի առաջնորդն էր Անդրեաս վարդապետը³⁸, իսկ 1690 թվականից նորից առաջնորդ է դառնում Մխիթար եպիսկոպոսը:

1692 թվականից սկսած, շուրջ երկու տարի, Սևանա կղզում կրոնավորում էր Սեբաստիայից եկած Մխիթարը (ապագա Մխիթար Սեբաստացին), որը եկել էր ուսանելու և հետագայում Հայաստանում լուսավորություն տարածելու նպատակով³⁹:

1740 թ. Սևանավանքի առաջնորդն էր Մարտիրոս եպիսկոպոս Չերքերյանցը: Այս վանահորից սկսած առաջնորդները հաջորդում են միմյանց առանց ընդհատումների:

Հովհաննես վարդապետ Նորատուցուն վանահայրության ժամանակ՝ 1748 թ., Երևանի պարսիկ խանի հրամանով Ղազար Ջահկեցի կաթողիկոսն աքսորվում է Սևանա կղզի: Վերջինիս փոխարեն կաթողիկոս է օծվում Քյուլթյուր կոչվող Պետրոս եպիսկոպոսը: Սակայն աքսորը կարճ է տևում: Ղազար վեհափառը վերադառնում է Սբ Էջմիածին և նորակոչ կաթողիկոսին աքսորում Ջահուկ⁴⁰:

Նազիր շահի սպանությունից հետո պարսից զահին տիրելու համար դաժան պայքար է

սկսվում պարսիկների ու աֆղանների միջև: Ընդհարումները տեղափոխվում են Հայաստան, և Ազատ աֆղան խանն իր 10 հազարանոց զորքով ավերում ու կողոպտում է մեր երկիրը: 1751 թ. աֆղան Ազատ խանի արշավանքի ժամանակ թշնամու զորքերը հասնում են Սևանա լիճ: Ափամերձ բնակչությունը պատսպարվում է Սևանա կղզում. «Իբրև յամրոցի անմատոյց... յորս էին ոմանց յերևելաց, որպէս Մելիք Սարգիսջանն Գեղարքունույ Սլավերդի իւզբաշին, այսինքն՝ հայր Գաբրիէլ իւզբաշուն, ուր և Գաբրիէլն էր մանուկ հասակաւ յայնժամ, շուրջ զամաւ Փրկչին 1755»⁴¹:

Կղզում հավաքված մարդիկ Սբ Ծննդյան տոների նախօրեին՝ պատարագի ժամանակ, տեսնում են, որ սառած ջրերի վրայով թշնամիները դանդաղ մոտենում են կղզուն: Խուճապահար ժողովուրդն օգնություն է հայցում Հովհաննես վարդապետից և խնդրում. «տալ ինքեանց հրաման փախչելոյ ի վերայ սառին...»⁴²: Վարդապետը, սակայն, հանգստացնում է հավաքվածներին և սառնասրտորեն շարունակում պատարագը: Թշնամին դանդաղ մոտենում է կղզուն: Հանկարծ սառույցը կտրվում է, և միայն հատուկենտ զինվորների է հաջողվում փրկվել. «Զսոյն ճշմարիտ պատմութիւնս ասաց ինձ Նիկողոս անուն ոմն քանակեոցի հարիւրամեան, որ տակաւին կենդանի է», — հավաստում է Զաքարիա Գուլասպյանը⁴³:

Հովհաննես Նորատուցուն հաջորդում են եպիսկոպոսներ և վարդապետներ, որոնց միայն անուններն են հիշատակված⁴⁴:

³⁸ V.N.Nersessian, A catalogue of the Armenian manuscripts in the British Library acquired since the year 1913 and of collections in other libraries in the United Kingdom, vol. one, The British Library, London, 2012, pp. 285–291, N 46.

³⁹ Մեզ է հասել մի ավանդություն, ըստ որի՝ Սևանի անապատ այցելած 16-ամյա Մխիթարի տեսողությունը վատանում է: Նա Սբ Աստվածածին եկեղեցում աղերսագին աղոթում է՝ Տիրամորից հայցելով վերականգնել իր տեսողությունը: Աստվածածինը խոստանում է օգնել պատանուն: Մխիթարի տեսողությունը վերականգնվում է: Որոշ ժամանակ անց Սբ Աստվածածին եկեղեցում դրվում է Տիրամոր նկարը, որը 1896 թ. Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի հրամանով Սևանից տեղափոխվում է Սբ Էջմիածնի Վեհարանի նորաբաց թանգարան, ապա՝ Երևանի պետական պատկերասրահ: Այսօր Սևանավանքի Սբ Առաքելոց եկեղեցում գտնվող Տիրամոր պատկերն արված է 1801 թ. Բիժանի որդի Ավանեսի պատվերով, Սևան՝ Մխիթարի այցելությունից 109 տարի հետո (Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմութիւնը], էջ 475: Ղազարոսյան Ա., Սևանի անապատը ԺԷ–ԺԹ դարերում, էջ 124–125):

⁴⁰ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմութիւնը], էջ 618:

⁴¹ ՄՄ 10655, էջ 58բ: Մ. Կյումուշխանեցին Ազատ խանի արշավանքի տարեթիվ է նշում 1747 թ. (Կիւմիւշխանեցի, էջ 60. հմմտ.՝ Ղազարոսյան Ա., Սևանի անապատը ԺԷ–ԺԹ դարերում, էջ, 125): Ի դեպ, Գաբրիէլ յուզբաշին հետագայում դարձել է Երևանի Զորավոր Սբ Աստվածածին եկեղեցու նորոգման աշխատանքների մեկենասը, իսկ վախճանից հետո ամփոփվել է եկեղեցու հարավային մուտքի դիմաց (Ա. Հարությունյան, Երևանի Սբ Անանիա առաքյալի անապատը կամ Զորավոր Սբ Աստվածածին եկեղեցին, Երևան, 2020, էջ 185, արձ. 12):

⁴² ՄՄ 10655, էջ 59ա:

⁴³ ՄՄ 10655, էջ 59ա. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Սևանի անապատը ԺԷ–ԺԹ դարերում, էջ 125:

⁴⁴ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմութիւնը], էջ 619:

1825 թ., «Իբրև խաղաղ նաւահանգիստ», Սևանա կղզի է գալիս Զաքարիա եպիսկոպոս Բեհբուխյան Տփլիսեցին: Մի քանի տարի անց, 1828 թ. Սևանի առաջնորդ ընտրվելու կապակցությամբ, Սբ Էջմիածնից միաբանություն է աչցելում Մանուել եպիսկոպոս Կյուսուկյանցին:

Հովհաննես Ղազարեցու վանահայրության ժամանակ՝ 1828–1829 թթ. ռուս-պարսկական, 1829 թ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, Գեղարքունիքում բնակություն են հաստատում հայեր Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից. «...հեղան զհեղան ազգք մեր ի գանազան կողմանց և ի գաւառաց օտար տէրութեանց..., յորոց ի վիճակեալ գիւղօրայքն Սէվան եղեց բազմամարդ մերազն բնակչօք, և ամենեքեան ջերմեռանդ յօժարութեամբ արդիւնատուք են սրբոյ անապատիս»⁴⁵:

Շաքիից վերաբնակեցված հայության միջոցներով նորոգվում է կղզու Սբ Աստվածածին եկեղեցու տանիքը: Այդ մասին արձանագրություն է եղել եկեղեցու արևմտյան դռան աջ կողմում: 1836 թ. միաբանների կենցաղային պայմանների բարելավման նպատակով, Թիֆլիսահայերի դրամական օգնությամբ, կառուցվում են խցեր: Միաբաններից մեկի՝ Ստեփանոս Լիմեցու մահից հետո, նրա կտակով նախատեսված միջոցներով, 1836 թ. հիմնովին նորոգվում է Սբ Աստվածածին եկեղեցու գավիթը, կառուցվում են այլ շինություններ (մառան, օդա)⁴⁶:

Հովհաննես Ղազարեցու վանահայրության տարիներին Սևանի անապատը դեռևս առանձին թեմ էր՝ Գեղարքունիքի գավառի 24 գյուղերով, բայց Նիկոլայ 1-ինի 1836 թ. մարտի 11-ի «Պոլոժենիե»-ով՝ («Положение об управлении делами Армянно-Григоріанскоу церкви в России») Սևանի թեմն ընդգրկվում է Երևանի թեմի կազմում: Սևանավանքն էլ, մյուս վանքերի հետ, մտնում է Երևանի կոնսիստորիայի իրավասության տակ, որով միա-

բանությունը պարտավորվում էր ամեն տարի հաշվետվություն ներկայացնել տարեկան եկամուտի մուտքի և ելքի մասին: Նոր օրենքով վանքին արտոնություն էր տրվում՝ լրացուցիչ եկամուտ ունենալու դեպքում, այն օգտագործել ըստ ցանկության, իսկ պակաս եկամուտի դեպքում հոգևոր ատյանը պետք է լրացներ պակասը: Միաբանության գոյության աղբյուրները մնում էին միայն վանքի կալվածքներն ու ժողովրդի նվիրատվությունները: Այդ տարիներից սկսած Սևանի կառավարիչն ընտրվում էր միաբանության կողմից ու հաստատվում բարձրագույն ատյանով, ապա նոր միայն կարգվում վանահայր⁴⁷: Նախկինում վանքի կենսագործունեությունը միանձնյա տնօրինում էր վանահայրը, չկար աշխարհիկ վերահսկողություն, չկար հաշվեմատյան: Այս օրենքով վանքերը վերածվեցին մի յուրօրինակ «հաշվապահական հիմնարկությունների», որոնց բոլոր նյութական ձեռքբերումների մասին ամեն տարի պետք է հաշվետվություն ներկայացվեր Սինոդին: Այսինքն՝ վանքերը կորցնում էին իրենց ներքին ինքնավարությունը⁴⁸:

«Պոլոժենիե»-ով թեմական ու ծխական դպրոցները դառնում էին ազգային-եկեղեցական դպրոցներ, վանական դպրոցները փակվում էին: Եվ եթե ԺԹ դարի սկզբին հայ մտավորականությունը գերազանցապես ներկայացնում էին հայ հոգևորականները, ապա նույն դարի 50-ական թվականներից երևան է գալիս հայ աշխարհիկ մտավորական դասը:

Գյուտ եպիսկոպոս Ղազարյանը, խոսելով «Պոլոժենիե»-ից հետո հայ եկեղեցու մասին, գրում է. «Այս կանոնադրությամբ հենց հայ եկեղեցին իւր աւատական վիճակից ելաւ, միապետական ոգու կնիք ստացաւ ու աստիճանաբար սկսեց աւելի մի պաշտօնական, սառը ձեւականութեան ենթակայ հիմնարկութիւն դառնալ, կորցնելով իւր կենսունակութիւնը, իւր ժողովրդական սկզբունքների մի քանիսը»⁴⁹:

⁴⁵ Կիսիւշիանցի, էջ 86. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Սևանի անապատը ԺԵ–ԺԹ դարերում, էջ 125–126:

⁴⁶ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], էջ 621: Այդ մասին վկայող վիճագիր է եղել Սբ Աստվածածին եկեղեցու որմին:

⁴⁷ Նույն տեղում, էջ 663:

⁴⁸ Գիւտ եպս. [Ղազարեան], Սեւանայ վանքը, «Հանդէս ամսօրեայ», 1929, N 1, սիւն 56–57:

⁴⁹ Գիւտ եպս. [Ղազարեան], Սեւանայ վանքը, «Հանդէս ամսօրեայ», 1928, N 1–2, սիւն 52:

Սևանավանքը՝ (Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայության միակ անապատ-ճգնարանը ևս), իր երկարատև գոյության ընթացքում երբեմն-երբեմն համընդհանուր ճանաչում էր ձեռք բերում՝ մեծագույն ծառայություններ մատուցելով ոչ միայն Գեղարքունյաց աշխարհին, այլև ողջ հայ ժողովրդին՝ այս օրենքի կիրառման հետևանքով վերածվեց մի սովորական վանքի:

1841թ. Սևանավանքի վանահայր է կարգվում Հովհաննես վարդապետ Անտոնյան Տփլիսեցին, նույն ժամանակ անապատ է այցելում Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը, երբ գրում էր իր «Ստորագրություն» անունով հայտնի տեղագրական երկը⁵⁰:

Մինչև Մկրտիչ Շիրակացու վանահայրությունը (1848 թ.) կանանց մոտքը Սևանի անապատ արգելվում էր, թեև լինում էին բացառություններ (այցելել է Մարիամ բարեպաշտ իշխանուհին կամ անապատ են եկել կանայք տարբեր աղետների ժամանակ): Ժողարի 50-ական թվականներից Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հրամանով վերացվում է այս արգելքը⁵¹:

Սինոդի միջամտությունը վանական գործերում անցանկալի են համարվել բոլոր վանքերի առաջնորդների կողմից: Նույնը և եղել է Սևանավանքում: Վանահայր Մկրտիչ վարդապետը 1850թ. հուլիսի 18-ին դիմել է կաթողիկոսին՝ խնդրելով Սևանի անապատը հանել Սինոդի հսկողությունից՝ պատճառաբանելով, որ այն ավելի շատ եղել է օրենքի չարաչափում: Վեհափառն անպատասխան է թողել անապատի բողոքը⁵²:

Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի օրոք գավառներում մտցվում է «տեսուչ հոգևոր գործոց» պաշտոնը: Այդ պաշտոնյան նշանակվում էր գավառների աշխարհիկ ազդեցիկ տների ներկայացուցիչներից: Նոր Բայազետում Ներսես Աշտարակեցու 1856 թ. հունիսի 28-ի հրամանով պաշտոնավարում էր Բար-

սեղ աղա Արծրունին: Կային նաև, այսպես կոչված, վանական կառավարության երեք անդամներ՝ տեղի միաբաններից: Հիշյալ կոնդակով 10 կետից բաղկացած հրահանգներով հայրապետը «կարգի էր» բերում վանական համակեցությունը՝ հիմնականում ուշադրությունը կենտրոնացնելով տնտեսական խնդիրների վրա:

Այս տարիներին Սևանավանք կրոնավորելու է գալիս թիֆլիսեցի Ղուկի Թաչիրյանցը և դառնում կրոնավոր՝ Ղազար անունով: Նրա մահից հետո որդին՝ Ալեքսանդրը, 3500 ռուբլի է կտակում վանքին՝ պայմանով, որ այդ գումարը 30 տարի հետո միայն պետք է հանվի բանկից և օգտագործվի Սևանավանքում դպրոց բացելու համար⁵³:

1856թ. սեպտեմբերի 22-ին լուսարարի անփութության հետևանքով այրվում է Սբ Աստվածածին եկեղեցու զգեստատունը՝ զգալի կորուստ պատճառելով վանքին՝ 19 շուրջառ, 10 փորուրար, 48 շապիկ, 4 վարագույր, 4 սկիհ, 4 սաղավարտ, 6 վակաս և 1 արծաթապատ Ավետարան⁵⁴:

Տասը տարի պաշտոնավարելուց հետո՝ 1856թ., Մկրտիչ վարդապետը վախճանվում է, իսկ վանահայր է դառնում Կարապետ վարդապետ Բլբուլյանցը: Նա որոշ շինարարական աշխատանքներ է կատարում Սևանավանքում՝ ավելացնում ուխտավորների սենյակները, իսկ Բարսեղ աղա Արծրունու միջոցներով՝ երկու սենյակ բարձրաստիճան հյուրերի համար⁵⁵:

Հարություն Մարջանյանի վանահայրության շրջանում՝ 1861թ., վանքի միջոցներով կանաչապատվում է կղզու ամբողջ տարածքը, շինվում է մառան, իսկ Ցամաքաբերդում՝ «Դրսի տներ» կոչվող հյուրանոցը և մի ամբար⁵⁶:

⁵³ Կտակագիրը կազմված է եղել 1890թ., իսկ ժամկետը լրանում էր 1920թ. (Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], էջ 665):

⁵⁴ Նույն տեղում, էջ 665:

⁵⁵ Նույն տեղում, էջ 744:

⁵⁶ Այդ տարիներին՝ 1862 թ., մահանում է Մելքոն ճգնավորը, որն ապրում էր Սևանավանքում՝ միաբաններից հեռու, Սբ Առաքելոց եկեղեցու մոտ՝ իր կառուցած խցում: 45 տարուց ավելի ապաշխարել է՝ անդադար աշխատելով Սևանի միաբանությունում, ճանապարհ-

⁵⁰ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], էջ 664:

⁵¹ Նույն տեղում, էջ 664-665:

⁵² Գիտ եպս. [Ղազարեան], Սեւանայ վանքը, «Հանդես ամսօրեայ», 1929, N 1, սին 56:

1863թ. սալապատվում են բնակելի շինությունները և նորոգվում վանքի եկեղեցիների սալաքարերը⁵⁷: Նրա վանահայրության տարիներին Սևանավանքում Սբ Էջմիածնի միաբան Հակոբ վարդապետ Սյունեցին շարադրում է վանքի պատմությունը՝ «Պատմութիւն Սևանայ»-ն, որն ավարտում է 1862թ.⁵⁸:

Բարեկարգումները շարունակվում են նաև 1869թ. նորից ընտրված Կարապետ Բլբուլյանցի վանահայրության տարիներին: Միաբանության միջոցներով և նվիրատվությունների հաշվին կառուցվում են մի շարք շինություններ⁵⁹: 1869թ. կղզում բացվում է դպրոց, որն իր գործունեությունը շարունակում է մինչև 1880թ.⁶⁰:

Կարապետ Բլբուլյանցի վանահայրության շրջանում՝ նշանավոր արևելագետ, կովկասագետ Նիկողայոս Մառը Հայաստանում ճանապարհորդելիս, Սևանավանքում կարճ ժամանակով հանգրվան է գտնում և կազմում այստեղ պահվող ձեռագրերի համառոտ ցուցակը⁶¹: 1871թ. հանգստանալու նպատակով Սևանավանք է այցելում Գևորգ Դ կաթողիկոսը, իսկ 1890-ին, Կովկասում շրջագայելիս՝ վանքի

միաբաններին այցելության է գալիս Իտալիայի թագաժառանգ Վիկտոր Էմմանուիլը⁶²:

Սևանի մենաստանի կյանքն ու կենցաղը ժԹ դարում որևէ փոփոխություն չի կրում: Միաբանները նախկինի պես սպասավորում էին, պարեն ստանում, խաղաղ կյանքով ապրում: Սակայն անապատի հոգևոր կյանքի խաթարումն իր բացասական կնիքն է թողնում վանականների վրա: Թե որքանով էր փոխվել հայ վանականի պարտքի գիտակցումը, թե որքանով էր նա շեղվել դեպի նյութականը, երևում է Սինոդի՝ 1887թ. դեկտեմբերի 30-ի վանքերին ուղղված գրությունից, որով հրահանգվում էր առանց Սինոդի թույլտվության չվաճառել շարժական գույքը՝ գրքերը, ձեռագրերը, զարդերը, անոթները, կապալով չտալ հողը, վանքապատկան տունը, կրպակը, այգետեղին և ամեն տարի վանքի գույքացուցակն ուղարկել Սինոդ⁶³:

Գրիգոր վարդապետ Ակոռեցու վանահայրության տարիներին՝ 1892թ., Սևանա կղզի է գալիս Սահակ Ամատունին, որը ցուցակագրում է վանքի ունեցվածքը, կազմում մուտքի և ելքի նախահաշիվը, հաշվառում ձեռագրերը⁶⁴:

ԺԹ դարի 90-ական թվականներին Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսն առանձնակի ուշադրություն է դարձնում Սևանավանքին, փորձում է կանգնեցնել վանականության անկումը: Խրիմյան Հայրիկը 1896թ. ապրիլի 11-ի իր կոնդակով, նպատակ ունենալով «պայծառացուցանել զբազմադարյան սրբավայրս մեր», երբեմնի ուսուցիչ Սարգիս Փիլոյանին ձեռնադրում է կուսակրոն քահանա, տալիս վարդապետական աստիճան և կարգում Սևանավանքի վանահայր⁶⁵: Նորանշանակ վարդապետն իր անբասիր վարքով և համեստ կենցաղով աշխատում է մենաստանում անապատականներին վայել կենցաղ մտցնել: Նա միաբաններին ուղղված հատուկ հրահանգով

ներ բացելով, սենյակներ ավելացնելով: Նա փլատակների տակից դուրս է բերել բլրի գագաթին գտնվող՝ Սբ Հարության կամ Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Մելքոն անապատի վերջին ճգնավորն էր: Նա սնվում էր միայն հաց ու ջրով, հագնում բրդյա վերարկու, աղոթասեր ու ընթերցասեր էր, իր ամբողջ կյանքում կնոջ երես չէր տեսել (Սմբատեանց, էջ 118, 393):

⁵⁷ ՄՄ 8253, էջ 329ա:

⁵⁸ Այդ մասին տես **Н. Марр**, Списокъ рукописей Севанского монастыря, Москва, 1890, с. 28, рук. N 63 (այսուհետ՝ Марр): Աշխատանքն ունեցել է «Պատմութիւն Սևանայ, աշխատասիրաց Յակոբ վարդապետ Սինեաց, ի միաբանութենէ Սբ Էջմիածնի, 1862, ի Սևան» խորագիրը, որը միայն մեկն է ձեռագրում եղած այլ նյութերից (Марр, էջ 27-28):

⁵⁹ Կառուցվում է երկու քարավանատուն Ելենովկայի ճանապարհին, երեք կրպակ և երկու տուն են ավելանում Երևանում ու մի ջրաղաց՝ Բայազետում: Դրանից հետո վանքապատկան են դառնում Յամաքաբերդ և Գոմաձոր գյուղերը, երկու այգի Նորքում ու Քարվանսարայում, երկու քարավանատուն և մի թերակղզի Ելենովկա գյուղի մոտ, վեց ջրաղաց Նոր Բայազետում և Չանգվի վրա, չորս խանութ և երկու տուն Երևանում, հինգ խանութ Թիֆլիսում (Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմութիւնը], էջ 746):

⁶⁰ Սմբատեանց, էջ 126-127: Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմութիւնը], էջ 775:

⁶¹ **Марр**, Списокъ рукописей Севанского монастыря.

⁶² Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմութիւնը], էջ 775:

⁶³ Գիւտ եպս. [Ղազարեան], Սեանայ վանքը, «Հանդես ամսօրեայ», 1929, N 5, սին 295:

⁶⁴ Սմբատեանց, էջ 128-130:

⁶⁵ Գիւտ եպս. [Ղազարեան], նշվ. աշխ., սին 297-298:

արգելում է ծեծկռտուքը, անվայել պահվածքը, անհնազանդությունն ու անհավատարմությունը: Սարգիս վարդապետ Փիլոյանի օրոք կղզում սկսվում է մեծ շինարարություն, որը տևում է 15 տարի՝ մինչև 1907 թվականը: 1897–1898 թթ. Ղարաբաղցի Ավետիս Ղուկասյանի միջոցներով կառուցվում է միահարկ ընծայարանը, 1900–1901 թթ. Մովսես Բարսեղյանի ծախսերով կառուցվում է վանահոր կացարանը⁶⁶, իսկ 1899–1910 թթ. մի խումբ բաղնիքների նվիրատվության շնորհիվ՝ հյուրանոցը և մի մառան: 1903 թ. կառուցվում է Սբ Աստվածածին եկեղեցու զանգակատունը (նկ. 6), 1907 թ.՝ ուխտավորների և միաբանների կացարանները՝ միաբանների և մասնավոր անձանց միջոցներով⁶⁷: Սակայն ոչ Սարգիս Փիլոյանի անձնուրաց աշխատանքը, ոչ ընծայարանի երկու-երեք տարի գործելը, ոչ նոր շենքերն ու շինությունները չկասեցրին Սևանի մենաստանի անկումը: Այն այլևս նախկին ավանդական անապատը չէր: Հենց այդ պատճառով էլ Մկրտիչ Ա կաթողիկոսի 1901 թ. հունվարի 1-ի կոնդակով Սևանավանքը վերածվում է ուխտավայր-աղոթատեղիի⁶⁸:

Ի դարի 20-ական թվականներին, իր «Սևանայ վանքը» ուսումնասիրությունն ամբողջացնելու նպատակով կղզի է այցելում Գյուտ Եպիսկոպոսը, որը վկայում է, որ միաբանության դիվանում սակավաթիվ տեղեկություններ էին պահպանվել. ԺԹ դարի վանահայրերի ցանկը՝ սկսած Մկրտիչ վարդապետից մինչև Սարգիս Փիլոյանը, և տարբեր տարիների միաբանների ոչ ամբողջական ցանկը. 1849 թ. եղել է մեկ աբեղա, երկու տիրացու,

չորս դպիր, 1860 թ.՝ հինգ վարդապետ, հինգ տիրացու, մեկ սարկավագ, հինգ մահոտեսի, 1862 թ.՝ հինգ վարդապետ, երեք սարկավագ, չորս տիրացու, 1890 թ.՝ երեք վարդապետ, հինգ աբեղա, երկու սարկավագ, 1896 թ.՝ հինգ վարդապետ, մեկ աբեղա, երկու սարկավագ, ութ տիրացու, ութ մահոտեսի:

Գյուտ Եպիսկոպոսի այցելության ժամանակ մենաստանում եղել է մեկ վարդապետ: Նախկին միաբաններից երկուսը Մայր Աթոռում էին, մեկը՝ Գնդեվանքում⁶⁹:

Որպես գործող եկեղեցիներ, Սբ Առաքելոցը, Սբ Կարապետն ու Սբ Աստվածածինը շարունակում են գոյատևել մինչև 1926 թվականը: Հենց այս թվականից սկսած, ի թիվս այլոց, այս եկեղեցիները ևս փակվում են՝ դառնալով պատմական հուշարձաններ: 1926 թ. ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ Սևանա կղզին դառնում է հանգստավայր և անցնում ներքին գործերի ժողովմատի իրավասության տակ: 1930-ական թվականներին քանդվում է Սբ Աստվածածին եկեղեցին և նրան հարող Սբ Սարգիս մատուռը: Խորհրդային իշխանության վերջին տարիներին երկու եկեղեցիներն անցնում են Մայր Աթոռի իրավասության տակ:

1990 թ. Վազգեն Ա կաթողիկոսի օրհնությամբ՝ Արարատյան թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսեսյանի (այժմ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Բ) նախաձեռնությամբ վերաբացվեց Սևանավանքը: Նույն թվականին բացվեց նաև Հոգևոր դպրանոցը, որը 1994 թվականից կրում է Վազգեն Վեհափառի անունը:

⁶⁶ Մինչև վերջերս Սբ Առաքելոց եկեղեցու գավթում էին գտնվում այդ շինարարական աշխատանքների մասին վկայող 1901 թվակիր մարմարե սալաքարի բեկորները՝ վանահայր Սարգիս Եպիսկոպոսի և մեկենասի անվանական հիշատակումներով (խմբ.) (նկ. 32):

⁶⁷ Գիւտ Եպս. [Ղազարեան], նշվ. աշխ., սիւն 301:

⁶⁸ Նույն տեղում, սիւն 302–303, 305:

⁶⁹ Նույն տեղում, սիւն 384–397:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ
ԵՎ
ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

«Ծաղկեցաւ... ի Տանս Գեղամայ, ի Սբ ուխտս Սեւան,
ընդ հովանեաւ Սբ Առաքելոցս, առաջնորդութեամբ
Դանիէլ վարդապետին և Գրիգորիս եպիսկոպոսի...»

Գրիշ՝ Սահակ արեղա, 1504 թ., ՄՄ 6648, 124բ



ՄԱՇՏՈՑ ԵՂԻՎԱՐԴԵՑԻՆ ԵՎ ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ

Չնայած Հայաստանի համար քաղաքական անբարենպաստ պայմաններին, թ դարի երկրորդ կեսին Հայոց եկեղեցին շարունակում էր իր պատասխանատու առաքելությունը երկրի մատաղ սերնդի հոգևոր կրթության և դաստիարակության գործում: Այն իրականացվում էր հիմնականում Հայաստանում գործող և նոր բացվող վարդապետարաններում: Դրանց մեջ իր նշանակությամբ առանձնանում էր Սյունյաց աշխարհի ամենանշանավոր վարդապետի՝ Մաշտոց Եղիվարդեցու Սևանա անապատի վարդապետարանը: Եղիվարդեցու կյանքի և գործունեության մասին մեզ կարևոր տեղեկություններ է փոխանցել նրա աշակերտ Ստեփանոս կրոնավորը, որը հեղինակել է Մաշտոց Եղիվարդեցու վարքը՝ համառոտ շարադրելով իր ուսուցչի 33 տարվա անապատական և 22 տարվա առաջնորդական կյանքի պատմությունը⁷⁰:

Ստեփանոսը՝ ապագա Մաշտոց Եղիվարդեցին, Եղվարդի Սբ Թեոդորոսի մենաստանի քահանայական տոհմից էր: Մաշտոցի ծննդյան թվականի մասին կարելի է եզրակացնել՝ հիմնվելով նրա վարքագրի հետևյալ վկայության վրա. «Եւ յայսմ ամի (893թ. – Ա. Ղ.), յորում կարգեցի զսակաւաւոր գրումնս, էր ամբ կենաց նորա սակաւ ինչ քան զվաթսուն ամ...»⁷¹: Այսինքն՝ երբ Ստեփանոս կրոնավորն ավարտում էր Եղիվարդեցու վարքը գրելը՝ 893թ., Մաշտոց վարդապետը մոտավորապես 60 տարեկան է եղել, այստեղից էլ՝ նա, հավանաբար, ծնվել է 833թ.:

Ստեփանոսի առաջին ուսուցիչը հայրն էր՝ Գրիգոր քահանան, որից նա ստացել է աստվածաբանական առաջին գիտելիքները:

Սովորել է Մաքենոցաց ուխտում. «Մանուկն ուշիմ էր և սիրելի մեծամեծաց ...ստացաւ վարս անսրւաղականս, պարկեշտս, ընդկերս, անըստգիւտս և ճշմարտասէրս», — գրում է վարքագիրը: Ուսումն ավարտելուց հետո Սյունյաց Դավիթ եպիսկոպոսի օրհնությամբ Ստեփանոսը քահանա է ձեռնադրվում՝ ստանալով Մաշտոց անունը:

Մաշտոց Եղիվարդեցին անապատական կյանքի է անցել 860թ.՝ 27 տարեկան հասակում: Այդ տարի նա թողել է Մաքենոցաց վանքը և տեղափոխվել Արտավազիկ մենաստան (ներկայում՝ ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ գյուղում): Երեք տարի անց այդտեղից տեղափոխվել է Սևանա կղզի, որտեղ Մարիամ Բագրատունու միջոցներով 871թ. կառուցել է Սբ Առաքելոց և Սբ Աստվածածին եկեղեցիները, հիմնել Սբ Առաքելոց միաբանությունը:

Ստեփանոս Ասողիկի վկայությամբ՝ թ դարում այդ միաբանությունում շարունակում էին գործել Բարսեղ Կեսարացու համակցության խոստագույն կանոնները⁷²: Այդ կանոններով էր ապրում նաև Մաշտոց Եղիվարդեցին: Մանուկ հասակից ապրելով ճգնական կյանքով՝ նա հրաժարվել էր անգամ մրգից և ջրից, աղոթասեր և սրբակրոն էր: Ավելին՝ Մաշտոց վանահայրը պարտադրում էր միաբանության անդամներին նույնպիսի կյանքով ապրել:

897թ. գարնանը Մաշտոց Եղիվարդեցին ձեռնադրվել է կաթողիկոս՝ Հայրապետական Աթոռին մնալով մոտ յոթ ամիս:

Մաշտոց Եղիվարդեցին մահացել է 898թ., թեև տապանաքարին Հայոց ՅԽԶ.՝ 897 թվականն է: Նրա շիրիմն ամփոփված է Գառնիի ամրոցի փոքր եկեղեցում: Ուղղանկյունաձև տապանաքարին հետևյալ երկտող արձանագրությունն է. «ՅԽԶ. (897) թվ(ին), ի Ք(րիստո)ս / փոխ(ե)ց(աւ) Տ(է)ր Մաշդ(ոց)»: Տառածներից դատելով՝ ենթադրվում է, որ գիրն ավելի ուշ՝ առնվազն ԺԳ դարում է փորագրվել⁷³:

Պատմական տարբեր աղբյուրներ վկա-

⁷⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե–ԺԲ դդ., աշխ.՝ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 43 (այսուհետ՝ Ե–ԺԲ դդ. հիշ.). հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, «Էջմիածին», 1991, Ա–Գ, էջ 110:

⁷¹ Ե–ԺԲ դդ. հիշ., էջ 43. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, էջ 110:

⁷² Ասողիկ, էջ 160:

⁷³ Հ. Պետրոսյան, Գառնի IX–XIV դարերում, Երևան, 1988, էջ 27:

յում են, որ ժամանակի ընթացքում Մաշտոց եղիվարդեցու ղեկավարած Սևանավանքի Սբ Առաքելոց միաբանությունը վերածվում է ուսումնասեր անձանց միաբանության, ուր. «յաւելոյր արըստարէ զգործ մշակութեան»⁷⁴, և բացվում է վարդապետարան, որն իր նշանակությամբ առանձնանում էր Հայաստանի մյուս մեծ և փոքր վարդապետարաններից՝ գնահատվելով որպես «ուսումնասէր անձանց վարժարան»⁷⁵: Եղիվարդեցու բացած այս կրթարանը շարունակում էր Մաքենոցաց դպրոցի և Սյունյաց վարդապետարանի ավանդույթները: Վարդապետարանում Սբ Գրքի մեկնություններից զատ, ամենայն հավանականությամբ, ուսումնասիրել են այդ ժամանակ ընդունված երեք գիտությունները («եռյակ արվեստները»)՝ քերականություն, ճարտասանություն, փիլիսոփայություն:

Դպրոցը դասագրքերով ապահովելու համար Մաշտոցը հարստացնում է նաև Սևանի մատենադարանը. «ստանալով զբազմութիւն գրոց սրբոց՝ զի լուսաւոր եղիցին աչք ոգւոց...», — գրում է Ստեփանոս Ասողիկը⁷⁶: Այսպիսով, Մաշտոց եղիվարդեցին գնել և ընդօրինակել է տվել ձեռագրեր, հարստացրել տեղի՝ դեռևս Ե դարում ստեղծված մատենադարանը: Այսօր, դժբախտաբար, այս շրջանի ընդօրինակություններից մեզ ոչինչ չի հասել: Ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ արաբները միաբաններից խլել են նրանց ողջ ունեցվածքը: Հավանաբար դրանց հետ կորսվել են նաև բազմաթիվ ձեռագրեր⁷⁷:

Մաշտոց եղիվարդեցու Սևանավանքի դպրոցում է սովորել և նրա առաջին աշակերտներից է եղել Սյունյաց հայկազուն իշխան Գևորգը, որը հրաժարվելով աշխարհիկ ունայն կյանքից՝ Երիցավանքում անցել է անապատական կյանքի՝ աշակերտելով Թեոփորոս քահանային: Թերի ուսումը լրացնելու համար Գևորգ իշխանն իր ուսուցչի հետ այցելել է այդ ժամանակ Հայաստանում, մասնա-

վորապես՝ Սյունյաց աշխարհում հայտնի երկու այրերին՝ Սողոմոն եպիսկոպոսին, ապա՝ Մաշտոց եղիվարդեցուն: Թեոփորոսն իր աշակերտին թողել է Եղիվարդեցու անապատում, որտեղ նա կարող էր, «ուսանիլ և կրթիլ յամենայն վարս առաքինութեան», — գրում է Ստեփանոս Օրբելյանը⁷⁸: Եվ քանի որ Մաշտոց եղիվարդեցի վարդապետն իրավասու չէր նորավարտ իր աշակերտին քահանա ձեռնադրելու, նրան ուղարկել է Գևորգ կաթողիկոսի մոտ՝ ձեռնադրության: Կաթողիկոսը սանին հետ է ուղարկել անապատ և Մաշտոց եղիվարդեցուն իրավունք տվել նրան քահանա ձեռնադրելու: Ձեռնադրված քահանան մինչև Մաշտոց եղիվարդեցու մահը մնացել է իր նշանավոր ուսուցչի կողքին, ապա տեղափոխվել Երիցավանք⁷⁹:

Մաշտոց վարդապետի մյուս աշակերտը նրա ազգակից պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին էր, որը «մանկութենէ» կրթվել է Մաշտոցի վարդապետարանում. «...սնեալ և ուսեալ առ ոտս սրբոյն Մաշտոցի, նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն, վարժիւք ոռոգացեալ այր քաղցրաբարոյ և հեզահայաց...»⁸⁰: Ուսումը ստանալուց հետո, ինչպես ենթադրում է Մաղաքիա Օրմանյանը, Դրասխանակերտցին սպասավորել է Գևորգ կաթողիկոսի մոտ⁸¹: Մաշտոցի կաթողիկոս դառնալուց հետո աջակցել է իր ուսուցչին, իսկ նրա մահից հետո ընտրվել կաթողիկոս (897–925)⁸²: Նա Մովսես Խորենացուց հետո մեզ հայտնի երկրորդ պատմիչն է, որ հայ ժողովրդի պատմությունը սկսել է խոր անցյա-

⁷⁸ Օրբելյան, էջ 243:

⁷⁹ Նույն տեղում, էջ 243–244. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Մաշտոց եղիվարդեցի կաթողիկոս, էջ 112:

⁸⁰ Թովմայի վարդապետի Արժրունայ Պատմություն տան Արժրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 391: Հովհաննես Դրասխանակերտցին ծնվել է Թ դարի 40-ական թթ. Այրարատ նահանգի Դրասխանակերտ դաստակերտում և, ինչպես ինքն է վկայում, ազգակցական կապ է ունեցել իր ուսուցչի հետ. «...յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի ի մանկութենէ իմմէ, այլև ազգակից հարազատութեան նորա ըստ մարմնոյ...» (Դրասխանակերտցի, էջ 183):

⁸¹ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, մասն Ա., Սբ Էջմիածին, 2001, սիւն 1187–1188:

⁸² Иованес Драсханакертци, История Армении, Ереван, 1986, с. 11.

⁷⁴ Ե–ԺԲ դդ. հիշ., էջ 42: ՄՄ 970, էջ 359 բ:

⁷⁵ Կիմրիշխանեցի, էջ 20:

⁷⁶ Ասողիկ, էջ 100:

⁷⁷ Դրասխանակերտցի, էջ 229:

լից և հասցրել մինչև իր օրերը՝ 925 թվականը։ Սամվել Անեցին նրա «Պատմություն Հայոց»-ը համարել է «գեղեցկաբան շարադրություն»⁸³, իսկ Ասողիկը հեղինակին՝ «ճարտասան և պատմագիր»⁸⁴։

Մաշտոց Եղիվարդեցու աշակերտներից է նաև Ստեփանոս Սևանցին, որը ևս նրա ազգականներից էր։ Հետագայում նա նույնպես դառնում է կաթողիկոս. «...միաբանեալ նստուցին յԱթոռ Սրբոյ Լուսաւորչին զՍտեփանոս, հարազատ արեան սրբոյն առն յԱստուծոյ Մաշտոցի, որ ի Սևան կղզւոջ։ Եւ էր սա հետեւեալ վարուց նորա, որ եկեաց յԱթոռն Հայրապետութեանն, ամս երկու»⁸⁵։ Ինչպես նշվեց, Մաշտոցի աշակերտներից է նաև նրա վարժագիրը՝ Ստեփանոս կրօնավորը, Թ դարի հայ գրչության արվեստի նշանավոր ներկայացուցիչներից մեկը։ Նա հիմք է դրել հիշատակարան գրելու նոր ձևին՝ վարժ-հիշատակարաններին⁸⁶։

Կասկածից վեր է, որ Մաշտոց Եղիվարդեցու դպրոցում կրթվել են շատ արժանավոր աշակերտներ՝ ստանալով «վարս անսըւականս, պարկեշտս», սակայն նրանց և նրանց գործունեության մասին առաջին տեղեկություններ չունենք։ Այսուհանդերձ, Եղիվարդեցու վերոհիշյալ սաների՝ Սևանի դպրոցում բարձրակարգ ուսում ստանալու փաստն իսկ բավական է, որ Սևանի վարդապետարանն իր արժանի տեղն ունենա միջնադարյան նշանավոր վարդապետարանների, իսկ «...ճգնաւորական հանդեսի և իմաստասիրական արհեստի»⁸⁷ պայծառացած վարդապետը՝ հայ գրի և դպրության երախտավորների շարքում։

Սևանավանքում Մաշտոց Եղիվարդեցին գրել է ճգնական կյանքի մանրամասների

քննությունը վերաբերող «Սբ հաւրն Մաշտոցի. Խրատ հոգէշահք», Դվինի 893 թ. երկրաշարժից տուժածներին ուղղված «Թուղթ մխիթարութեան առ Դըւնեցիս», և Պետրոս եպիսկոպոսի մահից հետո Սյունյաց եպիսկոպոսական աթոռի՝ Մայր Աթոռից բաժանման և ինը հոգևոր դասերն ու եպիսկոպոսական ձեռնադրությունը Աղվանից կաթողիկոսությունից ստանալու մասին պատմող «Թուղթ առ Գէորգ կաթողիկոսն Վասն Սիւնեաց Խաչին» գործերը⁸⁸։

Պատմական առանձնահատուկ արժեք է ներկայացնում Եղիվարդեցու «Թուղթ առ Աբաս սպարապետն» նամակը, որտեղ վարդապետը հորդորում է սպարապետին իր նման «հնազանդիլ Աստուծոյ առաւել, քան մարդկան» չարժանանալ Աստծու պատժին և չվտանգել Հայոց եկեղեցին ու թագավորական իշխանությունը⁸⁹։

Մաշտոց Եղիվարդեցին խմբագրել, ամբողջացրել և իր կաթողիկոսության յոթ ամիսների ընթացքում կիրառել է ծիսական կանոնների ժողովածուն, որը, ինչպես գրում է Կիրակոս Գանձակեցին, իր անունով կոչվեց «Մաշտոց»։ «Սա (Մաշտոց Եղիվարդեցին – Ա. Ղ.) կարգեաց զգիրսն, որ ըստ անուամբ իւրում՝ կոչի Մաշտոց, ժողովեալ զամենայն կարգեալ աղօթսն և զընթերցուածսն ի միասինէ յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որն ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան»⁹⁰։

«Մաշտոցում» ամփոփված են եղել միայն «զկարգն մկրտութեան և զպսակին, զհաղորդութեանն և զթաղմանն, զհոգեհանգիստն և զխաչօրհնեայն, զսերմօրհնէն և զշեղջ, զկալ, զհնձանին, զհորս և զկարաս, զջրօրհնէն և զոտնալուան, զհիմնարկէք և զեկեղեցօրհնէքն, զաւագանին և զպղղծեալ տաճարին,

⁸³ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ (այսուիեն՝ Անեցի), յառաջաբանով, համեմատութեամբ եւ ծանօթութիւններով՝ Ա. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 85։

⁸⁴ Ասողիկ, էջ 160. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոս, էջ 112։

⁸⁵ Գանձակեցի, էջ 67։

⁸⁶ ՄՄ 970. հմմտ.՝ Ե-ԺԲ դդ. հիշ., էջ 41։

⁸⁷ Անեցի, էջ 95։ Դրասխանակերտցի, էջ 148։

⁸⁸ Սբ հաւրն Մաշտոցի Խրատ ոգէշահք, «Մատենագիրք Հայոց», հ. Թ, Թ դար (Յաւելուած), Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 560–564։ Թուխտ երանելոյն Մաշտոցի, նախ քան զկաթողիկոսութիւն, առ Տէր Գէորգ Հայոց կաթողիկոս, վասն՝ Սիւնեաց խաչին, թէ էր աղագաւ տուաւ, «Արարատ», 1902, Է-Ը, էջ 748–753։

⁸⁹ Ա. Ղազարոսյան, Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոս, էջ 113։

⁹⁰ Գանձակեցի, էջ 81։

քահանայի, սարկաւագի, կիսասարկաւագի ձեռնադրութեանն և զքահանայաթաղն և աշխարհաթաղն կանոնները»⁹¹: Հետագայում ժողովածուում տեղ են գտել նաև ծիսական այլ կանոններ: «Մաշտոց» ծիսական կանոնների ժողովածուն, իր տարբեր բաժանումներով, ցայսօր կիրառվում է Հայ Առաքելական եկեղեցում⁹²:

ԴԱՆԻԵԼ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ
«ԱՐԵԻԵԼԵԱՆ ՏԱՆ
ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ»
ԵՎ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սևանավանքի գրչակենտրոնի գործունեության մասին ժ-ժԵ դդ. որևէ տեղեկություն մեզ չի հասել: Միայն ժԵ դարի երկրորդ կեսին Սևանավանքում հիշվում է Դանիել վարդապետի վարդապետարանը, որտեղ գրվել և նկարազարդվել են ձեռագրեր:

Դանիելը ծնվել է Սևանա կղզում, սովորել Տաթևի վարդապետարանում: Խորասանի տիրակալ, Լենկ Թեմուրի որդի Շահրուխի 1435 թ. արշավանքից հետո միաբանների մի մասի հետ Դանիելը տեղափոխվել է Սանահին: Սովորել է նաև Սբ Էջմիածնի դպրանոցում, աշակերտել Երեմիա վարդապետին: Դպրանոցն ավարտելուց հետո ձեռնադրվել է կուսակրոն քահանա⁹³:

Սբ Էջմիածնում սովորելիս՝ 1450 թ. Դանիելն իր ծնողների՝ Տեր Կարապետի և Համավորի միջոցներով մի «Ճաշոց» է պատվիրել իր ազգական Գրիգոր աբեղային⁹⁴: Հետագայում

ձեռագիրը Սևանավանքում ծաղկել է Դանիելի շնորհաշատ աշակերտ Աբրահամ Սևանցին⁹⁵:

1451 թ. Սևանա կղզում Դանիել աբեղան սկսում է իր ուսուցչական գործունեությունը: Այստեղ նա հիմնում է վարդապետարան, որտեղ սովորում էին ոչ միայն տեղի, այլև Հայաստանի տարբեր շրջաններից եկած հոգևորականներ: Դանիելի վարդապետարանում ուսուցումն իրականացվում էր Տաթևի վարդապետարանի ուսումնական ծրագրով: Ապագա վարդապետներն այստեղ ստանում էին տեսական և գործնական հարուստ գիտելիքներ, ծանոթանում տարբեր գիտությունների վերջին ձեռքբերումներին: Շուտով Դանիելի և նրա վարդապետարանի անունը տարածվում է ամբողջ Հայաստանում: ԺԵ դարի երկրորդ կեսի ձեռագրերից տեղեկանում ենք, որ Սևանավանքի վարդապետարանը փոխարինել է «Արեւելեան տան համալսարանին»՝ Տաթևին⁹⁶: Այն հիշվում է «Արեւելեան տան վարդապետարան»⁹⁷ անունով, իսկ նրա ընդունապետը՝ «ընդունապետ համայն ազգի»⁹⁸ պատվանվամբ:

Ուսուցչական գործունեությանը զուգահեռ, Դանիելը Սևանավանքում նաև ձեռագրեր է ընդօրինակել: Դժբախտաբար նրա ընդօրինակած միայն մեկ ձեռագիր է մեզ հասել՝ Մատթեոսի Ավետարանի՝ Գրիգոր Տաթևացու մեկնությունը, որի բնագրին կից կան նաև

րի գրչության հանգամանքների և երկրում տիրող իրավիճակի մասին. «Ձի վասն բազում մեղաց իմոց երեք ամ տարաժամ մահ եղեւ ի գաւառս Արարատո եւ ողբով եւ կոծով լի էր ամենայն երկիր եւ ամենայն մարդ, եւ ոչ ոք էր, որ հոգայր զմարմնականն, եւ մնային մահու, բազում տունք անմարդաբնակ եղեն, բազումք ապուշ մնացեալ լալով անցուցանէին զաւուրս իւրեանց եւ բազումք յուսահատեալք անգործ մնային...» (Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. իններորդ, կազմեց՝ **Ն. արք. Պողարեան**, Երուսաղէմ, 1979, էջ 544. հմմտ.՝ **Ա. Ղազարոսյան**, Դանիել րաբունապետը, էջ 103:

⁹⁵ Նույն տեղերում, էջ 545 / 103:

⁹⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԵ դար, մասն Բ (այսուհետ՝ ԺԵ դարի հիշ./Բ), Երևան, 1958, էջ 142:

⁹⁷ ԺԵ դարի հիշ./Ա, էջ 429. հմմտ.՝ **Ա. Ղազարոսյան**, Դանիել րաբունապետը, էջ 104:

⁹⁸ **Կիմիւշխանեցի**, էջ 42:

⁹¹ Այս կանոնները տեղ են գտել նաև 1300 թ. մի ձեռագրում՝ «Կարգատրութիւն արհնութիւնաբեր ցուցակի» («Արհնութիւնաբեր ցուցակ») խորագրով (Ե-ԺԲ դդ. հիշ., էջ 338-339, հմմտ.՝ **Ա. Ղազարոսյան**, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, էջ 114-115):

⁹² **Ա. Ղազարոսյան**, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս, էջ 116-117:

⁹³ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. իններորդ, կազմեց՝ **Ն. արք. Պողարեան**, Երուսաղէմ, 1979, էջ 542. հմմտ.՝ **Ա. Ղազարոսյան**, Դանիել րաբունապետը, էջ 103:

⁹⁴ Այս «Ճաշոցի» գլխավոր հիշատակարանում Գրիգոր գրիչը կարևոր տեղեկություններ է հաղորդում ձեռագ-

քարոզներ (ՄՄ 1301): Հատկանշական է, որ այս ձեռագիրը Սևանավանքի գրչականությունից մեզ հասած առաջին ձեռագիր մատյանն է (նկ. 33, 34):

Դանիելը ոչ միայն ինքն էր ընդօրինակում, այլև ձեռագրեր էր պատվիրում և հավաքում Սևանավանքի մատենադարանում: Մասնավորապես, նա 1461 թ. Առաքել արքեպիսկոպոսի գնել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը»⁹⁹, 1464 թ. իր դասընկեր, նշանավոր մանրանկարիչ Ստեփանոս Առնշեցուց նվեր է ստացել «Ճաշոց», որի ընդօրինակողն ու մանրանկարիչը նվիրատուն էր¹⁰⁰:

Տասը տարի անց՝ 1471 թ., Աղշոց վանքում վարդան գրիչը Դանիել րաբունու պատվերով ընդօրինակում է մի Ավետարան (ՄՄ 8409)¹⁰¹, որը տարիներ անց Սևանավանքում նկարազարդում է Աբրահամ Սևանցի մանրանկարիչը. «Կիրիկյան արվեստի հետևողությամբ, միջակից բարձր որակով»¹⁰²: Ավարտելով նկարազարդումը՝ Աբրահամ ծաղկողը թողել է հիշատակարան՝ անվանելով իր ուսուցչին. «Եռայմեծ» և «զաստուածաբան մեծ րաբունի»¹⁰³ (նկ. 35, 36):

Դանիել Սևանցի րաբունապետի մասին տեղեկություններ կան նաև նրա սաների ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում: Դանիելի առաջին սաներից էր եղբոր որդին՝ Ներսեսը, որն արդեն 1470-ական թթ. եպիսկոպոս էր և ղեկավարում էր Սևանի միաբանությունը¹⁰⁴: Նրան աշակերտել է նաև Տիրատուրը, որը 1462 թ. Տեպուրի վանքում սպասավորելիս՝ իր ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում հիշում է իր ուսուցչին՝ Դանիել վարդապետին¹⁰⁵: Ինչպես հիշվում է Ղազար գրչի «Մաշտոցի» հիշատակարանում, 1474 թ. նա Սևանավանքի միաբան էր¹⁰⁶:

Սևանավանքի վարդապետարանում ուսանած և վարդապետական աստիճան ստացած հոգևորականները չէին մոռանում իրենց ուսուցչին՝ անվանելով նրան «մեծ հոգևոր», «քաջ րաբունապետ», «տիեզերալոյս»:

1476 թ. Ղազար գրիչը Դալարում ընդօրինակած «Մաշտոցի» հիշատակարանում հիշում է «քաջ րաբունապետ Դանիելի» վարդապետարանն ավարտած աչքի ընկնող աշակերտներին¹⁰⁷:

Դանիել րաբունապետի սաներից էր Հորդանան վարդապետ Տաթևացին: Գրչության արվեստի մեջ հմուտ Հորդանան արքեպիսկոպոսի մեջ հմուտ Հորդանան արքեպիսկոպոս 1478 թ. իր հոգևոր ընկերոջը՝ Գրիգոր Բջնեցուն օգնում է Ավետարան ընդօրինակելիս¹⁰⁸: Այդ նույն թվականին Մկրտիչ եպիսկոպոսը գրում է մի «Շարակնոց». «սիրասնունդ աշակերտի տիեզերալոյս և քաջ րաբունապետի Տանս Արևելեան Դանիելի մեծի հոգևորի»՝ Տաթևի տեսուչ արքեպիսկոպոս Հորդանանի պատվերով՝ իր ծնողների հիշատակին¹⁰⁹: 1500 թ. Հունան եպիսկոպոսի ընդօրինակած

⁹⁹ Ժե դարի հիշ./Բ, էջ 156–157: Լ. Խաչիկյանն այս ձեռագիրը համարում է «Քարոզգիրք Գրիգորի Տաթևացու» (Ժե դարի հիշ./Բ, էջ 156), սակայն, ինչպես երևում է ձեռագրի նկարագրությունից, ժողովածուի մեջ կան նաև այլ նյութեր (տես Հայկական ձեռագիրք ճեմարանի արեւելեան լեզուաց ի Պետերբուրգ (ստորագրված՝ Ն. Մ.), «Հանդես ամսօրեայ», 1892, թիւ 3, էջ 80–83): Ձեռագրում սույն հիշատակարանն արտագրվել է երկիցս: Առաջին տարբերակը գրված է անվարժ ձեռքով, և Խաչիկյանն այն համարում է Դանիելի ձեռքով գրված, վարժ գրովը՝ լրացնողի և խմբագրողի գործ (Ժե դարի հիշ./Բ, էջ 158, ծնթ. 1): Սակայն հիշատակարանների գրատեսակի ուսումնասիրությունը պարզեց, որ հենց վարժ գրով գրված հիշատակարանն է Դանիել Սևանցունը, իսկ նախորդ հիշատակարանը գրվել է շտապ, սխալներով և թերի է, ուստի Դանիելը նորից է գրել հիշատակարանը և ավելացրել. «զհայրն իմ Կարապետ քահանայ, եւ մայրն իմ՝ զՀամաւոր, եւ եղբայրս իմ, եւ //» (ՄՄ, մանրագրապատկերների հավաքածու, N 271):

¹⁰⁰ ՄՄ 3759, թ. 941. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Դանիել րաբունապետը, էջ 103:

¹⁰¹ ՄՄ 8409, էջ 381բ–382ա. հմմտ.՝ Ժե դարի հիշ./Բ, էջ 315–316:

¹⁰² Գ. Հովսեփյան, Սևանի Առաքելոց վանքին հարավային դուռը, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Ա, Երևան, 1983, էջ 210:

¹⁰³ ՄՄ 8409, էջ 282ա. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Դանիել րաբունապետը, էջ 104:

¹⁰⁴ Նույն տեղերում, էջ 282բ / 104:

¹⁰⁵ Ժե դարի հիշ./Բ, էջ 171. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Դանիել րաբունապետը, էջ 104:

¹⁰⁶ Նույն տեղերում, էջ 396 / 104:

¹⁰⁷ Յուզակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմեց՝ Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 519: Այստեղ Դանիել վարդապետը հիշվում է իբրև «քաջ րաբունապետ». հմմտ.՝ Ժե դարի հիշ./Բ, էջ 396:

¹⁰⁸ Ժե դարի հիշ./Բ, էջ 426:

¹⁰⁹ ՄՄ 6125, էջ 328ա. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Դանիել րաբունապետը, էջ 105:

Ավետարանի հիշատակարանում Հորդանանը հիշվում է հանգուցյալների շարքում¹¹⁰:

Դանիել րաբունապետի մյուս սանը՝ Գալուստ Օհանավանցին, Սևանավանքի վարդապետարանն ավարտելուց հետո սպասավորում էր Արագածոտնի Հովհանավանքում: 1464թ. Մաթեոս գրիչն իր ընդօրինակած «Մաշտոցը» նվիրում է Հովհանավանքին, որի «վայելողների» թվում նշվում է նաև Տեր Գալուստի անունը¹¹¹: Գալուստ վարդապետը հիշվում է նաև 1476թ. նախ՝ Հովհանավանքում գրված «Մաշտոցի» հիշատակարանում, այնուհետև՝ Դանիելի աշակերտների թվում՝ Ղազար գրչի «Մաշտոցի» հիշատակարանում¹¹²:

Դանիելի տաղանդավոր աշակերտներից էր նաև Աբրահամ Սևանցին, որը հոգևոր կրթություն ստանալուց հետո մնացել է Սևանավանքում, զբաղվել գրչությամբ, մանրանկարչությամբ և քանդակագործությամբ: Նա է նկարազարդել 1450 թվականին Դանիելի ստացած «Ճաշոցը»: Նկարազարդելիս՝ երկու նկարի տակ թողել է իր ուսուցչին նվիրված չափածո ներբողներ¹¹³: 1471թ. մանուկ Աբրահամն օգնում է Վարդան եպիսկոպոսին Ավետարան գրելիս, այնուհետև, քսան տարի անց Աբրահամն ինքն է նկարազարդում այդ ձեռագիրը¹¹⁴:

Դանիել րաբունապետի պատվերով Աբրահամ Սևանցին 1486թ. քանդակազարդում է Սևանավանքի Սբ Առաքելոց եկեղեցու հարավային դուռը: Այդ բարձրարժեք արվեստի գործն այսօր ցուցադրվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Դուռն պատկերաքանդակներն ամփոփող շրջանակում նա իր երախտիքն է հայտնում իր ուսուցչին՝ «եռամեծիս», «րաբունապետիս համայն ազգի»¹¹⁵: Նշանավոր գիտնական Գարեգին Հովսեփյանը բարձր է գնահատել Աբրահամ Սևանցու քանդակագործական արվեստը. «...հանձին Աբրահամի ունինք ժե դարու ամենալավ արվեստագետներից մեկը, ժամանակի սովորական մակերևույթից բարձր յուր ընտիր տեսնիկայով և շարադրականությամբ»¹¹⁶:

Աբրահամ Սևանցին նշված դուռն արձանագրության մեջ հիշատակում է Դանիելի ևս մեկ սանի՝ Գրիգորիսի անունը (Գրիգորիսը մեծ րաբունապետի եղբոր տղայի՝ Նսալու որդին էր), որն օգնել է նրան դուռը պատրաստելիս. «եղբար մեր սիրելի, շնորհալք իլի Գրիգորիսի»¹¹⁷: 1504թ. Գրիգորիսն արդեն եպիսկոպոս էր և Դանիել րաբունապետի հետ ղեկավարում էր Սևանի Առաքելոց միաբանությունը: Դրա մասին իր նկարազարդած ձեռագրերից մեկի հիշատակարանում վկայում է միաբանության անդամ Սահակ աբեղան¹¹⁸ (նկ. 37-40):

Սևանում Դանիել վարդապետի մոտ է սովորել նաև Սահակ աբեղան, որն Աբրահամ Սևանցու և Գրիգորիս եպիսկոպոսի նման հմտացել է գրչության և մանրանկարչության մեջ: Ցավոք, մեզ է հասել, նրա ծաղկած ձեռագրերից ընդամենը մեկը, որը նա նկարազարդել է Սևանավանքում՝ Մաքենոցաց վանքի հայտնի գրիչ Ալեքսանոսի խնդրանքով՝ թողնելով հետևյալ հիշատակարանը. «Ծաղկեցաւ... ի Տանս Գեղամայ, ի Սբ ուխտս Սեւան, ընդ հովանեաւ Սբ Առաքելոցս, առաջնորդութեամբ Դանիէլ վարդապետին և Գրիգորիս եպիսկոպոսի, ձեռամբ փծուն և անարժանս սուտանուն աբեղայ, [որ] Սահակ կոչի, ի խնդրո տէր Ալէքսանոս ճգնաւոր աբեղայի, ի թվականիս ԶԾԳ (1504)»¹¹⁹:

¹¹⁰ ՄՄ 3002, էջ 330ա. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, նշվ. աշխ.:

¹¹¹ Ժե դարի հիշ./Բ, էջ 216:

¹¹² Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, էջ 520:

¹¹³ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. իններորդ, էջ 545. հմմտ.՝ Ա. Ղազարոսյան, Դանիել րաբունապետը, էջ 103: Աբրահամ մանրանկարչի նկարազարդած և երուսաղեմում պահվող «Ճաշոցին» իր մի հոդվածում անդրադարձել է արվեստաբան Ա. Գևորգյանը՝ Աբրահամ Սևանցուն նույնացնելով Վայոց ձորի նշանավոր մանրանկարիչ Աբրահամ Բոլորաբերդցու հետ (Ա. Գևորգյան, Նկարիչ և քանդակագործ Աբրահամը, «Լրաբեր» հաս. գիտ., 1988, N 3, էջ 63-70):

¹¹⁴ ՄՄ 8409, էջ 13բ:

¹¹⁵ Կիմրիշխանեցի, էջ 42:

¹¹⁶ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 216:

¹¹⁷ Նույն տեղում:

¹¹⁸ ՄՄ 6648, էջ 124բ:

¹¹⁹ Նույն տեղում:

Սևանավանքում Դանիել րաբունապետին աշակերտած և հետագայում երկրի այլ վանքերում սպասավորած վարդապետների գործունեության և վաստակի ուսումնասիրությանը թույլ է տալիս արձանագրելու, որ Սևանի վարդապետարանն իր արժանի տեղն ունի հայ դպրոցի պատմության մեջ:

**ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ
ԺԵՃԻ ԴԱՐԵՐԻ
ՁԵՌՆԱԳՐԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՐԻՋՆԵՐԸ**

Սևանի անապատում գրչական կյանքը վերագրվում է ապրել ժեՃԻ դդ.¹²⁰: ԺեՃ դարից միայն երկու ձեռագիր է մեզ հասել: Առաջինը «Ժամագիրք-Սաղմոսարանն» է, որը 1664 թ Սբ Առաքելոց միաբանության վանականներին է նվիրել Մխիթար եպիսկոպոսը¹²¹: Երկրորդը «Բառգիրք» է, որն ընդօրինակվել է 1660 թ., Մելքիսեթ և Գրիգոր աբեղաների համար: Այն դասագիրք է, որն աբեղաները ստացել են միասին օգտագործելու համար և որն իրենց մահից հետո պետք է հաճնվեր Սևանի Սբ Առաքելոց վանքին՝ ի պահ¹²²: Այս ձեռագրի ուսումնասիրությանը ցույց է տալիս, որ դրա ընդօրինակմանն ու նկարագրումանը մասնակցել են երկու գրիչներ, որոնց անունները հայտնի չեն:

ԺեՃ դարում Սևանավանքի մատենադարանում նորոգվում են ժամանակի ընթացքում խոնացած և մաշված ձեռագրերը¹²³, նաև դպրոցի սաների համար անհրաժեշտ նոր ձեռագրեր են ձեռք բերվում:

ԺԸ դարում Սևանավանքում ընդօրինակված մեկ ձեռագիր է մեզ հասել: Այն ժողովածու է, որ իր որդու՝ Հովակիմի համար կազմել է Հովհաննես տիրացուն¹²⁴: Ժողովածուում

ամփոփված են Ստեփանոս Սյունեցու, Սարգիս Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գևորգ Երզնկացու, Գրիգոր Տաթևացու մեկնություններն ու քարոզները: Այս ժողովածուն ծառայել է որպես դասագիրք: Հովհաննես գրիչը ձեռագրի ընդօրինակումը սկսել է Սբ Ամենափրկիչ եկեղեցում և ավարտել Սևանա կղզում՝ 1738 թ.: Ժողովածուի հարուստ բովանդակությամբ քարոզներն ու մեկնությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Հովհաննեսն օգտվել է Սևանավանքի մատենադարանում պահվող նյութերից:

ԺԹ դարի սկզբին՝ Սարգիս վարդապետի վանահայրության տարիներին, Սևանավանքում աչքի է ընկնում Ռափայել վարդապետը: Նա ծնվել է 1765 թ. Գանձակում, ուսանել է Հարանց (Տաթևի) մեծ անապատում, ապա կրոնի և գիտության մեջ կատարելագործվելու նպատակով հաստատվել Սևանավանքում: 1793 թ. ձեռնադրվել է աբեղա և «էր վարժապետ կրօնաւորաց»¹²⁵: Ռափայել վարդապետի ամենահայտնի սաները Մխիթար և Աստվածատուր գրիչներն էին:

Իր ուսուցչի նման «գրասէր և աղօթասէր» էր Մխիթար վարդապետ Շամբորեցին¹²⁶: Նկատելով վանքի մատենադարանում Սբ գրքերի պակասը՝ նա ընտիր գաղափար օրինակներ է բերել տալիս և այլ գրիչների հանձնարարում ընդօրինակել դրանք: Ինքն էլ սկսում է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսաց»-ի ընդօրինակությունը, որի պատվիրատուն էր Եփրեմ Ա Ջորագեղցի կաթողիկոսը¹²⁷: Ընդօրինակումը մնացել է անավարտ: Լամբրոնացու այս աշխատանքն ամբողջությամբ ընդօրինակել է Աստվածատուր գրիչը՝ Ռափայել և Մխիթար վարդապետների աշակերտը:

Աստվածատուր Քեալան-Հարությունյան երեւանցին Հովհաննես Քեալան իշխանի որդին էր: Նրա ընդօրինակությամբ միայն այս ձեռագիրն է մեզ հասել: «Մեկնության» ընդօրինակումը գրիչը սկսել է 1815 թ. և ավարտել 1819 թ. Սևանի անապատում: Այս ձեռագրի

¹²⁰ Տես Ա. Ղազարոսյան, Սևանի անապատը ԺեՃ-ԺԹ դարերում, էջ 127–137:

¹²¹ ՄՄ 4106, էջ 196բ:

¹²² ՄՄ 533, էջ 235բ:

¹²³ ՄՄ 7839, էջ 359ա:

¹²⁴ ՄՄ 6958, էջ 270աբ:

¹²⁵ ՄՄ 1650, էջ 60բ. հմմտ.՝ Կիմրիշխանեցի, էջ 71:

¹²⁶ Կիմրիշխանեցի, էջ 71:

¹²⁷ ՄՄ 3760, էջ 100բ:

ընդօրինակման պատմության մանրամասները շարադրված են Աստվածատուրի թողած հիշատակարանում: Եփրեմ կաթողիկոսը Մխիթարին և Աստվածատուրին տրամադրել է «Մեկնության» ընտիր գաղափար օրինակ և թողել: Նրանք գործը հավասարապես բաժանել են իրար մեջ. առաջին չորս կանոնները Մխիթար վարդապետը պետք է արտագրեր, իսկ մնացած չորսը՝ Աստվածատուրը: Մխիթար վարդապետը երկու կանոն գրելուց հետո, անառողջ լինելու պատճառով, կիսատ է թողել ընդօրինակությունը և անավարտ վիճակում ամփոփել մեկ մատյանում¹²⁸: Նա հանձնարարել է իր աշակերտին կատարել կաթողիկոսի ցանկությունը՝ ավարտին հասցնել «Սաղմոսաց մեկնության» ընդօրինակումը: Ավարտելով ընդօրինակումը՝ Աստվածատուրը ձեռագիրը նվիրել է «ի վայելս և ի շահ» Սեանա անապատին, որ «աստ ի Սբ անապատս պահեսցեն միշտ»¹²⁹:

ԺԹ դարի մեզ հայտնի գրիչներից էր Պողոս Սեանցին: Նա Կոտայքի Բարձրաբերի գյուղում ապրող Ղազարի և Աննայի որդին էր, կրթվել էր Սեանի անապատի դպրոցում և զբաղվել գրչությամբ: Պողոս Սեանցու ընդօրինակությամբ մի «Աղոթագիրք» է մեզ հասել, որն արտագրվել է մահտեսի Խաչատուր Թիֆլիսեցու խնդրանքով: Գրիչն այն ընդօրինակել է տպագիր օրինակից, ապա՝ նկարագրել: «Աղոթագիրքն» ավարտվում է. «ի թվին ՌՄԾԵ (1806), ի գղզին Սբ Սեվանայ...»¹³⁰:

Զաքարիա Գուլասպյան-Բեհեռության Տփլիսեցին Սեանավանք է եկել Սարգիս վարդապետի առաջնորդության տարիներին: Վանահոր պատվերով գրել է Սբ Առաքելոց միաբանության պատմությունը՝ դեպքերի շարադրանքը հասցնելով մինչև 1825 թ.: Գուլասպյանի այս աշխատանքը՝ «Վէպ ծովակին Գեղամայ և երջանիկ կղզույն Սեանայ և որոյ բնակչացն», ունի երկու՝ ընդարձակ և համառոտ խմբագրություններ: Այն շատ կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն Սեանի անապատի, այլև, ընդհանրապես, հայ անապատական կյանքի ուսում-

նասիրության պատմության համար: «Վէպի» երեք հիմնական գլուխներում՝ «Յաղագս եկեղեցական պաշտամանց այժմեան եղելոց», «Յաղագս բարուց և վարուց նոցին» և «Յաղագս ապրելաց թէ ուստի՞ ունին», հեղինակը հանգամանորեն ներկայացնում է անապատի տնտեսական և հոգևոր կյանքի բոլոր մանրամասները: Գիրքը բաղկացած է 12 գլխից, ունի համառոտ առաջաբան և վերջաբան: «Վէպի» համառոտ խմբագրությունն ավարտվում է Հայկ նահապետին նվիրված մի բանաստեղծությամբ¹³¹ (նկ. 41, 42):

Սեանավանքի մատենադարանում պահվող ձեռագրերի ցանկը¹³² կազմել է ԺԹ դարի նշանավոր վարդապետ Մանուել Կյումուշխանեցին, որը նաև վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետ Ղազարխեցու պատվերով գրել և 1830 թ. ավարտել է Սեանի անապատի պատմությանը նվիրված իր երկը՝ «Պատմութիւն անցից անցելոց Սեվանայ վանուց» վերտառությամբ: Աշխատության ինքնագիր օրինակը նախկինում պահվել է Սեանավանքի մատենադարանում, իսկ այժմ՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանում¹³³: Հեղինակը կղզու պատմության շարադրանքը սկսում է Սբ Գրիգոր Լուսավորչի կողմից ընծայարանների կառուցումից և հասցնում մինչև 1830 թ.: Այս աշխատությունը տպագրվել է 1871 թ. Վաղարշապատում:

Սեանի միաբանության քսաներկու անդամներից էր նաև «արագագիր և ընթերցասէր» գրիչ Անտոն աբեղա Թիֆլիսեցին, որի ընդօրինակությամբ երեք ձեռագիր է մեզ հասել: Նա պատվիրատուն է նաև 1828 թ. Սեանավանքում՝ գրիչ Հովհան Վանանդեցու ընդօրինակած Կուռնելիոս Ալափիտացու «Մեկնութիւն գրոցն Մովսիսի» գործի, որի ընդօրինակումն ավարտվել է 1829 թ. փետրվարին¹³⁴:

¹³¹ ՄՄ 8074, էջ 20ա–21ա: Բանաստեղծության տների առաջին տողերի սկզբնատառերից կազմվում է «Ձաքարիա» ծայրակապը:

¹³² Կիւմուշխանեցի, էջ 80, 83: Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սեանայ վանքի պատմությունը], էջ 620:

¹³³ ՄՄ 7654:

¹³⁴ ՄՄ 4030, էջ 1աբ:

¹²⁸ ՄՄ 3760:

¹²⁹ ՄՄ 3809, էջ 515բ:

¹³⁰ ՄՄ 2530, էջ 48բ:

Անտոն արքեպիսկոպոսի տարի անց այն նվիրել է Սևանավանքին¹³⁵ (նկ. 43, 44):

Անտոն արքեպիսկոպոսի ընդօրինակությամբ մեզ հասած առաջին ձեռագիրը Հակոբ Կարնեցու (Սիմոնյանի) «Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի» գործն է, որի ընդօրինակումը գրիչն ավարտել է մեկ ամսում՝ սկսելով. «յամի Տեառն 1833 մայիսի 6... ի նոյն վասն յերջանիկ կղզւոյն Սևանու» ու ավարտում. «...1833 յունիսի 12-ի...»¹³⁶: Երկու տարի անց՝ 1835 թ., Անտոն արքեպիսկոպոսի հանձնել է Սևանավանքի մատենադարանին՝ ի պահ¹³⁷: Այդ նույն թվականին նա սկսել է մեկ այլ՝ Գևորգ Սկեռացու «Մեկնութիւն Եսայեայ» ձեռագրի ընդօրինակությունը, որն ավարտելուց հետո նույնպես նվիրել է Սևանի մատենադարանին՝ ի հիշատակ¹³⁸: Անտոն արքեպիսկոպոսի ընդօրինակությամբ վերջին ձեռագիրը, որ հասել է մեզ, 1835 թ. ընդօրինակված Պետրոս Բերդուկյանի «Աղբիւր բացեալ»-ն է: Անտոն Թիֆլիսեցին նաև ձեռագրի ստացողն է: Այս ձեռագիրն «արագագիր» գրիչը սկսել է փետրվարի 20-ին և ավարտել 10 օրում¹³⁹ (նկ. 45, 46): Ինչպես այս, այնպես էլ նախորդ ձեռագրերը Սևանի անապատին նվիրելիս, Անտոն արքեպիսկոպոսի նվիրել է միաբանության անդամներին. «ոչ ի վաճառ հանել և ոչ բաշխել ումեք և ոչ իւրացուցանել, այլ ի հասարակութեան միջի պահել»¹⁴⁰:

Դժվար է ասել, թե քանի այլ ձեռագիր է ընդօրինակել Անտոն արքեպիսկոպոսը, սակայն մի բան ակնհայտ է. նա եղել է հմուտ գրիչ, որին Մանուել Կյուսմուշխանեցին անվանել է «աշալուրջ, խորախորհուրդ, արագագիր, ընթերցասէր»¹⁴¹:

Սևանավանքի միաբաններից էր Սիմեոն Տեր-Հովհաննիսյան-Շաքեցին, որի ընդօրինակությամբ մեզ է հասել վեց ձեռագիր: «Մայր ցուցակ ձեռագրաց»-ի կազմողները նրան հա-

մարել են նաև մատենագիր, որը հեղինակել է աստվածաբանական բնույթի «Յուզ քահանայից» և «Կերակուր քահանայից» գործերը¹⁴²: Վերոնշյալ վեց ձեռագրերից երկուսի գրչության վայրն անհայտ է, սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք ևս գրվել են Սևանավանքում:

Սիմեոն Շաքեցին 1838 թ. ընդօրինակել է «Հարցմունք Աթանասի և Պատասխանիք Կիւրղի Երուսաղէմացւոյ» երկը, որը նվիրված է Սևանի անապատին¹⁴³:

1846 թ. Սևանավանքում Եղիազար Վանանդեցու համար Սիմեոն Շաքեցին ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը», որում ամփոփված է Տաթևացու «Ձմեռան հատորից» ու «Նաև այլոց սրբոց գրոց» գործերից 33 քարոզ¹⁴⁴:

Երբեմն ձեռագրերի հիշատակարաններում միաբանության անդամների թվարկումն էլ բավական է լինում դրանց ընդօրինակման վայրը որոշելու համար: Սիմեոն գրչի մյուս երկուն՝ «Խրատք եւ հոգեշահք քարոզ երանելոյն Բարդուղիմէոսի և Պետրոսի Արագոնացւոյ»¹⁴⁵ և Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Մատթէի»¹⁴⁶ ընդօրինակած ձեռագրերը հենց այդպիսիք են: Դրանք գրված են Սևանավանքի միաբանության անդամների համար, ավելին՝ ընդօրինակող գրիչն էլ այդ միաբանության անդամներից է, ուստի այս ձեռագրերը ևս գրվել են Սևանի անապատում:

Մատենադարանում է պահվում 1841 թ. Սիմեոն Շաքեցու տպագիր օրինակից արտագրած երկու ձեռագիր՝ «Յուզ քահանայից» և «Կերակուր քահանայից», որոնց հեղինակը Պողոս քահանա Կաղզվանցին է: Վերջինս այս գործերը գրել է. «ազնվազարմ Միրիճանեան Մկրտչի» պատվերով: Պողոս Կաղզվանցին նշում է, որ «Յուզ քահանայից»-ը գրելիս օգտվել է Հին և Նոր Կտակարաններից, Գրի-

¹³⁵ ՄՄ 4030, էջ 1բ:

¹³⁶ ՄՄ 4031, էջ 424:

¹³⁷ Նույն տեղում:

¹³⁸ ՄՄ 3761, էջ 3ա:

¹³⁹ ՄՄ 4016, էջ 1ա, 75բ:

¹⁴⁰ ՄՄ 4016, էջ 1բ:

¹⁴¹ Կիւմիւշխանեցի, էջ 88:

¹⁴² ՄՄ 3558, 3559: Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյրոնյան, Փ. Անթաթյան (այսուհետ՝ Յուզակ ձեռագրաց ՄՄ/Ա), Երևան, 1965, սյուն 1040:

¹⁴³ ՄՄ 3398, էջ 1ա:

¹⁴⁴ ՄՄ 5703, էջ 1ա:

¹⁴⁵ ՄՄ 3164, էջ 1ա, 163բ:

¹⁴⁶ ՄՄ 9728, էջ 175ա-180բ:

գոր Լուսավորչի, Ներսես Շնորհալու, Հովհաննես Երզնկացու, Գրիգոր Տաթևացու աշխատություններից¹⁴⁷ (նկ. 47):

«Կերակուր քահանայիցը» ավելի ստվարածավալ է, ունի 26 գլուխ և համապատասխան ցանկ: Ավարտելով ընդօրինակությունը՝ գրիչը ձեռագրի պահպանակի վրա հիշատակարան է թողել. «Արդահանեալք գրոց Կերակուր քահանայից աշխատութեամբ մահտեսի Սիմէոնէ Տէր-Յօհանէսեան Շաքեցոյ, ի միաբանութենէ Սբ անապատին Սեանայ»¹⁴⁸:

Սբ էջմիածնի միաբան Հովհաննես եպիսկոպոս Շահաթունյանցը Սեանավանք է այցելել 1840-ական թթ.՝ Հովհաննես Անտոնյան Տփլիսեցու վանահայրության տարիներին, երբ ամբողջացնում էր իր «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» տեղագրական աշխատությունը: Մեծապես օգտվելով Զաքարիա Գուլասպանի՝ վանքում պահվող Սեանավանքին նվիրված ձեռագրից՝ իր ուսումնասիրության մեջ հատկապես անդրադարձել է միաբանության ներքին կյանքին: «Ստորագրութիւնից» պարզվում է, որ վանքում դեռևս շարունակում էին առաջնորդվել Բարսեղ Կեսարացու համակցության կանոններով¹⁴⁹:

Պողոս Պետրոսյան Կոստանդնուպոլսեցին Սեանավանքում 1850թ. գրել է «Ստորագրութիւն Սեանայ» մենագրությունը, որը բաղկացած է 16 գլխից՝ «Կանխազեկոյց տեղեկութիւնք», «Ստորագրութիւն Սեանայ», «Զինչ էր առ հնովք այս կղզի, և ուստի՞ անունս Սեան» և այլն, Սեանավանքի պատմության շարադրանքը հասցնելով մինչև Սարգիս վարդապետի վանահայրությունը (Երսղմ 3578)¹⁵⁰:

Սեանավանքում Հարություն Մարճանյանց արեղան ընդօրինակել է մի ձեռագիր՝ «Աւարտեցաւ Կանոնգիրքս ի փառս... ի յօգուտ մանկանց եկեղեցոյս, Ասքանազեան

ազգին, յամի Տեառն 1855»¹⁵¹: Հարություն արեղան այն նվիրել է իր հոգևոր եղբայրներին՝ «Ի վայելս ընդհանուր միաբանից անապատին Սեանայ»¹⁵²: Կանոնագիրքը ծառայել է նաև որպես դասագիրք. «յօգուտ մանկանց եկեղեցոյս»: Այդ նպատակով է նաև Հարություն արեղան արտագրել և ժողովածուում տեղադրել Սարգիս քահանայի «Յաղագս առ շահի և մասնաւոր իրաց» գործը¹⁵³:

Կարապետ Բլբուլյանցը, որը հետագայում փոխարինել է Մկրտիչ վանահորը, կատարել է զգալի շինարարական աշխատանքներ՝ միաժամանակ զբաղվել գրչությամբ: Նրա ընդօրինակությամբ մեզ է հասել մի ձեռագիր՝ «Վարք և պատմութիւն Մխիթարայ Գոշի»¹⁵⁴: Ձեռագրի ընդօրինակման ժամանակն ու տեղն անհայտ են. պետք է ենթադրել, որ այն գրվել է Սեանավանքում մինչև ԺԹ դարի 80-ական թթ.:

ԺԹ դարի սկզբից մեզ է հասել նաև մի ձեռագիր, որի միայն ժամանակն ու տեղն է հայտնի: Այն «Քարոզգիրք» է՝ «Հաւաքեալ ի զանազան գրոց յումեմնէ բանասիրէ ի միաբանութենէ վանոց Սրբոյն Սեանայ, որ ի մէջ կղզոյն Գեղամայ»: Ձեռագրի հիշատակարանում նշված է, որ «Քարոզգրքի» կազմողը գրիչն է, որն իր նյութերը հավաքել է Սեանավանքի մատենադարանում պահվող մատյաններից և ինքն էլ խմբագրել: Ավարտելով ձեռագրի հիշատակարանը՝ գրիչն այն ամփոփում է. «Թուին 1801 հոկտեմբերի սկսեալ» խոսքերով¹⁵⁵ ցավոք չնշելով իր ով լինելը, ինչպես նաև՝ մատյանի ավարտման ժամանակը:

1860-ական թթ. Սեանի անապատ է գալիս Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, որը շրջում էր Նոր Բայազետ գավառի ողջ տարածքով և նյութեր հավաքում իր ապագա «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ» խորագրով աշխատության համար: Նրա վկայությամբ 1865թ. Սեանավանքում կային 20 վարդա-

¹⁴⁷ ՄՄ 3558, էջ 2ա:

¹⁴⁸ ՄՄ 3559, էջ 2ա:

¹⁴⁹ **Շահխաթունեանց**, էջ 136:

¹⁵⁰ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. տասներորդ, կազմեց՝ **Ն. արք. Պողարեան**, Երուսաղէմ, 1990, էջ 604:

¹⁵¹ ՄՄ 4028, էջ 138բ:

¹⁵² Նույն տեղում:

¹⁵³ Նույն տեղում, 139բ:

¹⁵⁴ ՄՄ 8147, էջ 8բ:

¹⁵⁵ ՄՄ 5574, էջ 2ա:

պետ, սարկավագ և դպիր, որոնք. «միայն գիտէին հայերէն կարգալ և գրել Բ կամ Գ կարգի աշակերտաց չափով՝ այն է միադասեան դպրոցի ուսումն, և այն ոչ կանոնաւոր»¹⁵⁶։ Նա կարեւոր է համարում Մաշտոց Եղիվարդեցի, Ստեփանոս Գ և Սարգիս Ա հայրապետների օրինակով վանական դպրոց բացելն ու ողջ գավառի համար քահանաներ պատրաստելը¹⁵⁷։ Մեսրոպ Մաշտոցանցը հատուկ զեկուցագրով դիմում է Գևորգ Դ կաթողիկոսին՝ Սևանավանքում դպրոց բացելու, կղզու անապատական ավանդույթները վերականգնելու համար։ Վեհափառի հատուկ հրամանով Սևանավանքում 1869թ. սեպտեմբերի 18-ին դպրոց է բացվում։ Նորաբաց դպրոցում դասավանդելու համար կաթողիկոսը Սբ Էջմիածնից Սևանավանք է ուղարկում Հովակիմ սարկավագին, Եղիա վարդապետ Զալալյանցին և Հովակիմ վարդապետ Ղամբեքյանցին։ Այս դպրոցում ուսուցանում էին կրոն, հայոց լեզու, պատմություն և երգեցողություն։ Դպրոցն իր գործունեությունը շարունակում է մինչև 1880թ.¹⁵⁸։

1895թ. Սևանավանքի վանահայր Սարգիս արք. Փիլոյանը գրում է «Սևանի վանքի պատմություն»-ը՝ այն հասցնելով մինչև իր օրերը¹⁵⁹։ Սակայն, անցել էին այն ժամանակները, երբ, ինչպես գրում է Սարգիս եպիսկոպոս Զալալյանցը, «...այս վանքն է մինն ի հռչակաւոր մենաստանաց Հայոց ծաղկեալ յովթն և յինն դարուն, պերճացեալ փրկիսոփայական և աստուածաբանական մակացութեամբ և լցեալ միանգամայն հրեշտակական ժուժկալութեամբ, յորում ծաղկեցան ի զանազան ժամանակաւ արքանուանիք և ականաւորք»¹⁶⁰։

ՍԵՎԱՆԻ ԱՆԱՊԱՏԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Ժամանակի ընթացքում վանքերին և վարդապետարաններին կից գրչության կենտրոններում ձեռագրերը ստվարանում և սկսում էին պահվել «յամբարանոցս մատենից»¹⁶¹ (մատյանների ամբարներում), որոնք կոչվում էին նաև գրատուն, գրանոց, արկեղք գրոց, գանձարան, դիվան, նշխարանոց, իսկ ավելի ուշ՝ մատենադարան¹⁶²։

«Ամբարանոց մատենից» է ունեցել նաև Սևանի անապատը։ Այստեղ պահվում էին ծիսական մատյաններ, անապատականների «Վարք սրբոցներ», ընդհանրական հայրերի գործերի թարգմանություններ և այլ ձեռագրեր։

Սևանավանքի միաբանությունն երկարատև գոյություն ժամանակահատվածում մերթ դանդաղել, մերթ ակտիվացել է անապատի գրչական և դպրական կյանքը, սակայն այդ ամբողջ ընթացքում հարստացել է վանքի մատենադարանը։

Սևանի մատենադարանի՝ հնագույններից մեկը լինելու մասին պահպանվել է մի ուշագրավ վկայություն։ Պատմահայր Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ այստեղ է պահվել Մեսրոպ Մաշտոցի հրամանով թարգմանված Եվսեբիոս Կեսարացու «Պատմություն եկեղեցական»-ը. «...Եկլէսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացույ, զոր ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու։ Խնդիր արասցես ի Գեղարքունի, ի գաւառին Սիւնեաց...»¹⁶³։ Այս վկայության հիմամբ՝ ուսումնասիրողներն այդ գործի պահպանման վայրը համարում են Սևանի ծովապատ, ապահով անապատը¹⁶⁴։

¹⁵⁶ Սմբատեանց, էջ 126։

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 127։

¹⁵⁸ Գիտ եպս. [Ղազարեան], Սեւանայ վանքը, «Հանդէս ամսօրեայ», 1929, N 5, սիւն 300։ Սարգիս եպս. [Փիլոյեան], [Սևանայ վանքի պատմությունը], էջ 775։

¹⁵⁹ Սարգիս եպս. [Փիլոյեան], նշվ. աշխ.։

¹⁶⁰ Սարգիս արք. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, 1858, էջ 109։

¹⁶¹ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց (այսուհետ՝ Խորենացի), աշխատութեամբ՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 22։

¹⁶² Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Ա, Երևան, 1964, էջ 44։

¹⁶³ Խորենացի, էջ 120։

¹⁶⁴ Ղուկաս վրդ. Ինճիճեան, Հնախօսութիւն Հայաստանեայց աշխարհի, հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 96։ Ե. Քասունի, Պատմութիւն հայ հին դաստիարակութեան, Պէյրութ, 1959, էջ 188։

Թ դարում՝ վանքի վանահայր Մաշտոց եղիվարդեցու առաջնորդության տարիներին, Սևանի մատենադարանը հարստացել է բազմաթիվ նոր աշխատություններով: Ստեփանոս Ասողիկ պատմիչը հաղորդում է, որ Մաշտոց վարդապետը գնել է. «...զբազմութիւն գրոց սրբոց՝ զի լուսաւոր եղիցին աչք ոգւոց ի տեսութիւն ճանապարհին Տեառն...»¹⁶⁵: Սևանավանքի մատենադարանը հարստանում էր նաև միաբանության անդամների ընդօրինակություններով:

Վանքի մատենադարանը նոր նյութ-միավորներով հարստացվել է նաև հետագա դարերում: Եթե ավանդական կրթության համար բավարար էին Տաթևի վարդապետարանի գրապահոցից Սևանավանքի մատենադարան տեղափոխված ձեռագիր ձեռնարկները, ապա, մասնավորապես, ԺԵ դարում Դանիել րաբունապետի «Արևելեան տան վարդապետարանում» կատարելագործված ծրագրով ուսուցումն իրականացնելու համար նոր նյութեր պարունակող մատյաններ էին պետք, ուստի և՛ Դանիելը, և՛ նրա աշակերտները նոր ձեռագրեր էին ընդօրինակում:

Սևանավանքի մատենադարանից սակավ ձեռագրեր են մեզ հասել, և դրանց մեծ մասն էլ ուշ ԺԵ դարից հետո կատարված ընդօրինակություններ են: Վաստակաշատ ձեռագրագետ Օնիկ Եգանյանի ճշգրտմամբ՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանում Սևանավանքից 121 ձեռագիր է պահվում¹⁶⁶:

Որոշ ձեռագրերում կան Սևանավանքին նվիրելու մասին վկայություններ: Մասնավորապես, պահպանվել են Սևանավանքի միաբան Անդրիասի եղբայր Թամազի՝ Աբրահամ վարդապետին ձեռագիր նվիրելու մասին և միաբան Մեսրոպ վարդապետի՝ Սևանավանքին ձեռագիր Ավետարան նվիրելու մասին հիշատակությունները¹⁶⁷:

ԺԵ դարում կորստից փրկվել և Սևանավանքի մատենադարան է վերադարձվել եր-

կու ձեռագիր, մեկը՝ 1632 թ. վանքում պահվող «Գանձարանն» է, որը Բջնիում նորոգել է տվել վանքի միաբան Հովհաննես Շոռոթեցին, մյուսը ժողովածու է, որը Սևանավանքում Անդրեասն է նորոգել¹⁶⁸: Սևանի անապատի մատենադարանում տարբեր գրչակենտրոններում ընդօրինակված ԺԵ դարի նաև այլ ձեռագրեր են եղել, սակայն դրանց մեծ մասի՝ Սևանավանք բերվելու ժամանակը հայտնի չէ:

ԺԸ դարում (ստույգ թվականը հայտնի չէ) Սևանավանք է բերվում մի ժամագիրք, որը պատկանում էր Տեր Մարտիրոսին, 1716 թ. միաբան Տեր Մխիթարն իր ծնողներին՝ Ղազարին և Մարգարիտին պատկանող Հայսմավուրքը նվիրում է Մխիթար վարդապետին¹⁶⁹: Այդ ժամանակ վանքի սեփականություն է դառնում ևս չորս ձեռագիր¹⁷⁰:

Մատենադարանում անհամեմատ մեծ է ԺԹ դարում գրված և Սևանավանքին նվիրաբերված ձեռագրերի թիվը: Այսպես, Դավիթ եպիսկոպոսը 1806–1807 թթ. չորս ձեռագիր է նվիրել Սևանավանքի մատենադարանին¹⁷¹: Ձեռագրեր են նվիրել Սբ Էջմիածնի միաբաններ Մկրտիչ Թոխաթեցին և Բարսեղ Էջմիածնեցին¹⁷²: ԺԹ դարի 30-ական թթ. մեծ նվիրատվություն է կատարել Մանուել Կյումուշխանեցին՝ 8 ձեռագիր և 120 տպագիր գիրք¹⁷³: Այս տարիներին Սևանավանքի մատենադարանը հարստացել է նաև Զաքարիա Գուլասպյան-Բեհբուջյան Տփիսիսեցու, Մեսրոպ Սմբատյանցի, Անտոն Տփիսիսեցու, Ստեփանոս Լիմեցու և այլ երախտավոր այրերի կողմից արված նվիրատվություններով¹⁷⁴:

Սևանավանքում շատ ավելի մեծ թվով ձեռագրեր, հատկապես վաղ ընդօրինակություններ կլինեին, եթե դրանց մի զգալի մասը դարերի ընթացքում չոչնչացվեր երկիր ներսուծած թշնամիների ձեռքով: Բազմաթիվ ձեռագրերի կորստյան պատճառ էր նաև պահպանության

¹⁶⁵ Ասողիկ, էջ 160:

¹⁶⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Խ.Ա. կազմեցին՝ Օ.Եգանյան, Ա.Ջեյթունյան, Փ.Անթաթյան (այսուհետ՝ Մայր ցուցակ ՄՄ/Ա), Երևան, 1984, էջ ԺԷ-ԺԸ:

¹⁶⁷ ՄՄ 3482, պիպ. Գ: ՄՄ 4025, էջ 2բ:

¹⁶⁸ ՄՄ 7839, էջ 359ա. հմմտ.՝ ՄՄ 3778:

¹⁶⁹ ՄՄ 3474, պիպ. Ա: ՄՄ 3810, էջ 521ա:

¹⁷⁰ ՄՄ 3994, 4106, 3473, 3779:

¹⁷¹ ՄՄ 3487, 4071, 4034, 4001:

¹⁷² ՄՄ 4029, 4000:

¹⁷³ ՄՄ 3766, 4002, 4027, 4036, 4039, 3638, 4411, 4026:

¹⁷⁴ ՄՄ 4109, 4276, 3637, 4040:

համար կղզում բարենպաստ պայմանների բացակայությունը: Թեև տարբեր միջոցներ էին գործադրվում ձեռագրերի պահպանությունն ապահովելու համար, այդուամենայնիվ, մատյաններից շատերն անմխիթար վիճակում էին: Մագաղաթե և թղթե ձեռագիր մատյանները խոնավությունից հաճախ խոլանում և քայքայվում էին: Սակայն երախտիքի, շնորհակալության արժանի բանիմաց և հոգատար միաբանների ձեռքով (Հովհաննես Շոռոթեցի, Անդրեաս և ուրիշներ) շատ ձեռագրեր փրկվել և վերադարձվել են մատենադարան: Ցավոք, թշնամու անթիվ հարձակումներից հրաշքով փրկված Սեանի մատենադարանի մեծ թվով հազվագյուտ ձեռագրեր անդառնալի կորսվել են նաև երբեմն սքեմն անարժանորեն կրող որոշ հոգևորականների անպատասխանատու վերաբերմունքի հետևանքով¹⁷⁵:

Սեանավանքում պահվող ձեռագրերի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է Ժողարում: 1833 թ. Զաքարիա Գուլասպյան Տիխիսեցին այստեղ պահվող ձեռագրերի հիշատակարաններն արտագրել է տվել և մեկ մատյանում ամփոփել 33 հիշատակարան: Ցավոք, այս ժողովածուի ճակատագիրն անհայտ է¹⁷⁶:

1830 թ., Մ. Կյումուշխանեցու հանձնարարությամբ, Անտոն աբեղան կազմել է Սեանավանքում պահվող 47 ձեռագրերի ցուցակը: Այնուհետև կազմվել են 1870 թ. Եղիա Զալալյանցի՝ Սեանավանքի 107 ձեռագրերի ցուցակը (ճակատագիրն անհայտ է), 1892 թ. Նիկողայոս Մառի՝ 110, Սահակ Ամատունու՝ 112, Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանի՝ 115 ձեռագրերի ցուցակները¹⁷⁷:

Սեանավանքում անապատական կյանքի ավարտից հետո, տեղի մատենադարանի անկայուն և անբարենպաստ պայմանների պատճառով Մայր Աթոռը ձեռագրերը և տպագիր գրականության մեծ մասը տեղափոխել է Սբ Էջմիածնի մատենադարան: Կաթողիկոսական դիվանի 1911 թ. հուլիսի 12-ի N 1739 գրությանմբ մատենադարանապետ Մեսրոպ Մագիստրոս արք. Տեր-Մովսիսյանը գնում է անապատ և տեղում հաշվառում 115 ձեռագիր: Նույն թվականի նոյեմբերի 15-ին անապատի առաջնորդ Սարգիս Փիլոյանը մատյաններն ուղարկում է Մայր Աթոռ՝ վանքում թողնելով 19 ձեռագիր (115-ից): Մեսրոպ Մագիստրոսի ցուցակագրության ժամանակ վանքի գրադարանից անհետացել է երկու ձեռագիր՝ Ամիրզովլաթ Ամասիացու «Բժշկարանը» և «Քաղաածք ապաշխարութեան»-ը: Վանքում մնացած 10 ձեռագրերից 9-ը (բացի «Կանոնագիրք առաքելոց և հայրապետաց»-ից) և այլ ձեռագրեր 1930 թ. հանձնվել են Երևանի պատմության թանգարանին, այստեղից էլ 1938 թ.՝ Մաշտոցյան Մատենադարանին¹⁷⁸:

Մաշտոցյան Մատենադարանում են պահվում ևս 8 ձեռագրեր, որոնք ստացվել են Սեանավանքից, սակայն վերոհիշյալ ցուցակներում դրանք չեն արձանագրվել¹⁷⁹:

Ստորև, ժամանակագրական կարգով, ներկայացվում են նախ Սեանավանքի միաբանների ընդօրինակած և նկարագրագրած, այնուհետ՝ վանքի գրատան ձեռագրերի ցուցակները:

¹⁷⁵ Կիսիլշխանեցի, էջ 65:

¹⁷⁶ Սմբատեանց, էջ 394:

¹⁷⁷ Մայր ցուցակ ՄՄ/Ա, էջ ԺԷ:

¹⁷⁸ Ցուցակ ձեռագրաց ՄՄ/Ա, սյուն 78–79:

¹⁷⁹ Մայր ցուցակ ՄՄ/Ա, էջ ԺԷ:

ՑՈՒՑԱԿ ՍԵՎԱՆԱՎԱՆՔՈՒՄ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ ԵՎ ՆԿԱՐԱԶԱՐԳՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ

Հ/հ	1	2	3	4	5	6	7
	Ձեռագրի արդի համար	Նյութ	Գիր	Բովանդակություն	Ժամկ	Գրչության վայր	Մասնակից անձինք
1	ՄՄ 970	թուղթ	բլրոճի	Մաշտոց, Վարդ-հիշատակարան	Ժ2 դար 893 թ. (գրի. օր.)	-	Գրիչ՝ Ստեփանոս
2	Երտմ 3230	թուղթ	բլրոճի	Ճաշոց	1450 թ.	Սբ Էջմիածին, Բիւրական	Գրիչ՝ Գրիգոր, ծարկող՝ Աբրահամ [Սեանցի], ստացող՝ Դանիել արքյ ի տանէն Գեղամա ի Սեվան կղզոյ
3	ՄՄ 1301	թուղթ	բլրոճի	Գրիգորի Տաթևացոյ Քարոսմոյ մեկնութիւն Սբ Աւետարանին Մատթէոսի	1451 թ.	Սեան, ընդ հովանեաւ Սբ Աստուածածնի և Սբ Ստաբլոց, Սբ Կարապետի և Սբ Լուսաւորչի	Գրիչ՝ Դանիել արքյ
4	ՄՄ 8409	մզոթ	բլրոճի	Աւետարան	1471 թ. ծարկ.՝ 1498 թ.	Աղջոց վանք. Սեանավանք	Գրիչ՝ Վարդան եպս., Ովաննէս արքյ, ծարկող՝ Աբրահամ, ստացող՝ Դանիել վրդ. Սեանցի
5	ՄՄ 1611	թուղթ	բլրոճի	Շարակնոց (Բ)	ԺԴ դ. 1534 թ.	Սեան (՝)	Նորոգող՝ Գրիգոր, ստացող՝ Սահակ սրկ.
6	ՄՄ 4106	թուղթ	բլրոճի	Ժամագիրք, Սաղմոսարան, Տօնացոյց	1644-ից առաջ	Սեան (՝)	Ստացող՝ Մխիթար եպս.
7	ՄՄ 533	թուղթ	բլրոճի	Բաղգիրք	1660 թ.	Սեան	Ստացողներ՝ Մէլքիսէ եւ Գրիգոր արքյ-ք
8	BL 14839 (46) (Բրիտ. գրադ.)	մզոթ	բլրոճի	Աւետարան	1669 թ.	Նորաշինիկ գիւղ, Սեանավանք	Գրիչ՝ Ալեքսան քիչ, կազմողներ՝ Մատթէոս և Եփրեմ վրդ-ք, Ստացող՝ Յունան՝ որդի Լուկաս հավատաւորի
9	ՄՄ 6958	թուղթ	Նոտրճի, բլրոճի	Ժողովածոյ	1738 թ.	Սբ Ամենափրկիչ, «աարտն՝ ի Սբ Սեվան գոլգին ընդ հովանեաւ Սրբոյիոյ Աստուածածնին և Սբ Կարապետին և Սրբոց Երկուսասան առաքելոցն և Սրբոյ Սարգսի զօրավարին»	Գրիչ՝ Յովհաննէս, ստացող՝ Յովագիմ
10	ՄՄ 2530	թուղթ	բլրոճի, նոտրճի	Արթագիրք	1806 թ.	Սեան	Գրիչ՝ Պօրոս Սեանցի, ստացող՝ Խաչատուր Թիփիգեցի
11	ՄՄ 3760	թուղթ	նոտրճի	Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն Սաղմոսաց	1814 թ.	Սեան	Գրիչ՝ Մխիթար վրդ., ստացող՝ Եփրեմ կթղ.
12	ՄՄ 3809	թուղթ	նոտրճի	Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն Սաղմոսաց	1815–1819 թթ.	Սեան	Գրիչ՝ Աստուածատուր Յօհաննիսեան, ստացող՝ Եփրեմ կթղ.
13	ՄՄ 8074	թուղթ	նոտրճի	Զաքարիա Գուլասպեան Բիւրոյնանց, Վէպ Ծովակին Գեղամայ եւ կղզոյն Սեանայ	1825 թ.	Սեան	Գրիչ՝ Ինդիկակը

14	ՄՄ 10452	թուղթ	շղագիր	Հաքարիա վրդ. Գուլասպեան Բեհբուդեանց Տիկիսեցի, Վեպ Սեանայ կղզւոյն	1825 թ.	Սեան	Գրիչ՝ հեղինակը
15	ՄՄ ԿԴ, թղթ. 44, վալ. 355	թուղթ	շղագիր	Հաքարիա վրդ. Գուլասպեան- Բեհբուդեանց, Վեպ ծովակին Գեղամայ եւ երջանիկ կղզւոյն Սեանայ եւ Նորա քնակացն	1825 թ.	Սեան	Գրիչ՝ հեղինակը
16	ՄՄ 4030	թուղթ	նոտրգիր	Կունենիոս Ավափտայ, Մեկն. գրոցն Մովսիսի	1828-1829 թթ.	Սեան	Գրիչ՝ Յովհան Միրզոյեան Վանանդեցի, ստացող՝ Անտոն արք. Թիֆլիզեցի
17	ՄՄ 7554	թուղթ	շղագիր	Մանուէլ Կիւփիշեանցի, Պատմութիւն անցից անցեցը Սելանայ վանոց	1830 թ.	Սեան	Գրիչ՝ հեղինակը
18	ՄՄ 3761	թուղթ	նոտրգիր	Գէորգ Ավետադի, Մեկնութիւն Եսայեայ	1833 թ.	Սեան	Գրիչ, ստացող՝ Անտոն արքայ
19	ՄՄ 4031	թուղթ	նոտրգիր	Յակոբ Կաշնեցի Սիմոնեան, Մեկնութիւն Երզնգ երգոյն Սողոմոնի	1833 թ.	Սեան	Գրիչ, ստացող՝ Անտոն Թիֆլիզեցի
20	ՄՄ 4016	թուղթ	շղագիր	Պետրոս Բերթումեան, Աղբիւր բացեալ	1835 թ.	Սեան	Գրիչ, ստացող՝ Անտոն Թիֆլիզեցի
21	ՄՄ 9728	թուղթ	շղագիր	Յովհան Ոսկերեան, Մեկնութիւն Մատթէի	1835-ից առաջ	Սեան (')	Գրիչ՝ Սիմէոն Տէր-Յովհաննէսեան
22	ՄՄ 3164	թուղթ	նոտրգիր	Քարոզգիրք. Խրատք եւ իռեշանք քարոզ երանելոյն Բարդուղիմէոսի և Պետրոսի Արագծացոյ	1838 թ.	Սեան (')	Գրիչ՝ Սիմէոն Տէր-Յովհաննէսեան Շաքեցի, ստացող՝ Տէր Սարգիս եւ Տէր Յարութիւն Տէր-Յովհաննէսեան
37. ԽԱՉՔԱՐ. քիվին, 1 տող.

ՄԲ ԽԱՉԼՍՂ ԲԼԱԲԵՂԽԼԱԽՍՂ Թ...:

38. ԽԱՉՔԱՐ. հիմնախաչի ստորին երկու անկյուններում, 1 տող.



ԹՎԻՆՂ ՋԹ (1460)

39. ԽԱՉՔԱՐ. գավթում, հիմնախաչի վերևում, 1 տող.

ՄԲ ԽԱՉՍՂ ԲԱՐԼԵՂԽԱԼԲՍ
ԽԱԼԹՈՒՆԻՆՆ:

Ծանոթ. Թվագրելի է ժՁ դարով:

40. ԽԱՉՔԱՐ. գավթում, քիվին, 1 տող.

ՄԲՂ ԽԱՉՂՍՂ ՄԱՐՈՒԹԻՆՆ:

Ծանոթ. Թվագրելի է ժՁ դարով:

41. ԽԱՉՔԱՐ. գավթում, քիվին, 1 տող.

ՄԲ ԽԱՉՂՍՂ ՉԱՏ...:

Ծանոթ. Թվագրելի է ժՁ դարով:

42. ԽԱՉՔԱՐ. գավթում, հիմնախաչի վերին անկյունում, 1 տող.


ԼԹՎԻՆՂ ՌԿԴ (1615):

43. ԽԱՉՔԱՐ. գավթում, հիմնախաչի տակ, 1 տող.

...ԳԻՐԳՈՂԻ

Ծանոթ. Թերևս, կազմողի անունն է :


44. ԽԱՉՔԱՐ. գավթում, նեղ նիստին, 3 տող.



ԵՍ՝ ՍՈՒԼԵՂԱԷԼ, / ԾԱՌԱՎՅՂ ԱՅ,
Կ/ԱՆԳՆԵՑԻ:

(լուս. և գրչ.՝ Արսեն Հարությունյանի)


45. ՏԱՊԱՆԱՔԱՐ. բեկոր, 3 տող.



ՂԱՅՍՂ Է ՏԱՊԱՆ ԱԲԵՏԻՍԻՆ Ի
ԲԱՐԵՂԱՅՈՍ Թ ...Ե...Ը...

Ծանոթ. Տապանագիրը ձախից կիսատ է, անունը պայմանական է վերծանված:

46. ՏԱՊԱՆԱՔԱՐ. մարմարից, Սբ Առաքելոց եկեղեցու գավթում, քառատված, գիրը՝ վնասված, 17 տող.




ԸՆԴ ԱՅՍ ՏԱՊԱՆԱԲ ԶՈՒՂ/ՍՈՎ
ՆՈՐՈԳՉԻՆ,
ՅՂԱԲԵՐԺՂ/ԱՐԾԱՆՕԲ Ի ԽԱՂԱՂ
ՉԱՂԱԳՉԻՆ,
ՈՍԿԵՐԸ ԻԾԽԱՆԻՆՂ/ԲԱՐՍՂԻ
ԱՐԾՂՐՈՒՆԻՈՅՂ,
/ ՈՐ ՏԱՆՍ ԶԱՅԿԱՉԱՆՅՂ/ԷՐ ՃՐԱՂԳ
ԼՈՒՍՈՅ,
ՈՐ ԵՂ/ՅԵՂ ՉԲՐՏՈՂԻՆՍ ՓՈԽՂ/ԱՆԱԿ
ԱՐԵԱՆ,
ԴԱՌԱՆՂ/ԳԵԱՑ ԱՆՈՒՆ ԻԲՐ Չ/ԿԱՐԴԱՆ,
ԹՈՂԼՈՎ Չ/ՅԻՇԱՏԱԿ ԱՆՉԱՂՍԱՂ/
ԲԱՐԵԱՑ,
ՓՈԽՂԵՑԱԲՂ/ԱՍՏԻ Ի ԿԵԱՂՆՍ ԱՆԱՆՅՂ,
/ ԾԱԲ Ի 1 ՕՐԼ ՅՈՒՆԻՍԻ / 1805 ԱՍԻ,
ԿՂԱԽՃԱՆԵՑԱԲ Ի ...Ղ ՕՐՆ ԶՈՒՆԻՍԻ 1875
ԱՍԻ:

Հրապ. Սմբատեանց 1895, 124.
Լալայեան 1908, 84:

Ծանոթ. Վիմագրի առաջին հրատարակիչ Ե. Լալայանի հաղորդմամբ՝ տապանաքարը Սևանավանք է բերվել Բջնիի մոտակայքից:

Նա տապանաքարն ամբողջական է տեսել, ուստի բնագրում վերականգնումներն արված են ըստ նախորդ հրապարակման:

47. ՄԱՐՄԱՐՅԱ ՍԱԼԱՔԱՐ. ներկայում ագուցված է Վազգենյան հոգևոր դպրանոցի երկրորդ հարկի ճեմասրահում, 7 տող.



ԿԱՌՈՒՑԱԲ ԸՆԾԱՅԱՐԱՆՍ ՇՆՈՐՀՕՔ
ՓՐԿՉԻ / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ, /
ՎԱՆԱՅԱՅՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
ՍԱՐԳՍԻ, / ԱՐԴԵԱՄԲԸ ՇՈՒՇԵՑԻ
ՂՈՒԿԱՍԵԱՆՑ ԱԻԵՏԻՍԻ՝ / ՍՈՒՐԲ
ՄԵՆԱՍՏԱՆԻՍ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԻ, /
ՈՐՈՅ ՅԻՇԱՏԱԿՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
ԼԻՑԻ, / 1897 – ՌՅԻԶ:

Ծանոթ. Վիմագիրն առաջին հայացքից նման է դպրանոցից հայտնի մեկ այլ արձանագրության (Հ^թ 57), որը չի պահպանվել: Կարծում ենք՝ շինարարական երկու վիմագիր է կազմված եղել, քանի որ կորած համարվող վիմագիրն ավելի սեղմ ու փոքր-ինչ տարբեր է: (լուս. և գրչ.՝ Արսեն Հարությունյանի)

48. ԽԱՉՔԱՐ. Վազգենյան հոգևոր դպրանոցի բակում. հորինվածքի կենտրոնում ժ-ժԱ դդ. խաչքարային մշակույթին բնորոշ հիմնախաչն է կից փարթամ արմավազարդով՝ երիզված պարզունակ գալարազարդով: Կոթողի թիկունքին՝ աղոթողի (օրանտի) դիրքով պատկերվածը, հավանաբար, այն անձն է, որի հիշատակին կանգնեցվել է խաչքարը: Քանդակին կից պահպանվել է նաև նրա անվանակիր հիշատակագրությունը (նկ. 48ա-դ).

ՍԱ/ՅԱԿ՝ԾԱ/Ռ/ԱՅ/ԱՅ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԶԵՆ ՊԱՀՊԱՆՎԵԼ

49. ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. «Արևմտեան ճակատի հարաւային սեան վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը, որ այժմ սուղի տակն է մնացել».

Յամի Ռ-երորդի ճԳԺ-աներորդի (1664), շնորհօք Աստուծոյ, մեք՝ հարագատ եղբարք խօճայ Սուլխանս և Չալս, ի քաղաքէն Տփխեաց, ասքէն Չիթաղենց, որդիք Թաղայի, եկեալ ի սուրբ անապատս ի Սևան ծովապատ, զոր ի բազում ժամանակաց մեր կամաւ խոստացանք մեր ապրանաց շահն Ժ-անորդ տանք Սեվանայ, ամէն. զոր շինեցաք Սուրբ Աստուածածնի եկեղեցիս և տուաք յիշատակ մի արծաթի կանթեղ, խաչ, բուրվառ, սկի, հոգոյն հօր մերոյ Թաղային, մօր՝ Բեկիսուլթանին, եղբօր՝ Պապին, Չօրապին և քվերանց որդոց բաժինին. նաև միաբանքս խոստացանք տարին Գ ժամ մատուցանել: Կատարողք վարձս առցեն, ի հայրապետութեան տեառն Յակոբայ:

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 107–108.

Շահխաթունեանց 2014, 351.

Լալայեան 1908, 80–81:

Ծանոթ. Լալայանը կարծում է, որ այս եկեղեցին Մարիամ իշխանուհու կառուցածն է²¹³: Երեք եղբայրները, հավանաբար, եկեղեցին հիմնանորոգել են, ըստ այդմ էլ վիմագրում վկայված է «շինեցաք» բառը:

50. ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. «Արևմտեան լուսամտուտի ներքև, դրսից».

Յամի ՌճԳԺ-աներորդի (1664), շնորհօք Աստուծոյ, մեք՝ հարագատ եղբարքս Սուլխան, Չալս, ի քաղաքէն Տփխեաց, ասքէն Չթաղենց, որդիք Թաղայի, որդոյ Միրվելոյ, եկեալ ի սուրբ անապատս Սեվան, տեսեալ զՍուրբ Աստուածածնի եկեղեցիս, զոր շինեալ

²¹³ Լալայեան, ԱՀ, 17, էջ 73:

յիշատակ մեր ապրանաց շահի Ժ-անորդն տալ զտեղի բնակողաց և միաբանքս խոստացան տարեն Գ ժամ մատուցանել սուրբ Չատկին, Վարդավառին, Զրօրինեաց տօնից: Այս եղև ի հայրապետութեան տեառն Յակոբայ, առաջնորդ Մխիթար եպիսկոպոս, Բարսեղ վարդապետ հանգուցելոյ:

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 111.
Շահխաթունեանց 2014, 351. Լալայեան 1908, 81:

51. ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *նախորդ արձանագրության ներքևում.*

Շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ, նորոգեցաւ եկեղեցիս իւր կնածովն (գանձովն) ի թուին ՌՃՁԹ (1740), ի հայրապետութեան տեառն Ղազարի և առաջնորդ Մարտիրոս վարդապետի: Աստուած ողորմի ասացէք տուրք և ողորմութիւն տուողացն սուրբ տանս և աշխատողաց ևս՝ Մարտիրոս վարդապետի որդի Աթապէկին, որ տուաւ Բ թուման ողորմութիւն: Ողորմեսցի ձեզ Աստուած:

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 112.
Շահխաթունեանց 2014, 351–352.
Ալիշան 1893, 86. Լալայեան 1908, 81:

52. ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *«արևմտեան դռան աջ կողմում, դրսից».*

Շնորհօքն Աստուծոյ, նորոգեցաւ տանիք Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ի հայրապետութեան տեառն Եփրեմի և նորած Յովհաննու կաթողիկոսի, յառաջնորդութեան տեղոյս Յովհաննէս վարդապետին և աշխատանօք բոլոր միաբանաց, մանաւանդ Կարապետ վարդապետին, որ ի շինութեան մասին սպանաւ յայլազգեաց ի ժողովարարութեան, որ ելից վանս սգով, որք ընթեռնոյք, ողորմի ասացէք: Յամի Տեառն 1832 և ի թուականութեանս ՌՄՁԱ:

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 108–109.
Լալայեան 1908, 81–82:

Ծանոթ. Մանուէլ վարդապետը ծանոթագրում է. «Որպէս երևի զքարն արձանագրութեանս յետոյ են կցեալ ընդ սեմոյն», իսկ վերջում գրում է. «Որպէս ասացին ի միաբանութեանս, սպանեալ է դոյն Կարապետ վարդապետն ի կողմանս Շաքոյ յաւազակաց, ընդ աշխարհական սպասաւորին Յամաքաբերդցւոյ»:

53. ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *«...այժմ քանդուած գաւթի փայտէ սեան վերայ եղել են հետեւեալ երկու արձանագրութիւնները».*

Յամի Տեառն 1836. նորոգեցան ի հիմանէ գաւիթս Սուրբ Աստուածածնի և մէկ մեծ մառան... չորս օղայ մէկ երկար քուչայիւ, արդեամբ և ծախիւք Լմեցի ծերունազարդ ի Զրիստոս հանգուցեալ Ստեփանոս ճգնազգեաց վարդապետին, որ նախքան զվաղճան իւր կտակաւ աւանդեաց զծախսն այսոցիկ միում միաբանից անապատիս Նիկողայոս վարդապետին, գիտութեամբ առաջնորդի տեղոյս Յովհաննէս վարդապետին և բոլոր միաբանիցս, որ և աւանդեցաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձեռնաւորութեամբ բոլոր միաբանիցս: Նիկողայոս վարդապետ Մովսէսեան:

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 109.
Ալիշան 1893, 86. Լալայեան 1908, 82:

Ծանոթ. Վիմագրի վերջում՝ *Նիկողայոս վարդապետի անվան հիշատակումն Ալիշանն ու Լալայանը չունեն:*

54. ՍԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. *նախորդի ստորև.*

Կայսրն Ռուսաց Նիկօլայ Պաւլօվիչն եկն յաշխարհս մեր ի Հայաստան, յամի Տեառն 1837 և եմուտ ի Սուրբ Էջմիածին ի հոկտեմբերի 4 և 5 սոյն ամսոյս յերևան. և ի 6, ի մուտս արեգական յաւուր չորեքշաբաթի Էանց հանդէպ նաւահանգստի անապատիս օթևանս արարեալ ի գիւղն Զիբուխլու մէկ գիշեր, և աստի ի Տփխիս քաղաք. և անտի ևս

Էանց գնաց խաղաղութեամբ յաթոռն
իւր ի Ս. Պ[ետեր]բուրգ: Նիկողայոս
վարդապետ Մովսեսեան:

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 110.
Ալիշան 1893, 86. Լալայեան 1908, 82:

Ծանոթ. Վիմագրի վերջում՝ Նիկողայոս վարդապետի անվան հիշատակումն Ալիշանն ու Լալայանը չունեն:

55. Սբ Աստուածածնի եկեղեցու հանդէպ շինուած հին սենեակների վրայ եղած արձանագրութեան քարը այժմ պահուում է վանքում, որովհետեւ այդ սենեակները քանդուած և նորերն են շինուած: Այս քարի վրայ արձանագրուած է».

Շնորհիւն Աստուծոյ շինեցան սենեակքս արդեամբք Տփիսիայ Զայոց ժողովրդոց՝ ձեռնտուութեամբ Տեառն Յովհաննու կաթուղիկոսին, յառաջնորդութեան բնիկ միաբանի տեղւոյս Յովհաննէս վարդապետին Ղազախեցւոյ, աշխատութեամբ միաբանից տեղւոյս. ՌՄՁԴ (1835):

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 110–111.
Ալիշան 1893, 86. Լալայեան 1908, 82–83:

56. «Երկու կից սենեակներից մինի վրայ».

Յիշատակ է այս զոյգ սենեակք-հիւրանոց բարեպաշտ Արծրունեան աղա Բարսեղ Նոր-Պայազիդ քաղաքացւոյ.
1860 ամի. ապրիլի 10:

Հրապ. Լալայեան 1908, 83:

57. «Դպրոցական շէնքի վրայ».

Շնորհօքն Աստուծոյ, կառուցաւ դպրոցս ի հայրապետութեան Տեառն-Տեառն սուրբ կաթողիկոսի ամենայն Զայոց, արդեամբ բարեպաշտօն Աւետիս Բալայեան-Ղուկասեանց Շուշեցւոյ. 1897–ՌՅԽԶ:

Հրապ. Լալայեան 1908, 83:

58. «Ի վերայ միջոյ Ատենի միջակադիր արծաթեայ խաչի, որ ցանգ դնի ի վերայ սեղանոյ Սուրբ Աստուածածնի եկեղեցոյն».

Սուրբ խաչս յիշատակ է Չիթաղենց Սուլխանին, իւր եղբայր Չալին, Պապենին, Չուրաբին եւ իւրեանց ծնաւոյցն, հաւրն՝ Թագուն եւ մաւր՝ Բեկիսուլթանին, ի դուռն Սեվանայ անապատին: Ով ոք էս յիշատակս յափշտակէ, դուրս տանէ, մասն Յուդայէ, Կայենէ առցէ.
թվին ՌՃԵ (1656):

Հրապ. Կիւմիշխանեցի 1871, 113:

Ծանոթ. Հրատարակիչն այդուհետ ծանոթագրում է. «Ի գաւթի Սուրբ Աստուածածնի եկեղեցոյն, առաջի դրան տաճարին առընթեր միմեանց գտանին գերեզմանք սոյն բարեպաշտ չորից եղբարց Չիթաղեանց, ի վերայ մջոյն տեսանի թիւս ՌՃԼԳ, իսկ միւսոցն թուականք, հանդերձ տապանագրոջն են անվերծանելիք. թէպէտ քանի մի ամօք յառաջ լեալ են չեղծեալք և ընթեռնելիք, որպէս պատմեն աստ միաբանք սուրբ ուխտիս Սեվանայ»:

59. «Սբ Աստուածածնի եկեղեցու մօտ մի գեղեցիկ գերեզմանաքարի վրայ». 22 տող.

Թայիրեանց Ղուլի,
Զին տոհմ մեծ ազգի,
Ի Շամքոր ծնեալ,
Ի Վիրս պանդխտեալ,
Թողի զՏփիսիս,
Չկին զորդիս.
Յանձնեալ Տեառն զիս,
Ստի յայս կղզիս:
Չերթ Սողոս՝ Պօղոս,
Ղուլիս՝ Ղազարոս,
Փոխեալ ես եղայ
Միանձն արեղայ:
Երսուն ամ ճգնեալ՝
Յերկինս փոխեցայ,
Տեսանել զնա
Ում զինուորեցայ,
զԱղէքսանդր որդիս
Կանգնող արձանիս
Օրինեա՛, Տէր Աստուած,
Մինչ ցկատարած:

Մահ իմ ի 1855 ամի
80 ամաց հասակի:

Հրատ. Լալայեան 1908, 3–84:

**60. «Նոր խցերի հանդէպ գտնուծ մի գերեզ-
մանաքարի վրայ».**

Այս է տապան 60 ամ աշխատակրօն
Տփիսիսեցւոյ՝ առաքինի Մելքոն ճգնաւո-
րի, 78-ամեայ փոխեցաւ առ Տէր ի 15
ապրիլի 1862 ամի, ով հանդիպողք
տուք ողորմի:

Հրատ. Լալայեան 1908, 84:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ՝ ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ²¹⁴

Վիմագրի թվականը կամ մոտավոր ժամանակը	Հմր	Հուշարձանը, արձանագրության տեղը	Բնույթը
ՅԻԳ-874 թ.	1	Սբ Կարապետ եկ., թմբուկի արևելյան նիստին	շինարարական-նվիրատվական
ՅԾԲ-903 թ.	2	Սբ Կարապետ եկ., հարավային մուտքի աջակողմում	շինարարական
Ժ-ԺԱ դդ.	48	Խաչքար՝ Վազգենյան հոգևոր դպրանոցի բակում	խաչքարային հիշատակագրություն
ՈԲ-1153 թ.	7	Արձանագիր քար՝ Սբ Կարապետ եկ. ներսում	տապանագիր
ՈԻԵ-1176 թ.	8	Սբ Առաքելոց եկ. արևմտյան փայտյա դուռը (այժմ՝ ՀՊԹ)	շինարարական
ՈԼԶ-1187 թ.	20	Խաչքար՝ կանգնեցված վանքի բակում	խաչքարային հիշատակագրություն
ՈԾ-1201 թ.	14	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. ներսում	խաչքարային հիշատակագրություն
ՈՀԶ-1227 թ.	29	Խաչքար՝ վանքի գերեզմանոցում	խաչքարային հիշատակագրություն
ԺԳ դար	25	Թևավոր խաչ՝ Սբ Առաքելոց եկ. գավթից դուրս, արևմտյան կողմում	շինարարական-հիշատակագրային
ԺԳ-ԺԴ դդ.	17	Տապանաքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	տապանագիր
ԺԳ-ԺԴ դդ.	27	Տապանաքար՝ վանքի գերեզմանոցում	տապանագիր
ԺԳ-ԺԴ դդ.	31	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺԴ դար	11	Սբ Առաքելոց եկ., ներքուստ, հյուսիսային խորանի աջ մասում	նվիրատվական
ՊՀ-1421 թ.	13	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. ներսում	խաչքարային հիշատակագրություն
ՊԴԷ-1448 թ.	26	Թևավոր խաչ, ներկայումս՝ ՀՊԹ-ում	խաչքարային հիշատակագրություն
Զ-1451 թ.	21	Խաչքար՝ կանգնեցված վանքի բակում	խաչքարային հիշատակագրություն
ԶԹ-1460 թ.	38	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԶԺԱ-1462 թ.	19	Խաչքար՝ կանգնեցված վանքի բակում	խաչքարային հիշատակագրություն
ԶԺԱ-1462 թ.	30	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԶԺԴ-1465 թ.	36	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԶԻ-1471 թ.	23	Խաչքար՝ վանք բարձրացող ճանապարհին	խաչքարային հիշատակագրություն
ԶԻԴ-1475 թ.	33	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԶԻԵ-1476 թ.	35	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԶԼԵ-1486 թ.	9	Սբ Առաքելոց եկ. հարավային փայտյա դուռը (այժմ՝ ՀՊԹ)	շինարարական
ԺԵ դար	22	Խաչքար՝ վանք բարձրացող ճանապարհին	խաչքարային հիշատակագրություն
ԺԵ դար	34	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺԵ-ԺԶ դդ.	18	Խաչքար՝ կանգնեցված վանքի բակում	խաչքարային հիշատակագրություն
ԺԵ-ԺԶ դդ.	37	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԶԾԹ-1510 թ.	15	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. ներսում	խաչքարային հիշատակագրություն

²¹⁴ Աստղանիշ են կրում այն վիմագրերի կարգային համարները, որոնք ներկայումս չեն պահպանվել կամ մեզ չի հաջողվել դրանք փաստագրել: Եկեղեցի բառը նշել ենք կրճատ՝ եկ. – խմբ.:

ՋՀԸ-1529 թ.	32	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ դար	16	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. ներսում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ դար	39	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ դար	40	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ դար	41	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ դար	43	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ-ԺԷ դդ.	6	Խաչքար՝ Սբ Կարապետ եկ. ներսում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ-ԺԷ դդ.	44	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ԺՀ-ԺԷ դդ.	45	Տապանաքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	տապանագիր
ՌԾԲ-1603 թ.	12	«Ամենափրկիչ» Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. հյուսիսային խորանում	խաչքարային հիշատակագրություն
ՌԿԲ-1613 թ.	3	Սբ Կարապետ եկ., հարավային մուտքի աջակողմում	շինարարական
ՌԿԴ-1615 թ.	42	Խաչքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	խաչքարային հիշատակագրություն
ՌԾ-1651 թ.	4	Սբ Կարապետ եկ., թմբուկի հարավային և հարավարևելյան նիստերին, ներկագիր	շինարարական
ՌԾԳ-1654 թ.	10	Սբ Առաքելոց եկ., հարավային պատին, քիվի տակ	շինարարական-նվիրատվական
ՌԾԵ-1656 թ.	58*	Սբ Աստվածածին եկ. Սբ Սեղանի արծաթյա խաչին	հիշատակագրություն
ՌԾԺԳ-1664 թ.	49*	Սբ Աստվածածին եկ. հարավային սյան վրա	շինարարական-նվիրատվական
ՌԾԺԳ-1664 թ.	50*	Սբ Աստվածածին եկ. արևմտյան պատին	շինարարական-նվիրատվական
ՌԾԽԲ-1693 թ.	28	Տապանաքար՝ վանքի գերեզմանոցում	տապանագիր
ՌԾՁԹ-1740 թ.	51*	Սբ Աստվածածին եկ. արևմտյան պատին	շինարարական-նվիրատվական
ԺԷ դար	5	Սբ Կարապետ եկ., տանիքի ծածկասալին	հիշատակագրություն
ՌՄԼԴ-1785 թ.	24	Խաչաքանդակ քար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	հիշատակագրություն
ՌՄՁԱ-1832 թ.	52*	Սբ Աստվածածին եկ. արևմտյան պատին	շինարարական
ՌՄՁԴ-1835 թ.	55*	Արծանագիր քար՝ վանքի երբեմնի սենյակների պատին	շինարարական
ՌՄՁԵ-1836 թ.	53*	Սբ Աստվածածին եկ. երբեմնի գավթի փայտե սյան վրա	շինարարական
ՌՄՁԶ-1837 թ.	54*	Սբ Աստվածածին եկ. երբեմնի գավթի փայտե սյան վրա	հիշատակագրություն
ՌՅԴ-1855 թ.	59*	Տապանաքար՝ Սբ Աստվածածին եկ. մոտ	տապանագիր
ՌՅԹ-1860 թ.	56*	Երբեմնի հյուրատան սենյակներից մեկին	հիշատակագրություն
ՌՅԺԱ-1862 թ.	60*	Տապանաքար՝ խցերի դիմաց	տապանագիր
ՌՅԻԴ-1875 թ.	46	Տապանաքար՝ Սբ Առաքելոց եկ. գավթում	տապանագիր
ՌՅԽԶ-1897 թ.	47	Արծանագիր քար, ներկայում՝ Վազգենյան հոգևոր դպրանոցի ճեմասրահում	շինարարական
ՌՅԽԶ-1897 թ.	57*	Դպրանոցի պատին	շինարարական

ԳԱՎԱՋԱՆԱԳԻՐՔ ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴ-ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ

1.	Մաշտոց Եղիվարդեցի	(863–897 թթ. 897–898 թթ. կաթողիկոս) ²¹⁵
2.	Ստեփանոս վրդ. Սևանցի վանահայր	(մինչև 969 թ., այս թվականից կաթողիկոս)
3.	Սարգիս Սևանցի վարդապետ	(989թ.–992 թթ, 992-ից կաթողիկոս)
4.	Սարգիս Սևանցի վանական, վանահայր	(հիշվում է 1205–1207 թթ.) ²¹⁶
5.	Դանիել վարդապետ Սևանցի	(1450–1470 թթ.)
6.	Ներսես եպիսկոպոս Սևանցի	(1470-ական թ. – 1500 թ)
7.	Գրիգորիս եպիսկոպոս Սևանցի	(1503–1534 թթ.)
8.	Կարապետ էջմիածնեցի եպիսկոպոս	(1620 թ. –)
9.	Մխիթար եպիսկոպոս	(1654–1695 թթ.)
10.	Օնոփրիոս արեղայ	(ժամանակն անհայտ) ²¹⁷
11.	Մարտիրոս Չերքեզյան եպիսկոպոս	(1740 թ. – 1747 թթ.)
12.	Հովհաննես վարդապետ Նորադուզցի	(1747–1753 թթ.)
13.	Սամուել վարդապետ	(1753 թ., մի քանի ամիս)
14.	Հովհաննես վարդապետ	(1753, մի քանի ամիս)
15.	Աթանաս վրդ Մակուեցի 5 տարի	(ժամանակն անհայտ)
16.	Եղիազար եպիսկոպոս, 3 տարի	(ժամանակն անհայտ)
17.	Գրիգոր վարդապետ Գանձակեցի, 8 տարի	(– 1805 թ.)
16.	Սարգիս վարդապետ Ոսկանապատեցի	(1809–1828 թթ.)
17.	Հովհաննես վարդապետ Տեր Մարտիրոսյանց Ղազախեցի	(1828–18410 թթ.) ²¹⁸
18.	Մինաս վարդապետ	(1840–1841 թթ.)
19.	Հարություն եպիսկոպոս Գանձակեցի	(1841 թ., մի քանի ամիս)

²¹⁵ Մոտ 400 տարի անհայտ է վանական կյանքի պատմությունը:

²¹⁶ Այնուհետև վանահայրերի մասին վանքի փաստաթղթերում եղել են հատուկենտ տեղեկություններ:

²¹⁷ Փիլիպպոս Աղբակեցու (1632-1655թթ) հրամանով:

²¹⁸ Այս վանահայրից սկսած կանոնավորվում են վանահայրերի կառավարման ժամանակները:

20.	Հովհաննես վարդապետ Անտոնյան Տփիսիսեցի	(1841 թ., մի քանի ամիս)
21.	Մկրտիչ վարդապետ	(1348–1358 թթ.)
23.	Կարապետ վարդապետ Բլբուլյանց	(1358–1361 թթ.)
24.	Հարություն վարդապետ Մարջանյանց Շիրակեցի	(1361–1869 թթ.)
25.	Կարապետ վարդապետ Բլբուլյան	(1369–1892 թթ.)
26.	Գալուստ վարդապետ Այվազյանց	(1892 թ., մի քանի ամիս)
27.	Գրիգոր վարդապետ Ակունեցի	(1892–1895 թթ.)
28.	Սարգիս արքեպիսկոպ Փիլոյան	(1896–1901 թթ.)

1990 թվականից Սևանավանքի վանահայրեր են եղել.

1.	Տեր Խորեն աբեղա Մարտիրոսյանը	(1990 թ. հոկտեմբեր–1991 թ. դեկտեմբեր)
2.	Տեր Աթանաս աբեղա Մովսիսյանը	(1992 թ. հունվար–1993 թ. մարտ)
3.	Տեր Առաքել վարդապետ Քարամյանը	(1993 թ. ապրիլ – 1996 թ. մայիս, այժմ՝ արքեպիսկոպոս)
4.	Տեր Մինաս քահանա Մարտիրոսյանը	(1996 թ. հունիս – 2000 թ. հուլիս)
5.	Տեր Բագրատ վարդապետ Գալստանյանը	(2000 թ. օգոստոս – 2003 թ. փետրվար, այժմ՝ արքեպիսկոպոս)
6.	Տեր Գարեգին աբեղա Հարությունյանը	(2003 թ. մարտ – 2004 թ. հունիս)
7.	Տեր Մինաս քահանա Մարտիրոսյանը	(2004 թ. հուլիս–2004 թ. օգոստոս)
8.	Տեր Մկրտիչ վարդապետ Պռոշյանը	(2004 թ. սեպտեմբեր–2008 թ. փետրվար, այժմ՝ եպիսկոպոս)
9.	Տեր Գևորգ վարդապետ Սարոյանը	(2008 թ. մարտ–2009 թ. նոյեմբեր, այժմ՝ եպիսկոպոս)
10.	Տեր Մինաս քահանա Մարտիրոսյանը	(2009 թ. դեկտեմբերից, այժմ՝ ավագ քահանա):

ՎԵՐՋԱԲԱՆ

Սևանավանքը միջնադարյան Հայաստանի հնամենի և տեական գործածվանք-անապատներից է: Վանքի պատմությունը մշտապես հետաքրքրել է ուսումնասիրողներին, ինչով պայմանավորված՝ դեռևս նախորդ դարասկզբին Սևանավանքում մենագրություններ են հեղինակել Սբ Էջմիածնի միաբաններ Զաքարիա վրդ. Գուլասպյան-Բեհրուժյանց Տփսիսեցին («Վէպ ծովակին Գեղամայ և երջանիկ կղզւոյն և որոյ բնակչացն», 1825 թ.) և Մանվել վրդ. Կյումուշխանեցին («Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց», 1830 թ.): Սևանավանքի պատմությանը նվիրված առանձին հոդվածներ են հրատարակել վանքի առաջնորդ Սարգիս եպս. Փիլոյանը, Գյուտ եպս. Ղազարյանը, ազգագրագետ Նրվանդ Լալայանը և այլք: Իրենց տեղագրություններում վանքի պատմությանն անդրադարձել են նաև Մեսրոպ արք. Սմբատյանցը, Ղևոնդ Ալիշանը և Հովհաննես եպս. Շահխաթունյանցը:

Սևանա կղզին բնակեցված է եղել մեր պատմության հնագույն ժամանակներից: Կղզու մասին նախնական վկայություններն ավանդության են: Թ դարում Սևանա կղզում Մաշտոց Եղիվարդեցի վարդապետը հիմնել է միաբանություն: Վանահոր 33 տարվա անապատական և 22 տարվա առաջնորդական կյանքի մանրամասները մեզ են փոխանցել նրա վարձագիրները՝ Ստեփանոս կրոնավորը, Հովհաննես Դրասխանակերտցի և Ստեփանոս Օրբելյան պատմիչները:

Մարիամ Բագրատունու միջոցներով 871 թ. կառուցվել են կղզու Սբ Առաքելոց և Սբ Աստվածածին եկեղեցիները, հիմնվել է Բարսեղ Կեսարացու կանոններով գործող Սբ Առաքելոց միաբանությունը, իսկ Մաշտոց Եղիվարդեցու վարդապետարանը կոչվել է «ուսումնասէր անձանց վարժարան»: Սևանավանքի վարդապետարանից են սերում Երի-

ցավանք տեղափոխված Գևորգ իշխանը, Հովհաննես Դրասխանակերտցի և Ստեփանոս Սևանցի կաթողիկոսները:

Ժ-ԺԴ դդ. Սևանավանքին առնչվող պատմական որևէ տեղեկություն մեզ չի հասել: Փոխարենը ԺԵ դարում այստեղ է գործել Դանիել րաբունապետի «Արեւելեան տան վարդապետարանը»: Ծագումով Սևանից Դանիելը սովորել է Տաթևի վարդապետարանում, այնուհետև՝ Էջմիածնի դպրանոցում, որն ավարտելուց հետո ձեռնադրվել է կուսակրոն քահանա և 1451 թ. հաստատվել Սևանավանքում:

Դանիել րաբունապետի հիմնած վարդապետարանում ուսանում էին ոչ միայն տեղի, այլև Հայաստանի տարբեր շրջաններից եկած հոգևորականներ, որոնց ջանքերով ծաղկում է գրչության արվեստն ու վանքը դառնում է ձեռագրապահպան հայտնի կենտրոն: Այսպես, 1461 թ. Դանիել րաբունապետը գնել է Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը, 1464 թ. նշանավոր մանրանկարիչ Ստեփանոս Առնշեցին նրան նվիրել է մի ճաշոց, նրա պատվերով Վարդան գրիչն Աղջոց վանքում 1471 թ. ընդօրինակել է մի Ավետարան, որը տարիներ անց Սևանավանքում նկարազարդել է Աբրահամ Սևանցին: Նա է նկարազարդել նաև Դանիելի պատվերով՝ 1450 թ. Էջմիածնում ընդօրինակված Գրիգոր աբեղայի ճաշոցը: Դանիելը ևս ընդօրինակել է ձեռագրեր, ինչպես օրինակ՝ Սևանավանքի գրչակենտրոնից մեզ հասած առաջին ձեռագիրը՝ 1451 թ. ընդօրինակված Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը:

Դանիել րաբունապետի շնորհաշատ սաներից էին Սևանի վանահայր Ներսես եպիսկոպոսը, միաբան Տիրատուրը, Հորդանան Տաթևացին, Գալուստ Օհանավանցին, Սարգիս Կետանոցին, Կարապետ Շամբիձորեցին, ինչպես նաև մանրանկարիչներ Աբրահամը, Գրիգորիսը և Սահակը:

Սևանի միաբանությունն անդամների գրչական գործունեությունը շարունակվել է նաև հետագա դարերում: Ժեղարում ընդօրինակված միայն երկու ձեռագիր է մեզ հասել՝ Մելքիսեթու Գրիգոր արքեպիսկոպոսի համար գրված «Բառագիրք» (1660 թ.) և Մխիթար եպիսկոպոսի «Ժամագիրք-Սաղմոսարանը» (1664 թ.): ԺԸ դարից մեզ է հասել մեկ ձեռագիր՝ Հովհաննես տիրացուի ժողովածուն (1738 թ.): ԺԹ դարում տասից ավելի գրիչներ ընդօրինակություններ են կատարել Սևանավանքում: Նրանցից են՝ Մխիթար Շամբորեցին և Աստվածատուր Քեալյան-Հարությունյանը, որոնք 1819 թ. ավարտել են Ներսես Լամբրոնացու Սաղմոսաց մեկնությունները, Պողոս Սևանցին, որը 1806 թ. օրինակել է մի Աղոթագիրք, Զաքարիա Գուլասպյան Տփիսեցին, որը 1825 թ. գրել է Սևանավանքի պատմությանը նվիրված «Վէպ»-ը և երիցս ընդօրինակել այն: Մաշտոցյան Մատենադարանում է պահվում նաև Մանվել Կյումուշխանեցուն՝ Սևանավանքում՝ 1830 թ. գրած «Պատմութիւն անցից»-ի ինքնագիր օրինակը: ԺԽ դարի գրիչներից նշելի են Անտոն Տփիսեցու անունը, որն ընդօրինակել է մեկնություններ, բանաստեղծությունների ժողովածու, Սիմեոն Տեր-Հովհաննիսյան-Շաքեցի գրիչը՝ 1838-1846 թթ. ընդօրինակած վեց ձեռագրով, Պողոս Պետրոսյան Կոստանդնուպոլսեցին, որը 1850 թ. հեղինակել է 16 գլխից բաղկացած մի մենագրություն, ինչպես նաև Սևանավանքի վանահայրեր Հարություն Մարճանյանցը և Կարապետ Բլբուլյանցը, որոնցից մեզ են հասել մեկական ձեռագրեր:

Սևանավանքն ունեցել է նաև գրատուն-մատենադարան, որտեղ պահվել են տեղում գրված, ինչպես նաև տարբեր ճանապարհով ձեռք բերված մատյաններ. դրանցից 121-ն այսօր Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում են:

Սևանավանքն ինքնատիպ է նաև իր հուշարձանախմբով: Պատմական աղբյուրներն ու ավանդազրույցները վկայում են այստեղ երբեմնի գոյություն ունեցած ամրոցի, մեհյանի, պարսպապատ դղյակի մասին, որոնցից մեհյանի տեղում Սբ Գրիգոր Լուսավորիչը կանգնեցրել է փայտյա խաչ և կառուցել Սբ

Հարություն և Սբ Կարապետ եկեղեցիները: Մինչև նախորդ դարի 30-ական թթ. կանգուն է եղել ուշ շրջանում վերակառուցված Սբ Աստվածածին եռանավ բազիլիկ եկեղեցին: Այսօր թերակղզում կանգուն են Սբ Կարապետ և Սբ Առաքելոց եկեղեցիները, տեսանելի են մեկ այլ եկեղեցու հիմնապատերը:

Հիշված հուշարձանների որմերից ու կոթողներից հաջողվել է ընդօրինակել և սույն աշխատանքում մեկտեղել 47 վիմագիր, որոնցից 30-ը նորահրատ են: Եվս 12 վիմագիր ներկայում չի պահպանվել և ներկայացվել է ըստ նախորդ հրատարակիչների: Վիմագրերի վաղագույն հրատարակիչը մատենագիր Մանուել վրդ. Կյումուշխանեցին է (1768-1843): ԺԹ դարի 20-ական թթ. Խոր Վիրապից տեղափոխվելով Սևանավանք՝ նա ուսումնասիրում է վանքի պատմությունն ու հուշարձանները, ներկայացնում իր կողմից ընդօրինակված երեք վկայագիր, չնայած ծանոթ է եղել նաև այլ արձանագրությունների:

Հուշարձանախմբից վիմագրեր են հրապարակել նաև տեղագիր հեղինակներ Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, Սարգիս արք. Զալալյանցը, Մեսրոպ արք. Սմբատյանցը, Դևոնդ վրդ. Ալիշանը, Երվանդ Լալայանը:

Վանքի հնագույն վիմագիրը (874 թ.) առաջինը վերծանել ու հրատարակել է նշանավոր հայագետ, կովկասագետ Լևոն Մելիքսեթ-Բեկը: Հետագայում բնագրին անդրադարձել են նաև հայագետներ Գ. Հովսեփյանը, Ե. Շահագիրզը, հնագետ Կ. Ղաֆադարյանը, մեր օրերում՝ Ա. Ղազարոսյանը: Սևանավանքից տարբեր առիթներով վիմագրեր են հրատարակել նշանավոր հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը, վիմագրագետ Ս. Բարխուդարյանը, ճարտարապետության պատմաբան Վ. Հարությունյանը, վիմագրագետ Ա. Շահինյանը, գրականագետ Ս. Շտիկյանը, վիմագրագետ, հուշարձանապահպան գործի նվիրյալ Ս. Սաղումյանը, ձեռագրագետ Ա. Ղազարոսյանը, իսկ եկեղեցական փայտափորագիր դռների արձանագրությունները տեղ են գտել Եվգինե Մուշեղյանի հայտնի աշխատությունում:

Վանքի վիմագիր ժառանգությունն ըստ բովանդակության ընդգրկում է թվով տասը

շինարարական բնույթի վիճագիր, որոնցից երկուսը վերաբերում են եկեղեցական դռների պատրաստմանը, թեմի հաստատմանը, որը վաղագույն վկայագիրն է, ուր բացի եկեղեցիների շինարարության փաստից՝ նշված են նաև վանքին նվիրված բնակավայրեր և այգիներ, որոնք, մեր կարծիքով, կազմել են նորաստեղծ վանքի հարկատու բնակավայրերն ու այլ տարածքները: Առավել սակավ են

նվիրատվական բնույթի վիճագրերը, բայց փոխարենն առատ են հիշատակագրությունները, որոնք ներառում են նաև խաչքարային և տապանաքարային վկայագրերը: Առանձնակի կարևորվում են վանքում գործած շորս քարգործ վարպետների՝ Տրդատ, Դավթակ, Դավիթ և Զաքար / Գրիգոր անվանական հիշատակությունները:

АРПЕНИК КАЗАРОСЯН, ГАГИК Г. САРГСЯН

СЕВАНАВАНК: ИСТОРИЯ, РУКОПИСНОЕ И ЭПИГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ

Резюме

Севанаванк – один из самых древних и долго действующих монастырей-пустынь средневековой Армении. Его история всегда вызывала интерес у исследователей. Ещё в начале XIX века члены братства Святого Эчмиадзина, такие как архимандрит Закария Гуласпян-Бехбутянц Тифлисский («История Гегамского озера и благословенного острова, и же его обитателей», 1825 год) и архимандрит Манвел Кюмушханеци («История прошедших событий монастыря Севан», 1830 год), создали монографии о Севанаванке.

Отдельные статьи об истории монастыря были опубликованы настоятелем монастыря епископом Саркисом Пилюном, епископом Гют Казаряном, этнографом Ервандом Лалаяном и другими. Также история Севанаванка нашла своё отражение в топографических исследованиях архиепископа Месропа Смбатянца, Гевонда Алишана и епископа Ованеса Шаххатунянца.

Остров Севан был населён с древнейших времён нашей эры. Первые упоминания о нём встречаются в легендах. В IX веке вардапет Маштоц Егивардеци основал на острове монашескую общину. Его жизнеописатели – монах Степанос, историки Ованес Драсханакертци и Степанос Орбелян – передали нам подробности его 33-летней отшельнической жизни и 22-летнего настоятельства.

В богословской школе, созданной наставником Даниелом, обучались не только местные жители, но и священнослужители из разных уголков Армении. Благодаря их усилиям искусство письма и переписки достигло расц-

вета, и монастырь Севанаванк стал известным центром хранения и создания рукописей.

В 1461 году наставник Даниел приобрёл «Проповедник Григора Татеваци». В 1464 году знаменитый миниатюрист Степанос Арнджеци подарил ему Часослов. По заказу Даниела писец Вардан в 1471 году скопировал Евангелие в монастыре Ахдзоц, которое впоследствии было украшено иллюстрациями Абраама Севанци в Севанаванке.

Абраам Севанци также иллюстрировал Часослов монаха Григора, созданный по заказу Даниела в Эчмиадзине в 1450 году. Даниел сам активно занимался копированием рукописей. Одной из старейших сохранившихся рукописей севанаванкского скриптория является его копия толкования на Евангелие от Матфея Григора Татеваци, выполненная в 1451 году.

Среди талантливых учеников наставника Даниела выделялись настоятель Севана епископ Нерсес, монах Тиратур, Орданан Татеваци, Галуст Оганаванци, Саргис Кетаноци и Карапет Шамбидзореци, а также одарённые миниатюристы Абраам, Григорис и Саак.

Переписная деятельность членов Севанской общины продолжалась и в последующие века. С XVII века до нас дошли только две рукописи: «Словарь», написанный для монахов Мелкисета и Григора (1660 г.) и «Часослов-Псалтырь» епископа Мхитара (1664 г.). Из XVIII века сохранилась одна рукопись – сборник дьякона Ованеса (1738 г.). В XIX веке более десяти писцов занимались переписыванием в Севанаванке. Среди них – Мхи-

тар Шамкоречи и Аствацатур Кеалян-Арутюнян, завершившие в 1819 г. «Толкования Псалмов» Нерсеса Ламбронаци; Погос Севанци, который в 1806 г. скопировал «Молитвенник»; Закария Гуласпян Тифлисский, написавший в 1825 г. «История», посвящённый истории Севанаванка, и трижды его переписавший. В Матенадаране хранится также автограф «Истории событий», написанной Манвелом Кюмушханеци в Севанаванке в 1830 г.

Среди писцов XIX века следует отметить Антона Тифлисского, который переписывал толкования и сборники стихотворений; писца Симеона Тер-Ованисяна-Шакеци с шестью рукописями, переписанными в 1838–1846 гг.; Погоса Петросяна Константинопольского, который в 1850 г. создал монографию из 16 глав, а также настоятелей Севанаванка Арутюна Марчянянца и Карапета Блбулянца, от которых до нас дошло по одной рукописи.

Севанаванк также имел книгохранилище-матенадаран, где хранились как написанные на месте, так и приобретённые различными путями рукописи; 121 из них сегодня находится в собрании Матенадарана имени Маштоца.

Севанаванк уникален и своим комплексом памятников. Исторические источники и предания свидетельствуют о некогда существовавших здесь крепости, языческом храме, укрепленном замке. На месте языческого храма Святой Григорий Просветитель установил деревянный крест и построил церкви Святого Воскресения и Святого Карапета. До 1930-х годов прошлого века стояла перестроенная в поздний период трёхнефная базилика Святой Богородицы. Сегодня на полуострове стоят церкви Святого Карапета и Святых Апостолов, а также видны фундаменты ещё одной церкви.

Со стен и стел упомянутых памятников удалось скопировать и объединить в данной работе 45 лапидарных надписей, из которых 28 публикуются впервые. Ещё 12 надписей в настоящее время утрачены и представлены по данным предыдущих публикаций. Самым ранним издателем надписей был писа-

тель и архимандрит Мануел Кюмушханеци (1768–1843). В 1820-х годах XIX века, переехав из Хор Вирапа в Севанаванк, он изучал историю и памятники монастыря и представил три скопированные им свидетельства, хотя был знаком и с другими надписями.

Надписи из комплекса памятников публиковали топографы-авторы – епископ Ованес Шаххатунянц, архиепископ Саргис Джалалянц, архиепископ Месроп Смбатянц, Гевонд Алишан и Ерванд Лалаян.

Древнейшую надпись монастыря (874 г.) первым расшифровал и опубликовал выдающийся армяновед и кавказовед Левон Меликсет-Бек. Впоследствии к тексту обращались также армяноведы Г. Овсепян, Е. Шахазиз, археолог К. Кафадарян, а в наши дни – А. Казаросян.

Надписи из Севанаванка по разным поводам публиковали известный армяновед Г. Тер-Мкртчян, эпиграфист С. Бархударян, историк архитектуры В. Арутюнян, эпиграфист А. Шахинян, литературовед С. Штикян, эпиграфист и хранитель памятников С. Сагумян, кодиколог А. Казаросян. Надписи на церковных резных деревянных дверях нашли своё место в известной работе Евгении Мушегян.

Эпиграфическое наследие монастыря по содержанию включает десять строительных надписей, из которых две относятся к изготовлению церковных дверей и к установлению епархии. Это древнейшее свидетельство, где помимо факта строительства церковью указаны также пожертвованные монастырю поселения и сады, которые, по нашему мнению, представляли собой налогооблагаемые поселения и другие территории новосозданного монастыря.

Дарственных надписей сравнительно меньше, но обильны памятные записи, которые включают также свидетельства, высеченные на хачкарах и надгробиях. Особую важность представляют именные упоминания четырёх мастеров-каменотёсов, работавших в монастыре: Трдата, Давтака, Давида и Закара/Григора.

ARPENIK GHAZAROSYAN, GAGIK G. SARGSYAN

SEVANAVANK: HISTORY, MANUSCRIPT AND EPIGRAPHIC HERITAGE

Summary

Sevanavank is one of the ancient and long-functioning monastery-hermitages of medieval Armenia. The monastery's history has consistently attracted researchers' interest, which led to the publication of monographs at the beginning of the previous century by Holy Etchmiadzin brotherhood members: Archimandrite Zakaria Gulaspyan-Behbutyants of Tiflis ("The Story of Lake Gegham and its Blessed Island and its Inhabitants," 1825) and Archimandrite Manvel Kyumushkhanetsi ("The History of Past Events of Sevan Monastery," 1830). Separate articles about Sevanavank's history were published by the monastery's leader, Bishop Sargis Piloyan, Bishop Gyut Ghazaryan, ethnographer Yervand Lalayan, and others. The monastery's history was also addressed in the topographical works of Archbishop Mesrop Smbatyants, Ghevond Alishan, and Bishop Hovhannes Shahkhatunyants.

Throughout Sevan Island has been inhabited since ancient times throughout our history. The earliest testimonies about the island are legendary. In the 9th century, Vardapet (Doctor) Mashtots of Yeghivard established a brotherhood on Sevan Island. The details of his 33 years of hermitic life and 22 years of leadership have been passed down to us by his biographers: the monk Stepanos, and historians Hovhannes Draskhanakerttsi and Stepanos Orbelian.

In 871, through the patronage of Mariam Bagratuni, the Holy Apostles and Holy Mother of God churches were built on the island. "A Brotherhood of the Holy Apostles was estab-

lished, operating in accordance with the church canons of Basil of Caesarea, while Mashtots of Yeghivard's seminary became known as the 'school for knowledge-loving persons.'" Several notable religious figures emerged from Sevanavank's seminary, including Prince Gevorg, who moved to Yeritsavank, and Catholicoi Hovhannes Draskhanakerttsi and Stepanos of Sevan.

No historical information about Sevanavank from the 10th–14th centuries has survived to our time. However, in the 15th century, the "Eastern House Seminary" of Rabunapet (Master) Daniel operated here. Daniel, who was originally from Sevan, studied at the Tatev seminary and then at the Etchmiadzin school. After graduation, he was ordained as a celibate priest and settled at Sevanavank in 1451.

The seminary established by Rabunapet Daniel educated not only local clergy but also religious scholars from various regions of Armenia. Through their efforts, the art of manuscript copying flourished, and the monastery became a renowned center for manuscript preservation. For example, in 1461, Rabunapet Daniel purchased Gregory of Tatev's Book of Sermons. In 1464, the famous miniaturist Stepanos of Arnj gifted him a Lectionary. At Daniel's request, the scribe Vardan copied a Gospel at Aghjots Monastery in 1471, which was later illustrated at Sevanavank by Abraham of Sevan. Abraham also illustrated Gregory the Monk's Lectionary, which was copied at Etchmiadzin in 1450 at Daniel's request. Daniel himself copied manuscripts, including the first surviving manuscript

from Sevanavank's scriptorium: the 1451 copy of Gregory of Tatev's Commentary on the Gospel of Matthew.

Among Rabunapet Daniel's gifted students were Bishop Nerses (the abbot of Sevan), the monk Tiratur, Hordan of Tatev, Galust of Ohanavank, Sargis of Ketanots, Karapet of Shambidor, as well as miniaturists Abraham, Grigoris, and Sahak.

The manuscript copying activities of Sevan's brotherhood continued in the following centuries. Only two manuscripts from the 17th century have survived: "Dictionary" written for monks Melkiset and Grigor (1660) and Bishop Mkhitar's "The Horologion and Psalms" (1664). From the 18th century, only one manuscript has survived: deacon Hovhannes's collection (1738). In the 19th century, more than ten scribes created manuscripts at Sevanavank. Among them were Mkhitar of Shamk'or and Astvatsatur Kyalyan-Harutyunyan, who completed Nerses of Lambron's Commentary on Psalms in 1819; Poghos of Sevan, who copied a "Prayer Book" in 1806; and Zakaria Gulaspyan of Tiflis, who wrote and copied his "Tale" three times, dedicating it to Sevanavank's history in 1825. The Matenadaran (manuscript repository) also holds the original copy of Manvel Kyumushkhanetsi's "History of Events," written at Sevanavank in 1830. Notable 19th-century scribes include Anton of Tiflis, who copied commentaries and poetry collections; scribe Simeon Ter-Hovhannisyan of Shaki, with six manuscripts copied between 1838–1846; Poghos Petrosyan of Constantinople, who authored a 16-chapter monograph in 1850; and Sevanavank abbots Harutyun Marchanyan and Karapet Blbulyan, from whom one manuscript each has survived.

Sevanavank also had a library-repository where manuscripts written locally and acquired through various means were kept. Today, 121 of these manuscripts are in the collection of the Matenadaran (Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts).

Sevanavank is also unique for its architectural complex. Historical sources and legends testify to the existence of a fortress, pagan temple, and walled castle that once stood here. On the site of the pagan temple, St. Gregory the Illuminator erected a wooden cross and built the churches of Holy Resurrection and St. Karapet. Until the 1930s, the three-nave basilica church of Holy Mother of God, which had been reconstructed in later periods, was still standing. Today, the churches of St. Karapet and Holy Apostles remain standing on what is now the peninsula, and the foundation walls of another church are visible.

From the walls and monuments of these structures, researchers have managed to copy and compile 45 lapidary inscriptions in this work, of which 28 are newly published. An additional 12 inscriptions **that** no longer exist are presented based on previous publications. The earliest publisher of these inscriptions was the chronicler, Archimandrite Manuel Kyumushkhanetsi (1768–1843). In the 1820s, after moving from Khor Virap to Sevanavank, he studied the monastery's history and monuments, presenting three **inscriptions** he copied, although he was familiar with other inscriptions as well.

Epigraphic inscriptions from this monument complex have been published by several regional scholars, including Bishop Hovhannes Shahkhatunyants, Archbishop Sargis Jalalyants, Archbishop Mesrop Smbatyants, Ghevond Alishan, and Yervand Lalayan.

The monastery's oldest inscription (dated 874 CE) was first deciphered and published by the renowned Armenian and Caucasian studies scholar, Levon Melikset-Bek. Later, the original text was studied by **Armenologists** G. Hovsepyan and Y. Shahaziz, archaeologist K. Ghafadaryan, and, in recent times, A. Ghazarosyan. Various inscriptions from Sevanavank have been published by notable scholars, including the distinguished Armenologist G. Ter-Mkrtchyan, epigraphist S. Barkhudaryan, architectural historian V. Harutyunyan, epigraphist A. Shahi-

nian, literary scholar S. Shtikyan, epigraphist and monument preservationist S. Saghumyan, and manuscript expert A. Ghazarosyan. The inscriptions from the monastery's wooden carved doors were included in **Yevgine Musheghyan's** well-known work.

The monastery's epigraphic heritage includes ten construction-related inscriptions, of which two refer to the creation of church doors. The earliest document establishes the diocese and, besides recording church construction, lists

settlements and gardens donated to the monastery. In our assessment, these likely constituted the taxable territories and settlements of the newly established monastery.

While dedicatory inscriptions are relatively few in number, there is an abundance of memorial inscriptions, including those found on khachkars (cross-stones) and tombstones. Of particular significance are the recorded names of four stonemason masters who worked at the monastery: Trdat, Davtak, David, and Zakar/Grigor.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ձեռագրեր

1. ՄՄ 533, Բառգիրք, ստացող՝ Մելքիսեթ և Գրիգոր արեղայք, Սևան, 1660 թ., 237 թերթ:
2. ՄՄ 970, Մաշտոց, գրիչ՝ Կարապետ քիյ, ԺԶ դար, 362 թերթ:
3. ՄՄ 1301, Գրիգոր Տաթևացի, Մեկնություն Մատթեի, Քարոզք, գրիչ՝ Դանիել արդյ, Սևան, 1451 թ., 338 թերթ:
4. ՄՄ 1650, Ժողովածոյ, գրիչ, ստացող՝ Կարապետ (Բ), ԺԷ դար (1611-ից հետո), 1771 թ., 195 թերթ:
5. ՄՄ 2530, Աղթափաք, գրիչ՝ Պողոս Մեվանեցի, ստացող՝ Խաչատուր Թիվիզեցի, Սևան, 1806 թ., 49 թերթ:
6. ՄՄ 3002, Անետարան, գրիչ, ստացող՝ Յոնան եպս., կազմող՝ Դավիթ քիյ, Վարդանաշատ, 1500 թ., 331 թերթ:
7. ՄՄ 3164, Քարոզգիրք, գրիչ՝ մահտեսի Սիմեոն Շաքեցի, ստացող՝ Տէր Սարգիս, Տէր Յարութիւն Տէր-Յօհաննեսեան, Սևան (?), 1838 թ., 164 թերթ:
8. ՄՄ 3398, Հարցմունք Աթանասի և պատասխանիք Կիրողի Երուսաղեմացոյ, գրիչ՝ Սիմեոն Տէր-Յօհաննեսեան, ստացող՝ Տէր Սարգիս, Տէր Յարութիւն, Սևան, 1838 թ., 113 թերթ:
9. ՄՄ 3473, Անետարան, ԺԴ, ԺԷ դդ., 336 թերթ:
10. ՄՄ 3474, Մանրուսմունք, ԺԵ դար, 130 թերթ:
11. ՄՄ 3482, Շարակնոց, գրիչ՝ Յովսէփ/Յովհաննէս (?) եպս. Անոյ, ծաղկող՝ Ստեփաննոս վրդ., 374 թերթ:
12. ՄՄ 3487, Ժողովածոյ, գրիչ՝ Յակոբ Ղրիմեցի, ստացող՝ Աբրահամ արդյ, Կապուսի վանք, 1389 թ., 144 թերթ:
13. ՄՄ 3558, Պաղոս Կաղզուանցի. Յուպ քահանայից, գրիչ՝ Սիմեոն Տէր-Յովհաննիսեան Շաքեցի, Սևան, 1841 թ., 136 թերթ:
14. ՄՄ 3559, Սիմեոն Տէր-Յովհաննիսեան Շաքեցի, Կերակուր քահանայից, գրիչ՝ հեղինակը, Սևան, 1841 թ., 81 թերթ:
15. ՄՄ 3637, Ժողովածոյ, գրիչ՝ Մկրտիչ քիյ, ստացող՝ Դավիթ վրդ., Սպահան, 1697 թ., 361 թերթ:
16. ՄՄ 3638, Ժողովածոյ, ԺԹ դար, 193 թերթ:
17. ՄՄ 3759, Ճաշոց, գրիչ՝ Ստեփաննոս արդյ, ստացող՝ Դանիել վրդ., Հայոց թառ, 1464 թ., 471 թերթ:
18. ՄՄ 3760, Ներսէս Լամբրոնացի, Մեկնություն սաղմոսաց, գրիչ՝ Մխիթար վրդ., ստացող՝ Եփրեմ կթղ., Սևան, 1814 թ., 182 թերթ:
19. ՄՄ 3761, Գեորգ Սկևռացի, Մեկնություն Եսայեայ, գրիչ, ստացող՝ Անտոն արդյ, Սևան, 1833 թ., 159 թերթ:
20. ՄՄ 3766, Համառօտ նախապատմություն ժողովոյն Նիկիոյ, գրիչ՝ Ստեփաննոս, Յովհաննէս, Կ. Պօլիս, 1793 թ., 242 թերթ:
21. ՄՄ 3778, Ներսէս Լամբրոնացի, Մեկնություն սաղմոսաց, գրիչ՝ Ըղբստակէս, Աբրահամ (?), ստացող՝ Սարգիս քիյ, Վարդան Թեոդոսեանց, Գրիգոր Արքայունեանց, Թաղէոսի առաքելոյ վան (Արտազ), 1315 թ., 508 թերթ:
22. ՄՄ 3779, Ճառքնտիր, գրիչ՝ Աստուածատուր, Կարապետ, Ստեփաննոս, Ղազարոս, ծաղկող՝ Մոսթանէս, ստացող՝ Տուրք, Աւագ վանք (Դարանաղիք), 1227 թ., 545 թերթ:
23. ՄՄ 3809, Ներսէս Լամբրոնացի, Մեկնություն սաղմոսաց, գրիչ՝ Տէր Մխիթար, Աստուածատուր Յօհաննիսեան, ստացող՝ Եփրեմ կթղ., պրն Մեսրոբ, Սևան, 1819 թ., 519 թերթ:
24. ՄՄ 3810, Յայսմատուրք (խմբ.՝ Գր. Ծերենց), գրիչ՝ Միքայէլ, Դավիթ, ծաղկող՝ Յովհաննէս, ստացող՝ Թանկրիդուլ, Գօշ (?), ԺԶ դար, 521 թերթ:
25. ՄՄ 3994, Անետարան, գրիչ՝ Յովանէս երեց, ծաղկող՝ Բարսեղ քիյ, Ղազար սրկ., կազմող՝ Ոհաննէս երեց, ստացող՝ Նազար, Հերցանկիս գիւղ (Գանձակ), 1683 թ., 298 թերթ:
26. ՄՄ 4000, Ներսէս Լամբրոնացի, Մատենագրությունք, գրիչ՝ Մելքիսեթ, ստացող՝ Ըղբստակէս, Տաթև, 1641 թ., 439 թերթ:
27. ՄՄ 4001, Ժողովածոյ, գրիչ՝ Եսայի, Կ. Պօլիս, 1720 թ., 121 թերթ:
28. ՄՄ 4002, Բնաբանք քարոզից, 1774 թ., 100 թերթ:
29. ՄՄ 4016, Պետրոս Բերթումեան, Աղբիր բացեալ, գրիչ, ստացող՝ Անտոն Թիֆլիզեցի, Սևան, 1835 թ., 80 թերթ:
30. ՄՄ 4026, Բժշկարան (հայատառ թուրքերեն), ԺԸ դար, 261 թերթ:
31. ՄՄ 4027, Ժողովածոյ, գրիչ՝ Յակոբ քիյ, ստացող՝ Յովաննէս Մեպաստացի, 1757 թ., 638 թերթ:
32. ՄՄ 4028, Կանոնագիրք հայոց, գրիչ՝ Յարութիւն Մարճանեանց, Սևան, 1854-1855 թթ., 146 թերթ:

33. ՄՄ 4029, Ժողովածոյ, գրիչ՝ Մելքոն Կեղեցի (Ա), Մեսրոպ քիյ (Բ), Տաթև, 1719, 1740 թթ., 157 թերթ:
34. ՄՄ 4030, Կոտնելիոս Ալափիտայ, Մեկնութիւն գրոցն Մովսիսի, գրիչ՝ Յովհան Վանանդեցի, Սևան, 1828–1829 թթ., 519 թերթ:
35. ՄՄ 4031, Յակոբ Կարնեցի Սիմոնեան, Մեկնութիւն Երզոց երգոյն, գրիչ՝ Անտոն Թիֆլիզեցի, Սևան, 1833 թ., 216 թերթ:
36. ՄՄ 4034, Ժողովածոյ, գրիչ՝ Պետրոս դպիր, Գրիգոր (Ա), Աւետիս, Աբրահամ դպիր (Բ), ստացող՝ Յակոբ վրդ. (Ա), Սարգիս Սրմակ Կոփցի (Բ), Ամիրդոլոյ վանք, 1669–1670 թթ., 1697 թ., 394 թերթ:
37. ՄՄ 4036, Դեոսկորոս Աղէքսանդրացի, Տիեզերական երկրորդ ժողովն Եփեսոսի, գրիչ՝ Ստեփաննոս սպասաւոր, Կ. Պօլիս, 1793 թ., 176 թերթ:
38. ՄՄ 4039, Յակոբ Նալեան, Քարոզգիրք, գրիչ՝ Յարութիւն դպիր, Կ. Պօլիս (՝), 1758 թ., 446 թերթ:
39. ՄՄ 4040, Ժողովածոյ, ԺԷ դար, 112 թերթ:
40. ՄՄ 4071, Վարդան Արևելցի, Մեկնութիւն սաղմոսաց, գրիչ՝ Սիմէոն (Ա), ԺԴ, ԺՋ դդ., 198 թերթ:
41. ՄՄ 4106, Ժամագիրք, Սաղմոսարան, Տօնացոյց, ստացող՝ Մխիթար եպս., Սևան (՝), ԺԷ դար (1644-ից առաջ), 219 թերթ:
42. ՄՄ 4109, Յովհաննէս Ոսկերեքան և Եփրեմ Ասորի, Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, գրիչ՝ Թումայ քիյ, ստացող՝ Դաւիթ Բաղիշեցի, Բաղէշ, 1660 թ., 354 թերթ:
43. ՄՄ 4276, Աւետարան, գրիչ՝ Եղիա Համթեցի, ծաղկող՝ գրիչը (՝), Կ. Պօլիս, 1646 թ., 329 թերթ:
44. ՄՄ 4411, Ժողովածոյ, գրիչ՝ Սիմէոն բանասեր (Ա), 1406 թ., ԺԷ դար, 1733 թ., 385 թերթ:
45. ՄՄ 5574, Գրիգոր Խլաթեցի, Համառօտ մեկնութիւն արարածոց, գրիչ՝ Պօղոս երէց, ԺԷ դար, 84 թերթ:
46. ՄՄ 5703, Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, գրիչ՝ Սիմէոն Տէր-Յօհաննէսեան, Սևան, 1846 թ., 114 թերթ:
47. ՄՄ 6125, Շարակնոց, գրիչ՝ Մկրտիչ եպս. (Ա), Կրտիչ քիյ (Բ), ստացող՝ Յորդանան վրդ. (Ա), Յովհաննու Օձնեցոյ ուխտ (Ա), 1478, 1695 թթ., 343 թերթ:
48. ՄՄ 6648, Աւետարան, գրիչ՝ Ալէքսանոս արք., Տէր Եգեկիէլ, ծաղկող՝ Սահակ արք. (1504 թ.), ստացող՝ գրիչը, Մաքենացոց վանք, 1496 թ., 266 թերթ:
49. ՄՄ 6958, Ժողովածոյ, գրիչ՝ Յովհաննէս, ստացող՝ Յովագիմ (գրչի որդին), Սբ Ամենափրկիչ, Սևան կղզի, 1738 թ., 272 թերթ:
50. ՄՄ 7554, Պատմութիւն անապատին Սևանայ, գրիչ՝ Մանուէլ Կիմրիշխանեցի, Յովհաննէս Պետրոսեան Եղուկացի (Ա), Յակոբ Սինեցի (Բ), Յովհաննէս Զալալեան (Գ), Սևան, 1830, 1862, 1870 թթ., 133 թերթ:
51. ՄՄ 7654, Յովհաննէս Շիրազեցի Ավդալեանց, Նուագարան, գրիչ՝ հեղինակը, Կալկաթա, 1819 թ., 66 թերթ:
52. ՄՄ 7839, Գանձարան, գրիչ՝ Սարգիս փակակալ, ստացող՝ Դաւիթ քիյ, Տփլիս, 1438 թ., 359 թերթ:
53. ՄՄ 8074, Զաքարիա Գուլասպեան-Բէհրուդեանց, Վէպ ծովակին Գեղամայ և կղզոյն Սևանայ, գրիչ՝ հեղինակը, Սևան, 1825 թ., 21 թերթ:
54. ՄՄ 8147, Վարք և պատմութիւն Մխիթարայ Գօշի, գրիչ՝ Կարապետ Բիւրիւլեանց, Սևան, ԺԹ դար, 10 թերթ:
55. ՄՄ 8253, Աւետարան, գրիչ՝ Տէր Ալէքսան, ծաղկող՝ Վարդան դպիր, ստացող՝ Հոռոմ, Նորաշինիկ գիւղ (Երնջակ), 1669 թ., 329 թերթ:
56. ՄՄ 8409, Աւետարան, գրիչ՝ Վարդան եպս., Ովաննէս արք., ծաղկող՝ Աբրահամ, կազմող՝ Յակոբ (1640 թ.), Աղջոց վանք, 1471 թ., 285 թերթ:
57. ՄՄ 9728, Յովհան Ոսկերեքան, Մեկնութիւն Մատթէի, գրիչ՝ Սիմէոն Տէր-Յովհաննէսեան, Սևան (՝), ԺԹ դար (1835-ից առաջ), 182 թերթ:
58. ՄՄ 10482, Պետրոս արք. Աղամալեան, Քարոզգիրք, գրիչ՝ Գալուստ դպիր Տէր-Պօղոսեան, ստացող՝ Յակով վրդ. Տէօվլէթեան, Կ. Պօլիս, 1841 թ., 308 թերթ:
